2004

206.4 1296-47/473
6

ՔՐԻՍՏՈՍՈՒՍՈՅՑ

Յորում պարունակի բովանդակութիւն գլխաւոր վկայութեանց Աշխարհաստեղծ և երկնային Ծագման Յայտնութիւն Քրիստոնէութիւն։

Զոր յօրինեաց Բիլբի Պորտէոս՝ Հանգուցեալ եպիսկոպոսն Լոնդոնայ. և յԱնգղիական բնագրէն փոխեաց ՝ի Հայ՝

ՊԱՐՈՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՍԴՈՒԱԾԱՆՑ՝

Ընդամ Ասիական Մեծաքանութեան Բռնգալայ, ՚ի։

Տպագրեալ ՝ի գործատան Մարդասիրական Ճեմարանի։

՚Ի Հայրապետութեան Տն Տն Եփրեմայ՝ առաքելաշաւիղ կաթողիկոսին ամ՝ Հայոց։

Առաջին Տիպ։

՚ԻԿԱԼԿԱԹԱ։

1828։

500 Օրինակ։ Տպագրեալ։

28 3567-ԿԴ

Այժմ սկսայ աշակերտ լինել և խօսիմ ընդ ձեզ իբրև Ա ուսումնակիցս իմ։ Ինձ էր պատշաճ ընդունել ի ձէնջ զհաւատս և զհամբերութիւն և զխրատ և զերկայնմտութիւն։ բայց սէրն ոչ թողու զիս լռել վասն ձեր։ ի փութալ ձեզ ի կամս Աստուծոյ։ որպէս և ինքն ցՏ քՏ՝ որ է հշմարիտ կեանքն մեր՝ ի կամս հօր։ Իգնատ։ Ընդդէմ ոտ Եփեսացւոյն։ յԷջ 37։

ՀՍՍՀ-ՍՍՌ Մ. Մաշտոցի անվան Ձեռագրաց ինստիտուտի գրադարան
4997
38

TO THE RIGHT REVEREND FATHER IN GOD,

JOHN THOMAS,

LORD BISHOP OF CALCUTTA,

&c. &c. &c.

My Lord,

The very lamentable state to which Armenia has been reduced, by the subversion of her political structure and the oppression of Moslem despotism, is not only most painful to my feelings, but must also present a subject of deep regret and sympathy to the mind of every Christian philosopher and true philanthropist. Yet it is pleasing to think that there is no calamity, however severe and desperate, that may not admit of relief from some cause or other, though it may be latent and remote. Situated at a considerable distance from the birth-place of our inspired ancestors, where the cessation of Haican power was fol-

lowed by a comparative diminution of the cultivation of Armenian literature, we look with the highest satisfaction at the favourable prospects which Providence has opened to us of maintaining a literary intercourse between Armenia and England, by translations of valuable works from the language of the latter into that of the former.

This hope of the advancement of Armenian literature in the East Indies, is duly encouraged, and the expression of it fully justified, by the philanthropic disposition Your Lordship displays for the promotion of the moral and mental good of my expatriated countrymen. Installed in the government of the Protestant Church in India, your Lordship has most wisely chosen to tread in the steps of your immediate predecessor, the late Bishop Heber, who had the weal of my countrymen deeply at heart, and whose name I cannot mention but with the deepest regret and

veneration. Of the truth of my assertion, I have abundant proof in the generous patronage your Lordship so readily bestowed on the publication of my present translation of "A Summary of the principal Evidences for the Truth and Divine Origin of the Christian Revelation," by Beilby Porteus, D. D. late Lord Bishop of London. Under these impressions, I think it a duty incumbent on me to dedicate the present volume to Your Lordship, as a token of my high esteem and gratitude for your Lordship's Christian and moral virtues, in which I am sure I have the concurring voice of that respectable community of which I have the honor to be a humble member.

I remain,

My Lord,

With due respect and reverence,

Your Lordship's most obedient Servant,

JOHANNES AVDALL.

Calcutta,
17*th of April*, 1828.

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Որչափեան՝ ի միջի աշխարհական բռնաւորայ առաջին ժամանակայ Աղէքսանդրոս՝ ոչոյ վրիպեան՝ ի կենսատու լուսոյ աստուածայնական Հշմարտութեան, գեղեցիկ մոլութեամբ զիմաստասիրութիւնն արար իւրեան գահակից և առաջնորդ։ և ընդ վարդապետութիւն վսեմախոհին Հրահանգեալ Արիստոտէլի՝ այնքան սրտեռանդն տեսանօք յարեցաւ՝ ի սէր մատենից արիական գործոց դիւցազնոց, մինչ զեղեկական գիրս Հոմերոսի համարիլ պատուականագոյն և ամենակատար ծնունդ մարդկեղէն մտայ։ և այս յայտ անտի է՝ զի ոչ միայն զայն գեղեցկահիւս մատեան կոչէր ընթերցագոյն պաղաղ պաղաղմամբ՝ այլ և անդադար զարմացմամբ ընթեռնոյր զայն՝ ի տունջեան։ և իբրև անբաժան սիրահար զսիրեցեալն իւր հանդերձ սուսերաւ իւրով դնէր՝ ի գիշերի ընդ բարձիւ։ և զնոցունց խորհէր և զնոցունց երազէր։ Իսկ արդ՝ եթէ այսքան ցանկալի իցէ մարդոյ Հարատարարուեստ բանահիւսութիւն շահատակուեց քաջայ և առաւել խնամն պատմութիւն դիւց և դիւցազնց, ապա ուրեմն ո՞րքան առաւել պարտի քրիստոնէից ցանկալի լինիլ

երկնային մատեանն հնոյ և նորոյ կտակարանայ ։ որ ոչ է գրեալ բանաստեղծութիւն մարդկեղէն մտայ ։ այլ վերին ազդեցութիւն Հոգւոյն սրբոյ ։ յորում ոչ պատմին կեղծիք փառասէր պատերազմողայ և առասպելք դիցի ։ այլ Աշմարիտ անցք երկնային տնօրէնութեան և յայտնութիւն Հոգեկեցոյց կրօնին Աշմարտին ԱՅ ։ որ ոչ ունի առիւր զնիւթական սուսերս արիւնախանձ ։ այլ կրէ յինքեան զաներևոյթ և զաներևազօր սուրն երկնային ։ զբանն ասեմ ԱՅ ։ որ է իբրև սուր հատու և պաշար ընտրելագոյն և քաջ առաջնորդ ամենայն քրիստոնէից ՝ ի գործս պատերազմի ընդմարտնոյ և ընդ աշխարհի և ընդ սատանայի * ։

Ապաքէն՝ պատուականագոյն իմաստուն և իմաստնագոյն վարդապետի վիճակեցան նախահարքն մեր երանելիք ։ որք ծնեալ յերջանիկ դարս քրիստոնէութեան՝ և սրտի մտօք յարեալ՝ ի սէր ճշմարիտ իմաստութեան՝ քաջագոյն ևն ընտրութիւն զարտաքնոյ մատեանս ստորադաս Համարեցան քան զճշմարտոյն ։ և իբր անսխալ առաջնորդի զապստամբ կիրս և զկամն՝ սրոյ աւետարանին արարեալ հնազանդ՝ ոչ միայն այնմ պատուական

† Է Պետր ։ ա ։ 21 ։ ա Կորնթ ։ Է ։ 4 ։ 5 ։
Է Տիմոթ ։ Գ ։ 16 ։ * Եփես ։ Զ ։ 13 ։ 17 ։

գանձու զերիրտս իւրեանց տուի յօրինեցին ։ այլ և իբրև հաւատարիմ գանձապետք զաւ 'ի յԱՅ գտեալ աւանդն զայն զգուշաւոր երկիւղածութեանխարդախ պահեցին ։ և բազում առաւելութիւնք շահուց և տոկոսեաց մեզ իւրեանց ապագայիցն աւանդեցին ‡։ Բայց սակայն 'ի բազում ամանց հետէ գոլով աղգին մերոյ անկեալ ի քաղաքական յեղափոխութիւնք և վտարեալ 'ի հեռաւոր երկիրս օտարութիւն՝ սակաւուց ոմանց լինի վայելել յարդիւնաբեր աշխատասիրութիւն նախնի Հայկազանց գրագիտաց ։ յաղագս այսորիկ եթէ ոմանք 'ի մէնջ փոյթ տարցին ըստ օրինակի ողջախոհ հարցն մերոց գրաւոր երկասիրութիւնք սատար լինիլ հոգեկան մնդեան իւրեանցայնոցն ։ Թուի ինձ թէ արժանի լիցին քաջալերուն և օգնականութեամենայն ճգասէր Հայկազանց ։

Այլ արդ՝ յորդորեալ իմ յայսպիսի խորհրդածութեէ՝ եդի 'ի մտի իմում սպասաւորկու լինիլ աղգի իմում և 'ի մասին հոգեկան բարեմասնութեէ ։ և թէպէտ 'ի կարգի աշխարհականաց՝ եռանդուն սիրով ցանկացայ ձեռնամուխ լինիլ 'ի թարգմանութի առաջիկայ փոքրիկ գործոյս ։ որ է բովանդակուն գլխաւոր

‡ Մաթ ։ ԺԵ ։ 20 ։ Ղուկ ։ ԺԲ ։ 16 ։

վկայուէց Հշմարտուէ և երկնային ծագման քրիս-
տոնէական յայտնուէ. յայն սակս պատշաճաւոր
յորջորջմամբ կոչէցի զսա Քրիստոսասէր. ի-
է՝ ուսուցիչ վարդապետուէն Քրիստի և գլխաւոր
վկայութէց կրօնին քրիստոնէութէ։ Հեղինակ
գործոյս է ածաբան վարդապետն Բիլբի Պոր-
տէոս՝ հանգուցեալ եպիսկոպոսն Լոնդոնայ։ Ի
յառաջաբանութէ հեղինակին յայտ է զի զգիրս
զայս յօրինեալ է ի պէտս նորահաս համբակայ.
և առ ի դիւրընկալ հրահանգուն ընթերցողաց
բաժանեալ է զայն յերկոտասան խնդիրս կամ
ի հատուածս՝ հանդէրձ հարկաւոր ինչ վկայ-
ութիւք. յորս և ես պատշաճ համարեցայ յա-
ւելուլ զքանի մի ծանօթութիւնս քաղելս ի
պէտպէս նախապատիւ հեղինակաց։

Արդարև՝ զպատուականութէ այսր փոքրիկ
գործոյ քաջ ծանեան Անգղիացիք՝ յորոց լեզու
բնագիրն զառաջինն տպագրեցաւ. քանզի ար-
դեամբք զիորձ առեալ պիտանութէ նորին՝ յընթացս
սուղ ինչ ժամանակի մեռաւան տպագրութիւք զայն
հետ զհետէ ի լոյս ընծայեցին յօգուտ ազգային
մանկտւոյ։ Արդ՝ ոչ գիտնական և ածասէր հե-
ղինակին նոյնպէս և խոնարհամիտ թարգմանչիս
մի է նպատակ և վախճան յայտնի աշխատասի-
րութէ. քանզի որպէս զնա օգուտ իւրական ազգի

համբակայն՝ այնպէս և զիս սէր հոգեկան բարե-
մասնուէց Հայեցի մանկտոյ յորդորեաց՝ ի լոյս
ընծայել զայս պիտանի մատեան. յոքսի և եթէ
զարգացեալքն՝ ի տես՝ որք՝ ի յեղափոխութենէ
բազդի վտաքեալ իսկն՝ ի երկիրս այլազգեաց՝
քաղցկեն զկտուրս հոգեկան օգտի, ուրեմն աշ-
խատանք իմ եղիցին կրկնապատկ յաջողուածով
արդիւնաւորեալ։ Հուսկ ամենայնի, յորդո-
ր եմ զձեզ սիրոյ՝ բարեմիտ Հայեցի մանկտի՝
քննել միշտ զսուրբ գիրս խնդարհ և երկիւ-
ղած հոգւով ☰ օրինակի Տիմոթէոսի †, զի ☰
Տն բանի լիցի ձեզ ոմիալ զկեանս յաւիտենա-
կան ‡. բարի նախանձու պարապեցէք զօրհնա-
պազ յուսումն երկնային գիտութեան, զի մի՝ ի
ժամ ելանելոյ ձեր յայսմիկ հոլտէ թշուառութեան
յոգւոյ հանիցէք նման Ուտիկեսյոյն Կատոնի վա-
սն դատարկ անցուցանելոյ զօր մի առանց
ուսանելոյ զբան ինչ նոր։ Իսկ եթէ ածսիրուբ
պարապողայն՝ ի դուշնաքաց վատակս մեր լի-
ցի քաղել զբարի պտուղս յընթերցմանէ գործոյ
աստի, բարեմասնութիւն հոգւոյ նոցա եղիցի
մեզ հաճելի և բաւական պարգև մեր աշ-
խատասիրութեան։

† Է Տիմ. Գ. 15։ ‡ Յովհ. Ե. 39։

ՔՐԻՍՏՈՍՈՒՍՈՅՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գլխաւոր Վկայութիւնից

Ճշմարտութիւն և երկնային Ծագման Յայտնութիւն Քրիստոնէութեան։

Յայտնի փաքրիկ մատենի կամ է ինձ առաջի առնել համբակաց զքանի մի խնդիրս ճշմարտութեան. և ապա որոշակի ցուցանել զՃշմարտութիւն իւրաքանչիւրոց։

Ա։ Նկատելով զառաջին ժամանակս հեթանոսական մոլորութեց, յառաջ քան զերևիլ Տն մերոյ ի վերայ աշխարհի՝ յայտնապէս տեսանեմք զի կարի հարկաւոր էր յայտնել աղգի մարդկան զանհասանելի կամս Աստուծոյ. և յայս սակս ամենեքեան կալծէին յառաջագոյն զի երկնաւորն հաճեսցի յայտնել ժողովրդեան իւրում զանհուն տնօրէնութիւնս իւր։

Բ։ Յայնմ ժամանակի՝ յորում ամենեքեան յուսալով ակնուն էին զի Ճշմարտիկ անձն ոք

երևելոյն յաշխարհի՝ Յիսուս Քրիստոս մերոնակ մարմնով և բնութեամբ տիրապէս երևելոյա յաշխարհի, և ասէր զանձնէ իւրմէ լինել որդի Աստուծոյ. որ առաքեալ զինքն ի վերուստ առ՝ի ուսուցանել աղգի մարդկան զվարդապետութիւնս կրօնին Աշխարհութեան. զմին իրի և նա սկզբնաւորեալ հաստատեալ զկրօն մի սուրբ, որ յանուանէ նորա կոչեցեալ կրօն քրիստոնէութեան. զոր և անհամար բազմութիւնք մարդկան ընդգրկեալ դասանեցան և դասանին ի ժամանակէ սկզբնաւորութեան նորա մինչև յայս օր։

Է։ Զգիրս նորոյ կտակարանայ գրեցին աստուածիկ անձինք՝ որոյ գրութիւնք աւետարանայն ընծային. յորս պարունակի հարազատ պատմութիւն Քրիստոսի և սրբոյ կրօնի նորին. և բանք աւետարանացն զորս գրեցին զՔրիստոսի և զվարդապետութեան նորին՝ են միանգամայն հարազատ և Աշխարհիս։

Ը։ Սրբազան գիրք հնոյ կտակարանայ՝ որք կոչիցին նորոյ կտակարանայ՝ են տիրապէս գրուածք նոցա, որոյ անուանն յիշատակին՝ ի ոտին. հին կտակարանքն պարունակեն զորատմութիւնս անօրինութեան և օրինայն Մովսէսի և զյիշատակս Աշխարհիս դիսրուածոյ, երկնային պատգամայ, բարոյական խրատուց և ճշմարտատամ մարգարէութեանց։

Է։ Նկարագիր հանգամանային Քի՛ որ բայց-
յայտ երևի՝ ի գրուածս սրբազան աւետարան-
չայ՝ հզօրեղ Հշմարտութիւնք շարժէ զսիրտս մարդ-
կան առ՝ ի հաւատալ զի նա էր անձն մի սուրբ
և աստային։

Ը։ Վսեմութիւն վարդապետութեանց նորա
և մաքրութիւն բարոյական խրատուց նորա հաս-
տատեն զայս հաւատս անդրդուելի Հշմարտութիւնք։

Թ։ Յառաջին ժամանակս ասարեալ քարո-
զիչք աւետարանին սիրեալ տարածեցին զբանն
կենաց զարմանալի երադութեամբ ընդ լայնատա-
ռած մասունս աշխարհի. և այս յայտնապէս ցու-
ցանէ զի լցեալ էին նոքա հոգւովն սրբով՝ և
քարոզութիւնս առնէին ասային շնորհօք։

Ժ։ Բաղդատութիւն իմն՝ ի մէջ Քի՛ և Մահ-
մեդի՝ և՝ ի մէջ վարդապետութեանց երկպան-
չիւրոց՝ տայ մեզ հաւատալ զի կրօն վերջնոյն
էր անտարակոյս հնարեալ՝ ի մարդոյ՝ և կրօն
առաջնոյն ծագեալ էր յերկնաւորէն։

Ժա։ Ի գուշակութեանց ասացելոց՝ ի մարգա-
րէից յառաջնոյ՝ որք կատարեցան յանձն Փրկ-
չին մերոյ՝ յայտնապէս երևի զի նա էր Մեսիան՝
որում ակնկալեալ սպասէին հրեայք. և զի նա
եկն յաշխարհ երկնային անօրէնութիւն՝ առ՝ ի
լինել փրկիչ և ազատիչ ազգի մարդկան։

Ե։ Գուշակութիւնքն առանց եալք՝ ի Փրկչէն մերոյ, յայտնապէս ցուցանեն զի ըստ եալ էր նա շնորհօք նախանամութեան ապառնոյ, գիպլուածոց, որ պատկանի միայն ԱՅ և որոյ լցեալ եղեն հոգւոքն սրբոք։

Զ։ Հրաշագործութիւնքն ՅՆ մերոյ ցուցանեն զնա գոլ ընդունակ երկնային զօրութեանց։

Է։ Յարութիւն ՅՆ մերոյ՝ ի մահուանէ կատարեալապէս Աստուծոյ յայտնագոյն վկայութեամբք։ և է կնիք և հաստատութիւն ասծութեան նորա և Աստուածութիւն։

Զայսոսիկ ընդդիմս ուրոյն ուրոյն ունիմ հաստատեալ յայս գիրս վկայութիւք։ և եթէ որքա պարզապէս ապացուցութեամբ հաստատեսցին, ոչ մնասցէ ուրեմն տարակոյս ինչ՝ ի սիրտս Աստուածատուէր մարդկան, թէ կրօնն Քրիստոսի է Աստուածապէս ծագեալ։ ԱՄԷՆ։

ԽՆԴԻՐ Ա։

Նիկոմեդիոյ պատերազմի ժամանակս հինգհազարեան մարդուն մը, որ դեռ ի վերոյ ալիսրեն, յոյժ ուրախ պատուեմ զի կարէ հարցուած էր յայտնել ապէր մարդկան զանհաւատներէն համա Աստուծոյ։ Ու յոյն ուրս ամենեցեան կարծէին յատուկ զի երկնաւոր հաճելոյ յայտնել ժողովրդեան երբեմն զանհաւան գնացիներեան երբ։

Տեղեակքն և հմուտքն պատմեն նախնեաց գիտուն բարուք զի չէր ինչ առաւել հատատուն և յայտնի քան զայս։ Երբ զի՝ բազում ժամանակօք յառաջ քան զերևիլ Փրկչին մերոյ ի վերայ երկրի, և՝ ի ժամանակին յայնմիկ յորժամ երևեալ-յաւնա իսկապէս, բովանդակ ազգք հեթանոսաց և ամենայն ազգինք քաղաքավարք և լուսաւորք և գիտունք՝ բայց յոմանց սակաւուց, ընկղմեալ էին՝ ի խորս ողբալի տգիտութեան։ որով հեռացեալ գտանէին՝ ի գիտութենէ Այ և սուրբ օրինաց նորա։ Թարթափէին նոքա՝ ի խաւարի անծնարին աւելորդապաշտութեան և կուռամոլութիւն։ և էին բարուք գարշելի և զեղծ և ապականեալ։ Ո՛չ ճշմարիտ էուն Այ ճանաչէին, և ոչ զատրար

զելիս և զկատարելութիւնն գիտէին. հեռի էին նոքա յերկնային և յաստուածային պաշտամանէ. և ոչ կատարէին զբարոյական պարտականութիւն, զոր պահանջէր Աստուծոյ իրոց. և ոչ այսչափ միայն՝ այլ և ոչ կարէին անաղօտ և հաստատուն հաւատով Հանապազ զանմահութիւն հոգւոյ և զլիակատարութեանց և տանջանաց՝ ի հանդերձեալ կեանսն։

Կարծէին նք թէ ՝ն է առաջնորդութիւն անհամար բազմութիւն աստուածոց և աստուածուհեաց. որոց ընծայէին զչարաչար կիրս և զմոլութիւնս տգիտանարար բնութեան մարդկան։ Պաշտէին նոքա զարս և զկանայս մեռեալս, զթռչունս և զգազանս և զժամիս և զսողունս (յատկապէս զօձն զամենագարշ և զատելին՝ ի միջի սողնոց) միանգամայն և զանհամար բազմութիւնս կռոց, զորս դրօշեալ էին ձեռք նոցա յազգի ազգի նիւթոց. այսինքն՝ յոսկւոյ և յարծաթոյ և՝ ի փայտից և՝ ի քարանց։ Գործք նց լի էին չարութիւ և ամբարշտութեամբք. և ծառայէին սրտիւք նողկալի և ամենագարշ մոլութեաց. աղարտութիւնք կրօնի և գործք պաշտամանց նոցա կցորդ էին մեծագոյն մարմնասիրութիւն և հեշտասիրութեանց։ Առաջնորդք կրօնի նոցա յուզեալք՝ ի գաղանային անգթութեանց՝ կոյր

աւելորդապաշտութեամբ նուիրեին զմարդկեղէն զոհս ամենապիղծ կռոց իւրեանց։

Ըստ ամ մասանց կարի Հշմարտութ նկատադրուին նախնի հեթանոսաց՝ առանձեալ մեզ ի սնոյն Պօղոսէ յառաջին գլուխ Թղթոյ իւրոյ առ Հռովմայեցիսն։ Եւ որպէս զի ոչ ընդդէմ ինքեանց ասիցեն՝ թէ գիտուէ, մոռանիցս զնա՝ թէ միտս առնուցուսցէ՝ զորս ասիցեն զանազանս։ զլեզուսն ամ անիրաւուէ՝ զոռանիւսէ՝ զանգմանուէ՝ զագահուէ՝ զարուէ՝ զի նախանձու՝ զսպանուէ՝ հերուէ՝ նենգուէ՝ զարբեցութիւնքեամբ՝ զրգմոգի՝ զարբեսի՝ ճանաչիցի՝ ընչամանաց՝ ամբարտաւանի՝ ամբարհուամտի՝ գրգիռ զարիւն՝ զչնորհս անարգուսցուս՝ անմիտս՝ ուխտադրուժս՝ անողորմս՝ անուանիս՝ անողորմ։

Այս բան ճշմարտեալ առաքելոն ոչ միայն յուցանէ զամբարշտուին հեթանոսայն առաջնոյ՝ այլ և զհարազատ և զիսկական պատկեր վարուց մարդկան եղելոց յառաջին դարս աշխարհին կռամոլութեանց։ Հշմարտութ առաքելական բանիս վկայ են և մատենագիրք նոցին իսկ հեթանոսաց։ Եթէ այսպէս խուժադուժ էին վարք ժողովրդոյ հռչակաւոր եղելոց յիւրս քաղաքականութեան և յուսմունս ազատական արուեստից և գիտութանց՝ ո՞րպէս ուրեմն էին վարք գաղանամիտ ազանց՝ որք ընկղմեալ էին ի մոլութիւն

վասագոյնս քան զիւրեանց ժամանակակից աղգաց։

Իրաւ է զի կայրն յամ վալեմի աղգս՝ ոչ յառաջին Հելլենս և Հռոմայեցիս՝ որք ոմանք գիտնականք և իմաստասէրք. որք բարեբաւուքք գեղագոյն հանդիսացան քան զհասարակ անձինս. որքա քաջահմուտ էին սկզբանց բարոյականուն և կրօնի. և ըստ իմիք անարատ ոգեկոչեցին զանձինս իւրեանց յայսականութեանց անտի որ յայնոսիկ ժամանակս կալեալ կապէր զերիտասարդս և զմիտս ամենեցուն։ Բայց սակայն կարի սակաւք էին որքա առանձնաւոր բազմութեանց աղգի մարդկան. և քանք խրատուց նոցա մանաւանայն անբաւականն էին առ ի բարեգործել զհամազգիս իւրեանց՝ պարանոցաթաղ խրեալս յայտս չարաչար մոլութեանց։ Նոքին իսկ ընդաղօտ ծանօթութիւն գիտէին զէութիւն և զստորոգելիս Աստուծոյ. սակաւ իմանային զանճառնոյ պաշտամունս, զհարկս և զպարտիս բարոյականութեան, զեղանակ նախախնամելոյ Աստուծոյ զաշխարհս, զդիտումն նորա՝ ի ստեղծանել իւր զմարդ, զնախնական գեղակայութիւն մարդկային բնութեան, և զողբալի վիճակ վատթարութեան և ապականութեան՝ յոր յետոյ հասոյց զնա նախանձաբեկ հնարագիտութիւնն։ Ասնաւոր օձին. անմարթ էր նոցա գիտել իսկապէս թէ հարկ էր Աստուծոյ ընդունել միջնորդ լինել

վրկութեան և վերանորոգութեան ազգի մարդկան. տարակոյս մեծ էր առ նոսա թէ արդ՝ Հանապարհաւ հնար էր մարդկան հաշտեցուցանել ընդ ինքեանց զաստուածայեալ Աստուծոյ բարեանց, և թէ յարմիսի փառաւոր կեանս հանդերձեալ էր Ամ առաջնորդելոցս՝ ի վերջոյ։ Միեաք նոցա կայր՝ ի հանապազորդ վարանս յաղագս վերոյասացեալ մեծ և կարեւոր վարդապետութեանց. այսինքն՝ յաղագս անմահութեան հոգւոյ, Հշմարտութեան հանդերձեալ կենաց և ապառնի երանութեանց և տանջանաց. քանզի նոքա առաւել եռանդեամբ յուսոյ ցանկային հասանել նոցա՝ քան թէ հաստատուն յուսով ակնուսէին և հաւատային զնոսա։ Բայց սակայն զոր միանգամ գիտէին յաղագս վերին նախախնամութեան և երկնային Հշմարտութեան, զայնս ոչ կամէին և կամ ոչ կարէին մեկին բայայայտել հաւատակ ժողովրդոյ երկրի երեսանց։ Բանք նոցա զուրկ էին յօրինաւոր վկայութեանց. յայն սակս ոչ կարէին արմատացուցանել՝ ի միտս լսողաց զկարատս առաքինութեանս և ճշմարտութեան. Շարժառիթք վարդապետութեանց նոցա ոչ էին ըստ բաւականին ազգու, առ՝ ի նուաստել զշարխարհայն հրապոյրս և զյօժարութիւն ապականարար մարդկային հոգւոյ. օրինակ վարուցնոցա

փոխանակ հեշտանքեալ ընծայելոյ զխրատս նոցա, դժուարընտրել յուսանելոյ զայս ամենայնս. քանզի գործ նոցա ընդ հանրապէտս տարբեր էին յոյժ ի վարդապետութենէ նոցա։ և զարշելի մոլութիւն՝ որոյ ծառայէին բազումք՝ ի նոցանէ միանգամայն՝ ի դերև հանէին զազգութիւն վարդապետութեանց նոցա։

՝Ի վերջ քան զամ թափուր էին նք յայնոցիկ ահաւոր օրինադրութեանց կրօնի՝ որք հզօրագոյն արգելք են դժնդակ կրից և մոլութեանց մարդկան, և հաստատուն հիմունք ուծահաճոյ առաքինութեանց. զերանութիւնս ասեմ և լզոտութիւս հանդերձեալ կենաց՝ որ է մի՝ ի գերազոյն և ի կարևոր անօրինութեանց քրիստոնէական կրօնին։

Սին իրի յայանապէս երևի զի հ՛երկ և պատշաճ էր ՍՅ մերունակ բնութիւն դիմել՝ ի վրկութիւն արարածոց իւրոց, և հանել զմարդիկ յանդնդոց անգիտութեանէ և աւերմոպատշաճութեանէ և կռամոլութեանէ և ամբարշտութեանէ և թշուառութեանէ, յորս ընկղմեալ էին նք ընդ հանրապէս. առ՝ ի ուսուցանել նոցա զպատշաճաւոր և զհաճոյական եղանակ ուծապատշաճութեանէ, և զուծընկալ քաւութիւն վասն մեղայ մարդկան. առ՝ ի հաստատել զմիտս նոցա՝ ի հաւատս հանդերձեալ կենաց և ապագայ

պատասխանի. առ՝ ի առնել զԽաչին վարդապետութիւն կրօնի հեշտալնկալ և փիւրմիտնելի եմ՝ մնայ. առ՝ ի հաստատել զոտարզիմայ խրատս երկնային Հշմարտութեամբ և ընդհանել մարդկան զզարմանալի և զգերբնական կարողութիւնս. զի կարող լիցին նուաճել զապականարար կիրս բնութեան իւրեանց։ Յայտնի է մեզ ամենեցուն, զի Աստ ըստ անհուն բարերարութեան և գթութեան և մարդասիրութեան իւրում՝ հանդերձեալ էր՝ ի Թիկունս հասանել ստեղծուածոց իւրոց, և լուսաւորել զմիտս նոցա լուսատու բանիւք սրբոյ աւետարանին. սակայն իբրև և արժան էր ազգի մարդկան ակնունել հասանել փրկութիւն՝ ի ձեռն երկնային ընտրեալ. որպէս և իմաստասէրք նախնի հեթանոսաց բնական լուսով հանճարոյ իւրեանց յուսային զի ընտրեալ ճշմարտային յայտնութեան ընդհանուր ազգի մարդկան։

Զի՞նչ և զի՞նչ յոյս՝ ասէ Սոկրատէս՝ առ՝ ի ածել՝ ի լաւութիւն զԼեղապիւր բարս մարդկան այսուհետև, եթէ ոչ երկնայինն Աստ հաճեսցի յղել առ ձեզ զայլանձն ոք առ՝ ի ուսուցանել ձեզ զկամս նորին։ *

Նա՛ ասանիկ և Պղատոն զուգաձայն վարդապետէ ասելով՝ թէ եմ՝ կանոնք օրինաւորք՝

* Պղատոն՝ ի պաղդպանութեան Սոկրատայ։

որով պարտ է սանձել զչիրս մարդկան յայտնի ապականեալ վիճակի Ցի՝ յառաջ եկեսցեն՝ ի յատակական միմնորդութենէ Այ միայն։ † Արիկերոն իմաստասիրէ զաճային յայտնութենէ ի Նոյան օրինակի։ և Պորփիր արմատացեալն յանհնարին աներևութութիւն առ կրօնն քրիստոնէութեան, ասէ թէ պիտոյ է փիլիսոփայն եղծանելն ապա-տե՛ն ընդհանուր հոգւոյ մարդկան, զոր ոչինչ ապանդ իմասաստ-ութե՛ն կարող եղբէ իմանալ՝ ի վերս հանելս։ ‡

Աւերոյն բանք մեծանուն իմաստասիրացս առաջին Ժամանակաց միանգամայն՝ ի դերև հանեն և անգոր առնեն զձեռնարկութիւն արդի անհաւատից մերոց։ որք ասեն թէ հանճար մարդկային լիովին բաւական է ուսուցանել մարդոյ զիւրն պատշաճի, և տալ նմա կատարել զայն ըստ պատշաճի։ յայս սակս մարդիկ միանգամայն անկարօտ էին աճային յայտնութենէ։ Զայլազիսիս սոփէր են անհաւատք ասել և շինութեալ սոքօք զվիտս դիւրահաւատ անձանց։ Արդարև ինապաշտք և թշնամիք քրիստոնէութեան բարիոք գիտեն զէութիւն և զստորոգելին գերազոյն էակին՝ զպաշտօնն պատշաճաւոր նմին՝ զօրինս բարոյական պարտականութեան և զհնամարտութիւն

† Պղատոն յաղագս հոգւոյ թղթոյն։

‡ Օգոստինոս յաղագս քաղաքին Այ՝ գիրք Ը՝ գլ. 32։

հանդերձեալ երանութեանց և տանջանաց։ Բայց աղէ՛ ասա՛, յումմի՞ ուսան նոքա զայս գիտութի։ Ոչ եթէ յազգարարութեանց անբաւական բանականութեան իւրեանց, այլ՝ (ըստ որում իմաստասէրն Ռոյսէոս † ինքնին խոստովան լինի) յայնոսիկ ՝ճաշակունչ սուրբ գրոց՝ զորս պախարակեալ արհամարհեն՝ ի կանխահաս ներդործութեց հոգեշահ ուսմանց՝ ի բնակելոյ և՝ ի կենցաղավարելոյ յաշխարհ քրիստոնէից։ ուրանսը ՝ճաարեալ վարդապետք քարոզեն՝ ի հրապարակի զօրէնս քրիստոնէութեան։ և անկեալքն՝ ի վիհս բնապաշտական մոլորութեան քաղեն յանգիտս՝ ի քարոզութենէ անտի զայնպիսի գիտութիւն՝ զոր սրբազան մատեանք ամենայն ուրէք տարածեալ հաղորդեն հոգւոյ հաւատացելոյ և ներշնչեալ սրբոյ աւետարանին։ Բայց սակայն վրիպեալքն և պակասեալքն յօգտից սրբազան մատենից՝ որք զոչինչ բայց միայն զբանականութիւնն ունէին ինքեանց առաջնորդ՝ և առաւել բարուք գիտէին թէ որքան ձգտին զօրութիւնք լոկոյ բանականութեան՝ քան թէ արդի անհաւատք կարեն գիտել (որոց միտք չէին երբէք և ոչ ևս եղիցին՝ ի նոին կարգի անհաւատութեան) այսո-

† Հատ. Ա. էջ 71. տպեալ յամի 1764։

քիկ՝ ի բնական ծանօթութենէ միօրինակ ասէին, թէ լոկ զօրութիւն լուսոյ բնութեան ոչ էր բաւական առաջնորդել մարդկան՝ ի Ճանապարհն երջանկութեան և առաքինութեան. և թէ՝ երկնային յայտնութիւնն Ճշմարտութեան էր միայնակ Ճշմարիտ և հաստատուն առաջնորդ մարդկան յանսայթաք գնայս ստուգի կենցաղոյս ‡։ Ի նախագրեալ խորհրդածութեանց դիւրին է ամենայն ումք՝ ի բայ փարատել՝ ի մտայ իւրոյ զամենայն տարակոյս և զնախապաշարմունս յաղագս Ճշմարտութեան ճշմարտին յայտնութեան. և պարտ է ամենեցուն ջանալ յառաջագոյն կազմ՝ունել զմիտս իւրեանց՝ ի ծանօթութիւս ճշմարտին պատգամաց. և ընդունել զբանս սրբոյ առետարանին աներկբայ և անպղտոր հաւատով։ յորժամ անդրդուելի վկայութեամբ քարոզեսցին նոքա՝ ի լսելիս իւրեանց. վասն զի խորհելոյ զհոգևոր կարօտութիւնս մարդոյ և զնորհս ողորմութեան Աստ՝ ամենայն ոք յայտնապէս իմասցի զի ճշմարտին յայտնութիւնն՝ ի դիտամ՝ ի դիտամ ժամանակի պարտ էր լուսաւորել զմիտս ազգի մարդկան և փրկութիւն շնորհել հոգւոյ նոցին։

‡ Պղատոն առ Փիդոնիոս, որում ընծայեաց զիւր գիրս յաղագս անմահութեան հոգւոյ։

ԽՆԴԻՐ Բ։

Յոյնք ժամանակէ յորոմանց դէպանց յուսալով ակնառնէին զի ընչխորհիլ ոնչն ոչ երեւեցոյ յաշխարհի՝ Յ՚ Քրիստոսէ մարմնով և քնոնէ տիրապէս երեւեցաւ յաշխարհի։ և ասէր զոնչնէ երբէք լինել որդի Աստուծոյ։ որ ասողքոց զինեալն ի վերուստ ասի՝ ի աստուցանել ապէի մարդկանն զլսարդապետութիւն երկնին ճշմարտութիւնէ։ դին երբ և նա անչքնաւորքեալ հաստատեաց զերկնի մի ասելն։ որ յանուանէ նորա հոգեցաւ երկնի փրկանութիւնէ։ զոր և անհամար բազմութիւն մարդկանն ընդգրկեալ դասանէցան և դասանէն ի ժամանակէ անչքնաւորութիւնէ նորա մինչև յայս օր։

Կարի հարկաւոր է առաջի առնել զայս խնդիր երբև զհիմն ճշմարտութեամ հետագայ ձեռնարկութեան։ բայց սակայն Հնամարտութիւն այսր խնդրոյ այնքան ընդհանրապէս ճանաչեալ է ամենեցուն, մինչ զի սակաւս ունիմք ճառել՝ ի հաստատուն նորին։

Յայտնի է ամենեցուն յաճախագոյն սքանչելագրոյց և յարտաքնագոյ մատենից, թէ՝ ի ժամանակի ծնընդեան Փրկչին մերոյ, ազգք արևելեայք ակնկալեալ յուսային զի ընչաշխարհիկ անձն ոք երևեսցի՝ ի սահմանս Հրէաստանի։ Պատմէ մեզ սքանչելագրոյն Մատթէոս, թէ՝ ի ծնանիլ Յի՝ ի Բեթղեհեմ

Հրէաստանի, ահա մոգք եկին յարևելից (որք անտարակոյս էին արք ազնիւք և իմաստունք յերկրին Իւրեանց) և ասեն ոմանք է՝ որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղ* նորա յարևելս և եկաք երկիր պագանել նմա։ Ի հաստատութիւն աւետարանական քանիս՝ Սուրոնիոս և Տակիտոս՝ վկայասանք Հռոմայ պատմեն, թէ՝ ի ժամանակին յայնմիկ վաղեմի և

* Զի երբ՝ է վերոյ հաստատեաս հասանիցեմ, զինչ ասողն էջն կամ որպիսի ոգ, երբ մի՝ է քաղցոց էջն՝ կամ թէ օտար յայլոցն, ե՞ երբ տրդարեա ասող էջն՝ կամ թէ հերդարանօք ե՞ երբ ասող, դիւրագոյն ե՞ զայլն ե՞ ամ իմանայցեմ։ Եւ արդ ասողի՞ զինչ էր այս յայտ, քայց թէ անդարին՝ է գրելոյն. զի ոչ մի՝ է քաղցոց էր ասողն. մանաւանդ զի ոչ ասող էակ, որպէս ինչ թաւ, այլ ըստ-թէ էն անբանայն յայն հերդարանս երևեալ։ Նոյն՝ է գնացէն էակ յայտ է. զի ոչ է ե՞ չէ էակ ասող ոչնչէս գնալ և առաջնորդել զանանարդին։ Այլ թէպէտ և զարբգիանք ասիցես, կամ զլուանոյ, կամ զայլոցն ամ ասելոց, յարևելից յարևմտաս երևան հասանին։ Իսկ նա՝ է հնասոյ՝ է հարաւակոյն էոյս գնայր, տանզի պարզարանոցաց զլարին՝ է հարաւոյ կուսէ պարսից։ Ոչ էր էրան յանդարանագիրն Մարիէս. Ճառ Ը, երես 82։

հաստատուն կարծիք ի մեն կալեալ ունէր զմիտս համարէն արևելեայց, զի մնցի ՝ի Հրէաստանի անձն մի՝ որ յինքն գրաւեսցէ զտիրապետութիւն ընդհանուր աշխարհի։

Յայսմիկ ժամանակի՝ յաւուրս կայսերուն Օգոստոսի ինքնակալին Հռովմայ՝ անձն մի անուանեալ Յս Քս՝ իսկապէս մնաց՝ ի Հրէաստանի։ ասէր նա զանձնէ իւրմէ եկեալ յերկնից առ՝ ի ուսուցանել աղքի մարդկան զկրօն Աշխարհաւէ։ և բանից վարդապետութեան նորա գտան բազում հետևողք։ այս ոչ միայն՝ ի սրբազան մատենագրաց՝ այլ և յարտաքին պատմչաց վկայութիւն հաստատի։ Յիշատակեն սոքա զանուն Քի։ և ասեն թէ ունէր նա զբազմաւ աշակերտաց՝ որք յանուանէ վարդապետին իւրեանց քրիստոնեայք անուանեցան։ Նոքին իսկ Հրէայք՝ ոխերիմ թշնամիք կրօնին մերոյ՝ խոստովանին զՀշմարտութիւն այսոցիկ դիպուածոց։ և ոչ որ յարտաքին իմաստասիրաց առաջնոց՝ որք նեղհակս խօսեցան և տողեցին ընդդէմ քրիստոնէութեան՝ համարձակեցաւ երբէք՝ ի հարց և՝ ի փորձ արկանել զՀշմարտութիւն մարդեղութեան Յն մերոյ Յս Քի։ Սմին իրի և այսոքիկ դիպուածք այնպէս Հշմարիտ են և հաստատուն՝ որպէս նոքին իսկ մատեանք սրբազանք և պատմութիւնք արտաք-

17997
38

ԱԲԵ. ԱՌԼՈՅՍ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԶՆՈՒՆՔՈՎ
ՀՈՎՀ-ՀՕՐԱ.

նոյ։ նաև զուգաձայն վկայութիւնք հաստատ-
ուելոյ և թշնամեայ աւետարանին հաստատեն ի
վերայ անդրդուելի հիմանց զՀաշտարտեաց նորին։

ԽՆԴԻՐ Գ։

Զգիրս նորոց կանոնարանաց գրեցին այնոքիսի
անՀին՝ որոց գրոցի աւետարանացն ընծային. յորս
պարունակէր հարեալս պարմանքի Քրիստոսի որոց
նորին. և բանք աւետարանացն՝ զորս գրեցին զՔրիս-
տոսն և զվարդապետութեանց նորին՝ են մեռեալքն
հարեալս և ճշմարիտ։

Մատեանքն՝ որք պարունակեն զպատմութիւն
Քրիստոսի և քրիստոնէական կրօնին՝ են չորս աւե-
տարանքն և գործքն առաքելոյ։ Զի՞նչ ինչ տեղի
տարակուսանաց ի զչորեսին աւետարանն գրե-
ցին նոքա՝ որոց անուանքն յիշատակեալ կան՝ ի
նոսին. այսինքն՝ Մատթէոս, Մարկոս, Ղու-
կաս և Յովհաննէս. բայց որում՞ ոչ ոք տարա-
կուսի զի պատմութիւնքն՝ յորս յիշատակին անու-
անք Քրիստոսի, Լիվիոսի և Տակիտոսի՝

գրեցան՝ ի նոյնմանէ իսկ հեղինակաց։ †

Ի ժամանակէ անտի առաքելոցն սրբոց մինչև յառուրս մեր ծաղկեցան յՀռոմ պէտք քրիստոնեայ մատենագիրք, որք զգուշաւոր ուղղութիւն քաղեցին զբազում հաստատանս՝ ի սրբոց աւետա-

† Julianus vero aperte etiam fatetur, Petri, Pauli, Matthaei, Marci, Lucae esse ea, quae Christiani legunt iisdem nominibus inscripta. Homeri aut Virgilii esse, quae eorum dicuntur, nemo sanus dubitat; ob perpetuum de hoc Latinorum, de illo Graecorum testimonium: quanto magis de horum librorum auctoribus standum est testimonio prope omnium, quotquot per orbem sunt, gentium! *Grotius de Veritate Relig. Christ. Lib.* III. *p.* 155.

Եւ ի Յուլիանոս իսկ պարզապէս խոստովանի, թէ Պետրոս, Պօղոս, Մատթէոս, Մարկոս և Ղուկաս գրեցին զայնոսիկ մատեանսն՝ զորս դրիստոնեայք ընթերանուն մատագրեալ անուանեցեալս։ Այլ ոչ ի զբաղմատոց պարզոսն, թէ Հոմերոսն և Վիրգիլիոսն են գրեանքն այնոքիկ՝ որ, անուանեցեալս ընծային, որպէս յաճախ վկայութիւն գոյ զսոսին ասս Հելլենն և զսոսին Լատինն։ ապա սրբոցն ասասել հաստատեալ ճշմարտութիւն հեղինակաց այնոցիկ մատեանց վկայութիւն գոգցեն համօրէն ազգաց յաւրուս աշխարհի քանիցեալց։ Գրոտիոս յաղագս ճշմարտութեան կրօնին դրիստոնեութեան, գիրք 3 · էջ · 155։

բանայ իբրև զվկայութիւնս բանիկ իւրեանց. և յառաջին դարս քրիստոնէութեան արք ՅԾԱՓԱՆՔ յիշատակեն զանուանս աւետարանչաց՝ ի մատեանս իւրեանց իբրև զՏեղինակս նոցին իսկ սրբոց աւետարանաց. զի՞նչ գերագոյն կամ առաւել արժանահաւատ վկայութիւն կարեմք բերել վասն հաստատութեան այլոց վաղեմի պատմչաց։ †

Յաւուրց սրբոց առաքելոց ամենայն քրիստոնեայ ազգք միաբան համարեցան և համարին զսուրբ զաւետարանս իբրև զՀշմարիտ պատմութիւն սրբոց և ՅԾԱՅԻ կրօնին իւրեանց. սմին իբրև ամենեցուն պարտ է համաձայն լինել մնայ ՅԾԱՐԵԱԼՆԱԽԱՐՑ, և համարել զգիրս աւետարանչաց իբրև զոսկեղէն մատեանս հաւատոյն քրիստոնէութեան. ըստ որում ամենեքեան համարին զՂուրանն իբրև զՀշմարիտ պատմութիւն մահմետական կրօնին, և զդիւցանուէր մատեանս բրահմանայն Հնդկայ՝ իբրև զՀշմարիտ պատմութիւն կրօնին հեթանոսութեան։

Ապաքէն՝ կան մեզ իրաւայի պատՀառք՝ ի հաւատալ՝ զի ամենայն բանք պատմեալք՝ ի սրբոց աւետարանչաց՝ են Հշմարիտ և արժանահաւատ.

† Լարդներ՝ ի գիրս հոմանիշնաւորեանն գլ. ՅԾ. և Պոլի՝ ի գիրս վկայութեանց, հատ ՅԾ։

և զոր ինչ ամենօրհնեալ Փրկիչն մեր ասայ և արար, պարտիմք համարիլ հարազատ միանգամայն և սաղդ։

Վասն զի՝ նախ ճշմարիտ աւետարանիչքն առնէին զսուրբ գաղտն ծանօթութիւն անօրէնութեան և վարդապետութեան Քրիստոսի։ Նոքին իբրև անհնար էր նոցա սխալիլ կամ այլ ընդ այլոց խօսիլ՝ ի գրուածս ճշմարտութեամբ մատեանից։

Եւ երկրորդ՝ ոչինչ պարտաւորեալ կարէր ընտրել առ՝ ի պատրեալ զյետագայ ազգս՝ որոց վասն գրեցին զսուրբ աւետարանն։

Սքն Մատթէոս և սքն Յովհաննէս էին երկուք յառաքելոց Տն մերոյ Յի Քի։ յողջոյն ժամանակս վարդապետութեանն նորա ընդ նմա կենցայալարէին և ընդ նմա շրջէին։ Անտարակոյս ականատես վկայ էին տեսարանացն զորս Հշդիւ նկարագրեն։ ականատես էին գործոցն և ականջալուր էին բանից զորս պատմեն։

Սուրբն Մարկոս և սուրբն Ղուկաս թէպէտ և չէին ինքեանք առաքեալք, սակայն ժամանակակիցք և կենակից ընկերք էին առաքելոցն սրբոց, բարեկամք և ընկերակիցք էինն նոցա՝ որք առաջիկայ եղեն՝ ի տեսարանս դիտուածոցն զորս պատմեն։ Սքն Ղուկաս յայտնապէս ասէ՝ ի սկզբան աւետարանին իւրոյ զհետագայ զայս բան։

Քանզի էսպէս յօժարութիւն վերուն կարէին ըստ-
պարտաւորեալներն զոմն երթայն հաստատելոց ՝ ի մէջ։
Որպէս ասացուցին մեզ՝ որ ՝ ի սկզբանէ ակամաբար
և սպասաւորք եղեն քանին։ Կամ եղեալ և ինչ. որ
՝ ի սկզբանէ զկնոջ երբնալ էր ասի ճշմարտութիւն, կար-
գաւ գրել տեսլ՝ փոքր ինչափիկ։ Զի ծանիցին զքա-
նեցն՝ որոց ազատութեամբ, զճշմարտութիւն։

Սուրբն Ղուկաս էր նոյնդատնակ հեղի-
նակ գործոյն առաքելոյ • սին իրի և գրի չէ
հինգ մատենիս այսոցիկ էին այնպիսի արժանա-
հաւատ անձինք՝ որք փոխծանօն էին ամենայնի
զոր պատմեն• կամ անձամբ անձին ականատես և
ականջալուր լինելով իրայն, և կամ կենակցե-
լով և ընկերելով ընդ նոսա՝ որք տեսին և լուան
զոր ինչ միանգամ պատահեցան։

Սին իրի և անհնար էր նոցա խաբել՝ ի
բանից այլոց• և չունէին նոքա զպարտաւորութիւն
ինչ կամ զցանկութիւն առ՝ ի պատրել զայլս
բանիւք իւրեանց։

Էին նոքա արք անխարդախք, Հշմարտա-
սէրք, աննենգք և անուսք• վիճակք կենաց նոցա
էին անշուք և թափուր յանձնասիրութենէ• սին
իրի և անհնար էր նոցա յօրինել և՝ ի գլուխ
տանել զիրս սուտս և մտացածինս, և կամ իւիկք
եղանակաւ ստուէր խառնել ընդ օրէնս քրիստա-

նէ։ Նա առանիկ՝ և յինքեանս ողջոյն պատ-
մութեանց նց քաջափայլ երևին հզօրեղ ցոյցք
արդարութեան, անկեղծութեան, պարզմտութ
և Հշմարտութեան։ Որ ասերիմ թէ նամիք նոցա ոչ
երբեք համարձակեցան զարատ ինչ արկանել՝ ի
վերայ գրութեանց նոցա. ապա ուրեմն զի՞նչ
հնար էր նոցա զանտեզի ստուէս ստեղծել, կամ
վարդապետել և տարածանել զանհեթեթ ստեղ-
ծաբանութիւն։ Ընդ հակառակին՝ Հշմարիտ գրութիք
նոցա հեղին՝ ի գլուխս նոցա զմեծամեծ չարիս՝ ի
թշնամանս անձանց. որք ոչ ինայեցին զբազում
յառաքելոյ մահու չափ չարչարել։ Սին իրի՝
եթէ էին նոքա պատրողք կամ ստոք, ուրեմն
պատրանք և ստութիւնք նոցա էին առանց իրիք
շարժառթի և օգտի. և ոչ այսչափ միայն՝ այլ
և հակառակ էին ամենայն շարժառթի և օգտի,
որք սովորաբար յառաջ մղեն զդրդս մարդկան։
Քարոզեցին նոքա զկրօն մի՝ որ արգելոյր մարդ-
կան գործել զնաբէութիւն, զի մի յանիտենական
պատժոյն լցցին պարտաւոր. սակայն և այնպէս՝
ընդ այսու ենթարութեամբ՝ չատագով եղեն
այնր կրօնին խաբէութեամբք. և մինչ նոքա
վարակեալ էին՝ ի մեղս խաբէութ և պատրանայ,
մահու չափ Հգնէին և ջան՝ ի գործ դնէին անդա-
դար քարոզութիւնք առ՝ ի ուսուցանել ազգի մարդ-

կան զգործս Աշմարտութ և զօրէնս արդարութ։

Աղէ՜ սան ընթերցող, հնարք է այսմ այսպէս լինել։ Հաւատալի՞ է լինել ներգործութեց այսքան հակառակ ներգործութեանց։ Հնարք է մարդոյ վարել այսքան հակառակ մարդկային փորձառութեան, այսքան հակառակ սկզբանց մարդկային բնութեան, և այսքան հակառակ սովորական շարժառթից մարդկային վարուց, մինչ անցանել զանցանել զկոպարաւ հաւանականութ, և բռնադատել զամենայն մարդ բանական առ՝ի զայրացմամբ՝ի բաց ձգել զայսպիսի ենթադրութիւն այլանդակ։

Այսորիկ աղագաւ Ճշմարիտ Ն որք միանգամ պատմին յաւետարանս և՝ի գործս առաքելոց, իրք զարմանաւորքանչք և հրաշք գերմարդկայինք՝ քանզի վկայութիւնք նոցա՝ որք արեամբ իւրեանց ինքեանցին զՀշմարտութիւնս բանիցն զոր գրեցին՝ բաւական են հաստատել՝ի վերայ անդրդուելի հիմանց ջն՝ թէ՝ ի՞ իրս հրաշագործս։

Այս աւանիկ՝ և Հշմարտասիրութի նոցա առաւել քաջահայլ երևի՝ի հետագայ խորհրդածութեց։ ՝Ի սրբազան գրուածս նորոց կտակաքանաց բազում ուրեք յիշատակին իրք, անձինք, տեղիք, վարք, սովորութք և կարծիք մարդկան՝ որք բոլորովին զուգաձայն են Հշմարիտ պա-

ՀՈԳԱՅԻՑ և Հանգամանաց այնր ժամանակի • որ-
պէս է տեսանել՝ ի գիրս ժամանակակից և անա-
չառ պատմչաց։ ԵԹԷ պատմութիւն ՏԱՃԱՅԻՆ
մատենագրաց լինէր ստուգիւն կամ մուսայական
ստեղծաբանուն, Հարկիւ բանք ժամանակակից
պատմչաց՝ ի վերս հանեալ յայանէին զայն՝ ցուցա-
նելով զտարաձայնութիւն վերոյասացեալ պատա-
հական հանգամանաց և պարագայից • զոր մինչև
յայս օր ոչ ոք է համարձակեալ՝ ի հարց և՝ ի
փորձ արկանել՝ զպատմական տարաձայնութիւնս՝ ի
մէջ բերելով։ Բազումք յերևելի իրաց սքՆ առե-
տարանաց յիշատակին՝ ի պատմչաց Հրէից և
Հռովմայեցւոց • որ ԸՆ Հշմարտութի նՁ չյուցա-
նեն ինչ տարակոյս • այսինքն՝ երևիլ աստեղն՝ ի
ՏՆՆԴԵԱՆ փրկչին մերոյ երթալն մոգուց՝ ի բեթ-
ղէհէմ սպանանելն Հերովդէի զմանկունս բեթ-
ղէհէմի՝ որք չև էին երկամեայ, անցք անցեալք
՝ի մէջ Յովհաննու մկրտչի և Հերովդէի, խա-
չելն ՏՆ մերոյ ԸՆ իշխանութեամբ Պոնտացւոյ Պիղա-
տոսի, և գետնաշարժն և հրաշագործ խաւարն՝
որք հետևեցան խաչելութեանն նորին։ Եւ ոչ այսչափ
միայն՝ այլ և բազումք՝ ի հրաշեցն զոր գործեաց
Տէրն մեր Քրիստոս, և մանաւանդ բժշկելն զկաղս և
զկոյրս, և հանելն զայս պիղծս՝ յայնասպէս յի-
շատակին՝ զորոյ Հշմարտութիւն խոստովանին բա-

զամբ յառաջնոյ ոխերիմ թշնամեայ քրիստոնէ-
ութեան։ Քանզի թէպէտև ընծայէին նոքա զայ-
սոսիկ հրաշագործութիւն զօրութեաց այսոց պէտոց,
սակայն խոստովանէին թէ հրաշքս այսոքիկ
իրօք և չէմարտաղէս կատարեցան։ *

Վասն այսորիկ թշնամեայն քրիստոնէութեան,
որք ոչ ցուցանեն ինչ տարակոյս առ հրաշա-
գործութիւնս սրբոյն պատմութեան, և սքան զևս
հաստատեն զչէմարտութիւն և զհարազատութիւն
ընդհանուր բանիցն աւետարանաց։

Նա՛ աւանիկ՝ չէմարիտ է զի գիրք նորոց
կտակարանաց հասին մինչև յժամանակս մեր ա-
ռանց դիպաւոր ինչ փոփոխութեան կամ այլայլութեան.
և՝ ի մասին ամ՝ հարկաւոր գիտելեաց այնպէս
անսասան են մնայեալ՝ որպէս ձեռագիրք գրուածքն
նոցին իսկ հեղինակաց։

Ասել՝ արժան է խոստովանել զի փոփո-
խութիւնքն բառից և կամ վանկից եղեալ է՝ ի
պէտս օրինակս այսոցիկ գրուածոց, ոչ սովոր է
լինել յայլ ամ մնատեանս հնոց։ սակայն ոչ ոք
համարձակեալ է երբեք ասել՝ թէ գլխաւոր
փոփոխութիւնք ինչ քանիցս կամ աղաւաղումն մնայ

*Կարդա՛ Գեղեր Վերոյ-Լեռնոյ Քնարիկն և յայտնեալ
կրօնին։

գրոց եղեալ իցէ ՝ի սրբազան մատեանն, թէ ՝ի մասին վարդապետութեան կրօնի և թէ ի մասին անվրէպ պատմագրութեան։ Այսմ այսպէս արդարանահն

էր վինել երբեք։ Զի՞նչ տեղի տարակուսանաց, զի յորժամ այսոքիկ գիրք սրբազանք անցին ի ձեռաց հեղինակաց իւրեանց՝ ի ձեռս այլոց, նոքին իսկ և իսկ զբազում օրինակս ՝ի նոցանէ զանազանութեալ յղեցին յայլ և այլ եկեղեցիս քրիստոնէից այնր ժամանակի։

Քաջայայտ է մեզ զի ժողովք քրիստոնէից ընթեռնուին զնոյն գիրսն յայանապէս ՝ի հրապարակական աղօթարանս իւրեանց։ Եւ առանիկ՝ և քարոզք գիտեմք զի իսկ և իսկ աւք ՝ճարեալք ՝ի կուրծս եղեալ թարգմանեցին զնոյն գիրսն ՝ի պէսպէս լեզուս այլև այլ ազգաց. և ոչ այսչափ միայն՝ այլև զայսոսիկ վաղեմի թարգմանութիւնս սուրբ գրոց յորոց բազումք մնացեալ են մեզ՝ ՝ի սուղ ժամանակի տիրեալ տարածեցին քրիստոնեայք ՝ի պէսպէս մասունս ծանուցեալ աշխարհի. ոմն թողցուք և զայս՝ զի բազումք ՝ի նախագաղափար ձեռագրաց ի՞նչեալ մնային մինչև ՝ի ժամանակ Ցերոնիմոսի ՝ի վախճանի երկրորդ դարուն։ *

* Գրոգոր, յոլոգ. ՀՀմարքուն էրօնէն Քրիստոս. գէ. գ. հայոսոֆ է։

Քրիստոնեայ մատենագիրք՝ի նախնագոյն ժամանակս մինչև յայսուրս մեր բազում վկայութիւն բանից բերեալ գրեցին՝ի գրոց նորոց կտակարանաց։ և ամենայն վկայութիւնք նոցա զուզաձայն և հաւասարն են բանիցն սրբազան մատենից։ Նա՛ և անիկ բազում չարաչար ալանդք և հերձուածք ծագեցան յառաջին ժամանակս՝ի մասին քրիստոնէութեան։ և իւրաքանչիւրք՝ի սոցունց աղանդաւորաց ապաւինեցան՝ի բանս սրբազան մատենից։ զան Աշմարտութեան վարդապետութեան իւրեանց։ Սակայն իբրեւ՝ ասդարև չէր հնար ոմանք յաղանդաւորաց անտի առնել զգլխաւոր փոփոխութիւնս ինչ՝ի սրբազան մատեանն։ առանց լինելոյ նոցա խայտառակեալ և պախարակեալ՝ի հակառակորդաց իւրեանց։ զան այսպիսի կամաւոր փոփոխութեամբ։ Փոխադարձ նախանձն և կատիսածանքն՝ զոր ունէին նոքա առ միմեանս՝ անտարակոյս լինելոյ էր նոցա հեղբեղ արգելարգաւաղելոյ զբանս սբ գրոց կամ՝ ծուելոյ զվիճաբերութիւնք հատուածոց։ և յաղագս նեռելի և անշանս վարանոյ և վանկիս սպրդելոյ յաճառնոյն գիրս յանհմուտ գրչաց։ գրադատք հանձարեղք և բանի բուռք ուշի ուշով քննեալ և նկատեալ զինք

* Բեռնեի։ Հաս։ ա։ էջ 188։

Հաստատեցին ասելով զի սրբազան գիրք նորոց կտակարանաց սակաւ մեաստեցան ի ժամեայ ժամանակին և ի վերնակայ սրինակողայ, քան թէ այլ մատեանք մնայեալ մեզ ի նախկին ժամանակայ։ †

† Նա ասոնիկ՝ ամ աւետարանին (ասէ քրիստիանոկ և ուրիշանհատաց հնոլնակ ամն) քարտոր վիճակ ճշմարտութեան քանից նորին։ Զի ի նոնին երեսուն ինչ մարդիկին հնարից կամ նշան ինչ հոգւոյ ալաուն։ վի՛ է նոնին քան ինչ յաւելեալ՝ է դոց կոդմանէ, կամ հաստատ ինչ նուազեալ և կրճատեալ է դ-ոց կողմանէ. վի՛ ինչ քան՝ է նմին՝ որ զվերոյն յաւելանէր գալ նախասէր ընդդէմարարութեան այլոց. վի՛ ինչ՝ է քանան աւետարանաց՝ որ յայտնապէս՝ ի վերջ հանէ զարարութիւն վիճակութեան նոցա, որպէս ենթենին գիտեն զանազանութիւնց. վի՛ ինչ քան՝ է նմին ամ՝ ի պարբասանել զանազարութիւն ընթերցողին՝ ի լսել զհրաշալիսն և զգերբնականն՝ ի պարտութիւն անդ. ամենայն է պարզ և անխառն և ճշմարիտ։ Աւետարանիչքն ոչ ասենն զնորհրդածութիւնն՝ ի վերայ երայն զրս պարտին. այլ զարանան ըստ գրեալ զանցս երայ. այսինքն՝ զրս ինչ գիանգամ լսան և տեսին. և հաստատմամբ յեղարարեալն զանխաղանս և զերջանս երբանց, ոչ զայլ անցս պարտանէ։ Բէռնիի՝ է վիճակութեան. Է. I. էջ 89։

ԽՆԴԻՐ։

Սրբոյն Գրիգորի հնոց կոչեցարանաց՝ որ էր ոչ ոչ-գրեն նորոց կոչեցարանաց՝ են փիրոպէս գրուածք նոցա, որոց անուանն յիշատակին ի նոսին. հին կոչեցարանքն պարբանեալք զպատմութիւն պնորհնութեանցն և օրինացն Մովսէսի, զյիշատակս ճշմարիտ գիտութեանց, երկնային պատգամաց, բարոյական խրատուց և ճշմարտութեան մարգարէութեանց։

Այն մասն ճաշակունչ գրոց՝ որ կոչի հին կտակարան՝ պարունակէ զբազմազան այլև այլ շարադրութիւս. այսինքն՝ պատմագրութիւն, բանաստեղծական, բարոյական, խրատական և մարգարէական. զոր գրեցին այլև այլ անձինք յայլև այլ ժամանակս. և Եբրայեցիք խնամովք ժողովեալ պարփակեցին զնոսա ի մատեան մի մեծադիր։

Զի՞նչ ինչ բնաւ տեղի տարակուսանաց, զի ճշմարտունչ գիրս զայսոսիկ գրեցին նոքա՝ որոց անուանքն յիշատակեալ կան ի նոսին։ Ընդ հանուր ազգն հրէից՝ որք մեծ փոյթ ունէին զհարազատութիւն աբ գրոցս այսոցիկ և քան զ Հանայէիս զՀմարտութիւն նոցին միշտ հաստատեցան զճշմարտունչ գիրս գրեալ յաստուածեալ մարգարէից՝ ի

կանխահաս ժամանակաց մինչև յայս օր՝ և հակառակ այսմ ոչ ոք է համարձակեալ գրել կամ կարծիս՝ ի մէջ բերել բնաւին։

Արժան է հաստատել՝ ի բաղում իրաւացի պատճառաց՝ զի ճշմարտագիր քս այսոքիկ իշին առ մեզ այնպիսի ուղղութեամբ և մաքրութիւն որով՝ ի ժամանակս ժամանակս գրեցան։ Նախադաղափար ձեռագիրք այսոցիկ գրոց կային մնային յերկար առ ազգս Հրէից։ Օրինակ մի գրոցն օրինաց անարատ ամբողջ պահեցաւ՝ ի տապանակին։ Հրամանն էր Եբրայեցւոց ընթեռնուլ զայն միանգամ յիւրաքանչիւր եօթն ամ՝ ի տօնի տաղաւարահարաց։ Նա և ամենայն տոհմք Հրէից ընթեռնուին զայն յանախակի եթէ առ տնին և եթէ՝ ի հրապարակի։

Տակաւին գոյ այժմ օրինակ մի հինգ գրոցն Մովսէսի օրինակեալ՝ ի սամարացւոց։ որք ոխերիմ թշնամի էին Հրէից և հակառակ կային նոցա հանապազ։ բայց և այնպէս օրինակս այս համաձայն է Եբրայական օրինակին ըստ ամենայն իմաստից բանից ճշմարտութեամբ գրոց։

Իբրև երեք հարիւր ամաց յառաջ քան զՔրիստոս ճշմարտեանն թարգմանեցաւ՝ ի բարբառս Հելլենացւոց։ և այս թարգմանութիւն որ կոչ

չի եօթանասնից՝ համաձայնի ըստ մեր մասանց նախատիպ օրինակին Եբրայեցւոց ։ Այս թարգմանութիւնս եթէ գրոյց սփոփեալ տարածեցաւ առ բազում ազգս Եի · սին իրի կարի դժուարին էր ազգի ումեք առնել զգլխաւոր վարսխութիւն ինչ՝ ի նմին · և ոչ այսչափ միայն՝ այլև նոքին իսկ Հրէայք գոլով սփոփեալ՝ ի պէտս ծագս երկրի՝ անհնարին էր ումեք աղաւաղել զսա գիրս իւրատեղծ և մասնաձոյ այլալեզուիցք ։

Հրէայք յամ ժամանակ ներքանաւոր հանդիսացան սակս հաստատմանէս պահպանելոյ զսրբազան մատեանս իւրեանց յեկամուտ վրիպակաց և յաղաւաղանաց՝ քանզի յանձնական օրինակին զնոսա զգուշանք · և զօրինակեալն հանեալ՝ բաղդատէին ընդ նախագաղափարայն · զո-

‡ Յոլովք խորհեցան՝ որոք գրոց յԵբրայեցւոցն ՝ ի լեզու Հելլենացւոց սարքէ զոր Եւանգելիս ։

Πολεμαῖος ὁ Φιλάδελφος ἔτη (λϛ). ἐπὶ τούτου αἱ παρ' Ἑβραίοις ἱεραὶ βίβλοι εἰς τὴν Ἑλλάδα φωνὴν μετεβλήθησαν, καὶ ἐν ταῖς κατ' Αλεξάνδρειαν ἀχετέθησαν βιβλιοθήκαις.

Պտղոմէոս Փիլադելֆոս ամս ԼԸ ։ Ասա սոքա Եբրայեցւոց գիրք սէր ՝ ի յոյն լեզու խորհրդեցան ։ և յաղէտանեցին տեղւոյն ՝ ի մասնէնից տունս Եգիպտոս ։ Եւանգելիոն մասն · ՃԺ · ԷԶ 191 ։

ցոյց զբաւան և զգիրսն Թուով հաշուեալ զգուշանային։ Ասի պարզապէս երևի զի ոչ են նք բնաւ եղծեալ կամ խանգարեալ զգրուիս մարգարէից իւրեանց. քանզի հաւատաւոր ստուգեմք ի նոցունց գրոցն մարգարէուն՝ զոր նոքին իսկ Հրէայք խնամով ուսանիցին՝ թէ Յիսուս որ Մեսիայն խոստացեալն ազգի մարդկան ի բազում ժամանակաց հետէ. և եթէ անպարտելի հաւատարմութիւն նոցա առ մատեանս սրբազան ոչ լինիր նոցա արգել խափանարար։ ատելութիւն նոցա առ կրօնն Քրիստոնէից պարտաւորէր զմեզ փոփոխել զգիրս մարգարէից կամայայիւրոյ զնմաստս նոցա։ Նմ առանիկ՝ և հաւատարմութիւն նոցա ճշմարտութեամբ ցոյս հզօրեալ ապացոյց՝ զի փրկիչն մեր Թէպէտ և բազում մասամբք պարտաստան լինի զզպրայն և զգարիսեցւոյ սակայն ոչ երբեք մեղադիր լինի նոցա սակս ազաւաղելոյ կամ խանգարելոյ զմ և ինչ գիրս սրբազան մատնոցիս իւրեանց։

Ապաքէն՝ յայտնի է ամենեցուն զի ճշմարտապէս և հաւատարմութեամբ զամենայն անցս պարտութեանցս՝ ի նոսին։ Զբազումս ի գլխաւոր իրաց և ի գործոց եղելոց ի նոսին՝ յիւրաքանչիւր նա և յոգունք ի վաղեմի մատենագրացն հինգանուանց։ Առա-

ջին սիրելն և արարչութիւն աշխարհի ՝ի շինութենէ և ՝ի խաւսակութենէ ՝ որ ունիմք մեք նկարագրեալ ՝ի Մովսիսէ առաջնոյն արարչական , լուսոյ և աստեղաց , և հուսկ սահմանի մարդոյ բանականի . ի շնամութենն առեալ նմա յարարչէն ՝ի վերայ այլոց կենդանեաց ծովու և ցամաքի . կատարումն այսորիկ սրանչելաբարեաց արարչագործութիւն յաւուրն վեցերորդի . կործանումն աշխարհի բարձրագոյն ջրոյն ջրհեղեղի . ՝ի անցքն նոյեան տապանին և յիշատակութիւն

՝ի Յարդեն ջրհեղեղն բազում մարդկանցն արարածոց պատմութիւն մեզ առանդեցին . որպէս և ՝ի տաղդէական մարգարէութիւն ջրհեղեղն նշարտգրի յաբեղենից և ՝ի բազմաբնեան Աղեքսանդրէ : Եր ժամանակաւորն Եւսեբիոս յիշատակ ժամանակագրութիւնն զնոն ջրհեղեղին այսպիսոյ վկայութիւն բերէ յաբեղենից .

Μεθ' ὃν ἄλλοι τε ἦρξαν, καὶ Σείσιθρος, ᾧ δὴ Κρόνος προσημαίνει μὲν ἔσεσθαι πλῆθος ὄμβρων, Δεσίου πέμπτῃ ἐπὶ δέκα, κελεύει δὲ πᾶν ὅ, τι γραμμάτων ἦν ἐχόμενον, ἐν Ἡλίου πόλει τῇ ἐν Σιππάροισιν ἀποκρύψαι. Σείσιθρος δὲ ταῦτα ἐπιτελέα ποιήσας, εὐθέως ἐπ' Ἀρμενίους ἀνάπλεε, καὶ παραυτίκα μιν κατελάμβανε τὰ ἐκ Θεοῦ. Τρίτῃ δὲ ἡμέρῃ ἔπειτα, ὧν ἐκόπασε, μετήει τῶν ὀρνίθων πείρην ποιεύμενος, εἶπον γῆν ἴδοιεν τοῦ ὕδατος ἐκδύσαν. αἱ δὲ ἐκδεχομένου σφέας Πελάγεος ἀχανέος, ἀπορέουσαι ὅκη κατορμήσονται, παρὰ τὸν Σείσιθρον ὀπίσω κομίζονται, καὶ ἐπ' ἀυτῆσιν ἕτεραι. ὡς δὲ τῇσι τρίτῃσιν ἐυτύ-

պրաւեալն առ ի նմանէ ապաքէն. սրատա-
հասել Սողոմայ ծմփով և հրամի իջելոյ յեր-

χεεν, ἀπίκατο γὰρ δὴ πηλοῦ κατάπλεοι τοὺς ταρσούς, Θεοί μιν
ἐξ ἀνθρώπων ἀφανίζουσιν, τὸ δὲ πλοῖον ἐν Ἀρμενίῃ περίαπτα
ξύλων ἀλεξιφάρμακα τοῖσιν ἐπιχωρίοισι παρείχετο.

Յետ ոգոյոյլ ալիքերին, և սխալանքեան. արամ հան-
ան յանդգնի փուլանեաց լինել յանձնաբ անչքնա-
ց ի հինգերորդումն դեղոս ամսոյ, որ է մարերի։
Հրամանաց ամենեան ամ յարբեալ սնոտուցաց
բնակացանէ։ Եւ երբոր սնոտիքան ղոյն ի գլուխ հա-
նէալ վերբէր մինչեւ ասուգաան ֆեալանասարքէ
ի հայս հանէին, յանկարծակի հասանէին նասալարն
յոյ։ Յերրորդ առաւ՝ յորմամ անչքնն ցանանին,
արչանէր հաս ինչ ի հասաց, դեղանն հալէալ՝ ելնէ
հարեցն ելբիւր թարասալ ի բանսանէ զարեցն
ալանել։ Եւ հայս յանձալ ընդ անհան հանասարած
ծալն ծիանաց՝ լգանանէին ասրեր ասրց դարդ. անդրէն
աա ասնիքան յետս դարձեալ գնեին։ և դարդարեալ
այլ և երբոր ասաւ՝ դարձեալ արչանէր։ և նիշեալ,
հասալ լանալս ամփլան բերբեին։ Եւ անդրէն վաղ-
վաղանի գնեն ամ ի մարդիանէ հնասանրայ ասանէին.
և նաան երբեալ յանկարծն հայոց դարդարեն։ և ի
ֆայարդն գնդ օգանանանալ բնանչաց ալանարնէն
պարփանը։ Եւսեբիոս, մատ. ԿԹ. 49։

կնոջ։ վասն զի՝ ան արարողութիւն ծիսին Թրիա-
սուն։ բազում անգամ վերաբերեալք Մովսէսի,
Հաստատուն կրօնին, և գրոց օրինացն Հրէից։
անուանքն Դաւթի և Սողոմոնի և դաշնակցութիւնք
Նոյա ընդ Տիւրացւոց։ իրքս այսոքիկ և այլք բա-
զումք նման սոցին գերագոյնք և սքանչելիք՝ գրեալ
կան և պարզապէս յիշատակեալք՝ ի մատեանս
բազմաց երեսելի և արժանահաւատ մատենագրաց
հեթանոսաց վաղեմի ժամանակաց։ * Եւ առանիկ՝

* Իսկ՝ է զի ոչոտին պարտիլ յանուանս անէանց, երաց և գնդեաց գանուանին չէրքայական պարտիլոց, ասկայն՝ ի գլխաւոր պարտիցս հարկ տալ հոմանէ-նին նոցին։

Quod igitur his vel ipse Abidenus in eamdem verborum formam de diluvio cum Hebraeorum historia conveniat, omnibus, ut mihi videtur, manifestum est. Quod autem, quum Graeci essent historici aut Chaldaei, proindeque alio nomine Noe nuncaparunt, Xisuthrum vocantes, minime oportet ut id miremur. Item quod si Deos suo more pro Deo appellarunt, et de columba siluerunt, et aves promiscue nominaverunt, ne illud quidem nos valde mirari oportet. *Eusebii Caesariensis Chronici. Pars I. p.* 50.

Եւ՝ զի ոչոտ (ասէ Եւսեբիոս) և աբիդենոս զնոյն
ցեռ բանից Եբրայեցւոց պատմութեանն զքրիստոնէական
գիրքանէ, թուէ ինչ ի մինչեցուն իսկ յայտ է։ Իսկ
ինչ զի յոչոտ էին պատմագիրքն հոմ տեղագիրցիք, և

և ոսկերիմ Թշնամի ոմն Հրեից և քրիստոնէից՝ զամբարիշտ և զուրայորն ասեմ Յուլիանոս՝ բռնադատեցաւ ի զօրութիւն և ի հաստատութիւն վկայութեան խոստովանիլ՝ զի գոյն առ աղտ Հրեից անէնք բազումք լցեալք երկնային աղեղ-ցութիւն և շնորհօք. և զի էջ հուր յերկնից ի վերայ պատարագայն Մովսիսի և Եղիայի՝ Եւ ոչ այսչափ միայն՝ այլ և բազում վկայութիւնք հանեալք ի գրոց հնոց կտակարանաց ի փրկչէն մերմէ և ի նորոմն իսկ առաքելոց՝ են յայտնի և հրաշալի ապացոյցք հաւատոյ Հրեից զվաւերականութեան այսոցիկ գրոց և զՀնամարտասիրութեան ճշմարտեալ հեղինակաց նոցին։

Ասասցուք՝ Հնամարտ է զի ի պատմական գիրս հնոց կտակարանաց գտանեմք զոմանս անէին չարագործս յիշատակեալ. և զգործս ինչ ամբարշտութեան անզգամութեան նկարագրեալ. սակայն ճշմարտեալ մատենագիրքն յիշեն զայսոսիկ՝ լոկ

ոյլով անուամբ զնոց անուանեցին՝ փոխանութիւն նոցին՝ ընդ այն չէ ինչ պարտ զարմանալ։ Եւ ենէ դիտ ըստ իւրեանց սովորութեանն փոխանակ այլ յորոնցինն՝ և զպարանոցն ընդ ինն՝ և հաստատութիւնն անուանեցին՝ և ընդ այն չէ ինչ պարտ նոցին զանգանալ։ Եւսեբիոս. մատ՝ ա. էջ 50։

իբրև զանց պատմութիւն, զորս չէ պարտ այլոց հաւանել կամառնուլ յօրինակ վարուց և գործոց իւրեանց։ Եւ բայց յայսոսիկ բանից չարաչար գործոց՝ որք առ բաղդատութիւն այլոց ՅԾԱՀԱՆՈՅ գործոց սակաւք են և նուազունք՝ մնայեալ մասունքն ՅԾԱՇՈՒՆՉ գրոցս այսոսիկ, և մանաւանդ գիրք երկրորդ օրինայ, Սաղմոսաց, Առակաց, Էկղեսիաստիկեայ և մարգարէից լի են արդարև վսեմափայլ նկարագրութիւք ԱՅ և ստորոգելեաց նորա։ լի են նոքա արդարև գեղեցիկ կանոնօք վարուց և գործոց մարդկան, և գրեթէ ամենայն օրինակօք ՅԾԱՀԱՆՈՅ առաքինութեց՝ որոց հնար է զարդարել զբնութիւն մարդկան և մերձեցուցանել զմարդն ՝ի նմանութիւն իւրոյ գերագոյն ստեղծողին։ Եւ արդ՝ առաւել զարմանալին այս է, զի ՅԾԱՇՈՒՆՉ գիրքն գրեցան և առանդեցան մարդկան յայնմիկ ժամանակի՝ յորժամ մնայեալ աղգք աշխարհի և մանաւանդ հրաչակեալքն իմաստութիւք և ուսմամբք և գիտութիւքք՝ պարանոցաթաղ ընկղմեալ էին ՝ի վիհս անգիտութիւն ԱՅ և մաքուր կրօնի նորին։ յորժամ ամենեքեան նոքա զդրօշեալս և զանբան կենդանիս կոյր զկուրայն պաշտէին։ և զանձինս իւրեանց նուիրեալ մարմնաւոր հեշտութեց՝ ՝ի պղծութիւն և ՝ի գիւտ գրգիռ մոլութիւս զակառեալ զեղխէին։ Միայք

մարդոյ արդարև՝ ի խորս զարմանման անկեալ հիանայ, զի ընտրեալ ժողովուրդն Աստ՝ զազգն ասեմ երբայեցւոյ գոլով բնակեալ՝ ի հեռաւոր և յանյայտ մասն աշխարհի, բաղմաք ստորագրոն եղեալ քան զբազում ազգս հեթանոսաց, ի մանն գիտուն և խմաստասիրուն և հանճարեղուն և ուսմանց և այլոց ամենայն աղուտական արուեստից, այսքան առաւելութիւն գերազանց լինիցին քան զնուսա զամենեսին՝ ի Հանաչել զանճառելի Աստն երկնային, և ի գիտել զամ իրս պատշաճեալս բարոյականութեան և կրօնի։ Արդարև յոչինչ յերկրառոյ պատճառաց կամ՝ ի մարդադիր օրինաց մարթ էր նոցա ունել զայսպիսի սքանչելի ճշմարտութիւնս, եթէ ոչ յաստուածատում օրինաց։ զոր առանձինս նոցա Աստ՝ ի ձեռն մարգարէից իւրոց։ և այսպէս դիւրին է ամենայն ուսմաք իմանալ՝ զի առաջին ազգն հրեից լցեալ էին ընդհանուր երկնային պատգամաց՝ զոր տեսանեմք յիշատակեալ՝ ի գիրս հնոց կտակարանաց։

Եւ արդ՝ արժան է խօսել զմարգարէութեան եղելոյ՝ ի գիրս ճշմարտութեանս։ Ճշմարտութիւն այսոցիկ ճշմարտաց գուշակութեանց ըստ մեծի մասին յայտնեալ կատարեցաւ՝ ի դարս վերջինս։ Ինքնագուշակ բանք մարգարէիցն զիրկ չէին մերմէ՝ զոր ունիմք յիշատակեալ յիւրաքանչիւր

ևս և գուշակութիւնքն ի վերայ Բաբիլոնի, Եգիպտոսի, Եդոմայ, Տիւրոսի և Սիդոնի, հանդերձ ստուգեալ կատարելոյն իրօք զարմանալի ինն եղանակաւ։ Բայց յաղագս գերութիւն և ցրուելոյ հրէից ազգին բաղում բանք դոն ի գիրս մարգարէից։ և յորժամ տեսանեմ զգուշակութիւնսն մարգարէիցն այսպէս ստուգութիւն կատարեալ ի վիճակս Հրէից այժմու ժամանակիս, որք անապատանդ և աշխարհաւեր եղեալ յամ ծագս աշխարհն շրջին Թափառական, յայնպիսի զարմանս մի ունի միտք իմ ի անսխալ ուսուցանողս մարգարէից։ մինչ արժան համարիմ բերել առաւելս զոմանս ի գլխաւոր մարգարէութեանցն ի ճանաչութիւն ամենայն լսելեաց։

Գուշակեցաւ յառաջագոյն ի Մովսիսէ, զի յորժամ Հրէայք թողեալ լիցին զՔՀՇՄՐԻԱՆ ԱՆ, ցրուեսցէ զնոսա ՏԷՐ ԱՆ ընդ ամենայն ազգս ի ծագաց մինչև ի ծագս երկրի։ և եղիցին նոքա յարակ և ի ցոյց և զարոյց ի վերջ ամենայն ազգաց։ յոր տանիցի զնոսա ՏԷՐ անդ։ այլև յազգն յայնոսիկ ոչ գտցեն նոքա զՀանգիստ։ և ոչ լինիցի կայ թաթիւ ոտից նոցա։ և տացէ նոցա անդ ՏԷՐ սիրտ տրտմեալ և աչս տրեալս։ և անձն հարեալ։ և ածեսցէ զողորմն ի սիրտս նոցա յերկրին թշնամեաց իւրեանց։ և

հալածեսցէ զնա ձայն տերևոյ խաբխաւելոյ * ։

Նա և մարգարէք իսկ զաղետալն գերուի և պանդխտուի ազգին Հրէից գուշակեալ զաբ-մանալի ուղղութիւն պատմիչին, զի Տէր ամենակալ-ցէ զձեռն իւր ի վերայ նոցա յանապատի անդ, յրուել զնոսա լնդ ազգս և ցանել զնոսա լնդ գաւառս. զի ահաւասիկ Տէր ցրուեսցէ զնոսա լնդ ամենայն ազգս երկրի. զորօրինակ հոսի հոսչաւ, և մի անկցի մնորուած նորա յերկիր։ Եւ հալածեսցէ զնոսա սրով և սովով և մահ-ուամբ. և տացէ զնոսա ի շարժումն ամ թա-գաւորս թագաւորի երկրի. ի նզովս և յապտականուի և ի շջին և ի նախատինս ի մէջ ամ ազգաց ուր ցրուեսցէ զնոսա անդր։ Զի առուրս բազումս նստցին որդիքն Իսրայէլի առանց թագաւորի և առանց իշխանի և առանց պատարագաց և առանց սեղանոյ և առանց քահանայութեան և առանց յայտնութեանց † ։

Աղէ մի՞ դիր ընթերցող և քաջ առեա թէ

* Երէ. օրէ. Բ. 25. Ղ. Բ. 33. Երէ. օրէ. Բ. 27. Երէ. օրէ. Բ. 64. Երէ. օրէ. Բ. 37. Երէ. օրէ. Բ. 65. Ղ. Բ. 36։

† Եղէկ. Բ. 13. Ժ. 15. Ամոս. Բ. 9. Եսայ. Բ. 9. Բ. 18. Ոսոկ. Գ. 4։

զիմարդ ատոյգ կատարելեան գուշակութիւնք մարգարէից։ ասա՛ ինձ, մի թէ այսպիսի թշուառութիւն և գերութիւն հանդիպեալ է երբեք ազգի ոմանք՝ի ժամանակս Մովսիսի և կամ այլոց մարգարէից։ մի թէ կարծէի՞ն երբեք ազգք առաջինք թէ այսպիսի դառն յեղափոխութիւնք պատահելոց է ազգի ոմանք։ Մի թէ խորհուրդ ինչ ընդ միտս մարդկան էանց ընթերցող՝ թէ ազգն Հրէից գոլով նուաճեալ ընդ լծով թշնամեաց իւրեանց և ածեալ՝ի գերութիւն օտարաց, ոչ կարասցեն գտանել զհաստատուն բնակութիւն յերկիրս գերողաց իւրեանց, և ոչ փոխել և դառնալ՝ի կրօնս և յօրէնս գերչաց իւրեանց, կամ՝ կորնչիլ՝ի սահմանս օտարութեան և պանդխտութեան։ այլ ցրուեալ թափառեալ ծնասցեն՝ի մէջ ամենայն ազգաց աշխարհի։ ատեսցին և նզովեսցին և հալածեսցին յամ ազգաց զդարս յոլովս։ և՝ի վերայ այսր ամենայնի դեռևս անկորուստ պահեսցին զանուն ազգի իւրեանց և համարեսցին յամենեցունց իբրև ազգ ինչ յատուկ և հնագոյն։ Եւ եթէ ոք՝ի ժամանակս մեր զվիճակ գերութեան ազգին Հրէից կամէր նկարագրել գրչաւ, մի թէ կարէ՞ր առաւել գեղեցիկ և ճշմարիտ նկարագրութեամբ յուցանել զաղէտս և զթշուառութիւս նոցա, յորս պարանոցաթաղ ան-

կեալ կան՝ ի բազում դարուց հետէ. որում և բանք մարդասիրին բերեն զանսխալ վկայութիւն. մանաւանդ Մովսիսին՝ որ գրեալ աւանդեցաւ մարդկան իբրև 3000 ամաց յառաջ։†

ԻՆԴԻՐ Ե։

Նիւթաւոր հանգամանաց՝ քանզի որ ի ցոյց երևեն ի գրոցս սրբոցն առքերանոյ՝ հրաշիք ճշմարտութեան՝ զարթեալ զմիտս մարդկանն առ ի հաւատալ զի նա էր անէն մի սուրբն և աստուածն։

Որ միանգամ ուշադրութեամբ զնեաւ ամենայն զնկարագիր անձին օրհնեալ Տեառն մերոյ՝ ի բազմապատիկ դիպուածոց և ի զրոյցս կենաց նորա՝ (քանզի չէք ինչ Հարտարարութեան նկարագրութիւնք և դրուատք յօրինեալք զնմանէ յաշակերտաց նորին) իսկոյն տեսանելոյ է զնա լինել ամենայն մարդաւք առաւելութեանց փայլեալ գերազանցեալ յաշխարհի։ Եթէ մեք ասիցեմք զնմանէ զայն զոր Պիղատոս ասաց և ամենայնքն թշնամիքն նորա ոչ կարացին ուրանալ և ոչ ուրանան՝ թէ ոչ գտանեմք զմեղս ինչ

† Կլոր՝ ի վիպասանութեան, էջ 176 և 277։

՝ի նմա, և թէ բուսանդակ ժամանակ կենայց նորա էր անստգիտա և անմեղ, այսու բանիւ ընդայմանն նմա զպատիւ սրբութեան՝ առաւել քան զոր չէ հնար ասել զայլոց անձնէ, որ կենցաղավարեալ էին յաշխարհի։ Սակայն՝ կարի անդէպ եղիցի այսուիկ դուշնաքեայ բանիւ սահմանել զգերազանցութիւն անձառելի անձին նորա։ Նա ոչ միայն գերծ էր յամենայն տեսակաց մեղայ, այլ և սերգիանմեալ յանձին՝ ի գործս դնէր զամենայն գործս առաքինութեան։ Եցոյց նա առ հայր իւր երկնաւոր զբազմեռանդն սէր, զամենաջերմ և զպատշաճական մեծարանս պատուոյ։ և յամենայն բարս իւր խոստովանէր զամենակատար խոնարհութիւն կամից նորա և զհպատակութիւն պատուիրանաց նորա։ վարք նորա էր հանգստակեալ և քաղցրագութ և ողորմած և կամաձոգնեալ։ սերս նորա պատերազմն էր բարեբարոյութիւն և գթասիրութիւն և քաղցրութիւն առ ամենայն ազգս մարդկան։ Մենագոյն զբաղումն կենցաղոյն էր առնել զբարիս մարմնոյ և հոգւոյ մարդկան։ Ամենայն մտածմունք և ամենայն ժամանակք նորա հանապազ և գրեթէ անդադար պատրաստեալ էին՝ ի գործս բարեբարեաց մարդկան‡։ Հրջեր

‡ Անկեալ էր ի գրչագրութենէն Քրիստոսասէր առ մարդիկ

նա յաշխարհն բաշխելով զբարիս իւր ամենեցուն եղերից շուրջ զիւրն՝ հաղարաւոր աղգի աղգի հղանակաւք։ զոմանց բժշկելով զհիւանդութիւնս, զայլոց բառնալով զթշուառութիւնս։ ուղղելով զսխալանս մարդկան, փարատելով զնախապաշարմունս ի մտաց նոցա, ծաղկեցուցանելով զանծպաշտութիւն յաշխարհն։ և ուսուցանելով մարդկան զարդարութիւն և զողորմածութիւն և զնաղաղութիւն և զմիաբանութիւն։ ի սակաւաթիւ ամս շրջելոյ նորա ի վերայ երկրի կատարեաց նա զայնպիսի գործս ողորմութեան և գթութեան՝ զոր երկարակեաց անձինք բազմապաշտք մինչ ցարդ ոչ են կարացեալ առնել ի վերայ երկրի։ Ընդ երանա ի վերայ կրկին իւրոց զանձնակատար նշխանութիւն։ և թէպէտև հրամբերութիւն նորա բազմիցս փորձեցաւ, սակայն հոգի նորա ոչ երբեք յաղթահարեցաւ։ և ոչ եղոյց նա զնշան անբարեխառնութեան եթէ ի

գլխոյն և ածարքեալ Սարգիսն մեր յառնէր։ Զի՞արդ անլարչարելին չարչարեցաւ։ և կամ որպէ՞ն անմահն մարմնով մեռաւ։ և մեր ճշմարիտ հնարանութիւնն և անմահութիւն պարգևեցաւ։ Եւ զանիրեալ և զկարծանեալ բնութիւն՝ ինքնամբ ի վերջ սրտաւ։ և ընդ ոգի հոգ նոտոյց յաւուր երեքոց։ Սոցի։ պնդոյ։ ն։ յարդ։

բանս և եթէ՝ ի գործս իւր. և ոչ անգամ մի երբէք զանպատշաճն խօսեցար։ Համբերը նա դժնդակագոյն արհամարհանաց թշնամեաց իւրոց, ամենայն անդորրութիւն և հեզութիւն և երկայնմտութիւն և հպատակութիւն. եղոյց զզարմանապէս չարիսն՝ ի մահ իւր բազմաչարչար և խայտառակ. և՝ ի գլուխս սմենայնի՝ ի ժամ չարչարանաց իւրոց՝ ի վերայ խաչին խնդրեաց զԹողութիւն ովսան խաչահանուսայ իւրոց այսու երկնային և անսիրաշարժ աղօթիւք. Հայր՝ թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն *։

* Զանճառութիւն հնգաւանքեանն Քրիստոսի գեղեցիկ խօսք ի մեր Սարգիս զնորհուն յոսեանն. Լոկ նա ոչ բարկանայր և ոչ սասանէր հանելիցեր կոտորէն նոցա. նոքա ևս գան զնա ծարհէին. կալեալ կապեալս յոսեանն ածէին։ Ընդ երկնս նայեցանէին. ի ծնօղն ապաւիրէին. սատանի դատաւորին ապաւիրէին սուրբն՝ երբեք չէր չարագործ՝ ոչ մարնէսի գնա դէպ։ Փղոր պարէին. դղրդեր զգեցուցանէին. նզիգամբ հագէին. ի խուլն քնարէին. դոցա ևս լեզու արբուցանէին. և նա յոյսսանն անարգանանն ոչ զայրանայր և ոչ հարց ելուցանէր յերկնից այրելոն արդեն զարդարեցին։ Եւ համ հրամանն սաղ եղելի բերան բանալ և հլունելոն ոգրեն զարդան և զբերան։ Ասէ՝ ի խուլն պրիսալ

Նա աւանիկ՝ և ոչ իմաստուն նր ի վայր էր քան զառաքինութիւն նորին։ Վարդապետութիւք կրօնի նր էին բարձրագոյն և վեհմագոյն քան զորս աւանդէին ազգի մարդկան առաջին մարգարէքն ճշմարտագոյն։ և եամ մաւամբ արժանի էին մեծուն Աստն այնորիկ՝ յորմէ ընկալեալ էր զնոսա։ և որոյ որդի զինքենէ սէր լինիլ։

Խրատք նր ուսուցին մարդկան զամենամաքուր և զամենակատար կանոնս բարոյականութեան։ խօսակցութիւնք նորա լի էին մեծութիւն և իմաստութիւն։ բայց և այնպէս էին պարզ և դիւրըմբռնելի ամենայն մարդկան։ աւակք նորա ազգային ըղձալոյ զկրատս՝ կարի հաճոյական և ընտանի և ազդողական իմն եղանակաւ։ պատասխանատուութիւնք նորա առ սէրեպէս չարահնար հարցմունս արարեալս նմա՝ ի նենգամիտ թշնամեաց նորա՝ յուսանէին զանհամեմատ նրբութիւն մնայ և գքաջութիւն դատողութեան և զլրջմտութիւն երկնային։ որովք պարտեալ նուաճեայ միանգամայն զմեքենայս և զչարակնութիւն թշնամեաց իւրոց։ և զերծաւ յամենայն որոգայթից՝ զորս ատեցողք ճշմարտութեան պատրաստէին ընդդէմ նորա։

Հայր և որ հայր վասն նոցա աղօթէր։ հայր ներող ասցու զի ոչ գիտեն զինչ գործեն։ Սուրբ. յայտ. գ։ յորդորս

Յայտմ Համառօտ և յանկատար նկարագրեալ հանգամանաց փրկչին մերոյ յայտնապէս երևի, զի էր նա անդր քան զչափն ամենիմաստ և մեծ-նամաքոյր անձն՝ որ երբեք երևեցեալ չէր։ այսմ փկային և ոսկերիմաթչնամիք նորա՝ ոչ ուրանալով զչնաչնարհիկ և զանգային առաքինութիւնս նորա։ Ապա ուրեմն եթէ էր նա արդարև էակ ոմն չնաչնարհիկ և գերամարդ, հարկիս ոպարտիք համարիլ զնա ած երկնային, և զկրօն նորա՝ բղխեալ յԱստուծոյ երկնայնոյ։ քանզի ծագումն նորա էր արդարև յերկնային ածութիւն։ Քարոզէր նա զանձնէ իւրմէ լինիլ ուրդի Աստուծոյ։ ասէր նա թէ ինքն և կրօն իւր իջեալ էին յերկնից։ և թէ ունէր նա զօրութիւնս գործելոյ զհրաշս զարմանալիս և գերմարդկայինս։ Եթէ բանք իւր անհամանման լինէին գործոց իւրոց, հարկիս և վարդապետութիւնք նորա ոչ ունէին զտեղի Հշմարտութեան։ Բայց աղէ ընթերցող ինձ ասա, հնար էր՞ երբեք Հշմարտասիրի ունիլ անգամ զայսպիսի կարծիս և կամ հաւատալ զայսպիսի ենթադրութիւն։ Հնար էր՞ երբեք խոհական բանականաց ունիլ զայսպիսի կարծիս հակառակ Հշմարտութեան։ և կամ վայելուչ իցէ՞ օրհնեալ Յեսուն մերոյ այսպիսի անտեղի խորհուրդ թերահաւատութեան։ կարելի էր՞ երբեք

ամենք խորհել կամ կարծել զի ոչ ել Աշմարտութեն ի բերանոյ նորա զոր ոսկերիմ Թշնամիքն նորա համարին ամենայն մասամբք գերագոյն և առաքինագոյն քան զամ մարդիկ։ և ոչ իշխեն անգամ յառաջ բերել զտարակոյս ինչ յաղագս Աշմարտուն բանից և ողջամիտ վարդապետութեան նորա։ Եւ դու տես ընթերցող՝ հնար է՞ երբեք գտանել յինչ-ինչ ուսումն ազգի մարդկան զանձն ոք զարդարեալ առաքինութիւք և անարատ վարուք՝ որպէս էր փրկիչն մեր ամենաօրհնեալ։ քանզի նա անյողդողդ մնայ մինչև յելախնան յամենայն վարդապետութիւն իւր։ որք եթէ զուրկ լինէին ի Աշմարտութենէ, հարկիւ լնդդէմ լինէին յայտնագոյն և պարզիմայ սկզբանայ բարոյականութեան։ և ի վերջոյ կարի ճշմարտակար լինէին հոգեկան սիրելեաց իւրոց։ այսինքն՝ հետևողաց և բարեկամանց քրիստոնէութեան։ Հնար է՞ ումեք խորհել երբեք, զի մարդուն և ուղիղն և բարեպաշտն և երկիւղածն և հեզն և խոնարհն և մարդասէրն և ողորմածն Յիսուսկարէր յորդորել զբազմութիւն անմեղ և առաքինի ժողովրդոց առ ի հաւատալ և հաստատուն պահել զկրօնն քրիստոնէութեան, մինչ զի գիտէր ինքն զի սակս այնր կրօնի կրեալոյ էին քրիստոնեայքն զհալածանս և զթշուառութիւնս

և զանազան մահուան. կարէ՞ր նա արդեօք հաստատել զկրօնն քրիստոնէութեան, եթէ ոչ էր նորա ընկալեալ յԱՅ զիշխանութիւն հաստատելոյ զնոյն, և եթէ ոչ լինէր նա ինքն վստահ յաստուածային զօրութիւն խմաստութեան իւրոյ, թէ կարող է ինքնին լիապէս բարերարել նոցա՝ որք զսուրբ կրօն իւր նախամեծար համարեցան քան զայլ ամենայն կրօնս եղեալս՝ ի մարդկանէ։ Իրաւի մարդիկ առ հաստատակ խոովեալ սարսափեսային յանհեթեթ խորհրդոց և՝ կարծեաց, զոր ամենաչարն սոսկոր է արկանել՝ ի միտս նոցա յաղագս Աշխարհատածութեան Քրիստոսեան և Աշխարհատեսամենասուրբ կրօնի նորին։

Սակայն ուրեմն զկնի ամենայն առարկութեանց մերոց արժան է եզրակացուցանել՝ զի Յիսուս Քրիստոս էր արդարև վարդապետ ոմն երկնային, և կրօն նորա բղխեալ էր յԱՅ իբրև աղբիւր լուսատու աղգի մարդկան։

ԽՆԴԻՐ Զ։

Աղերսեցէք վասն պատերազմաց նորա և մարտուցէք քարոյական խորհրդոց նորա հոգոյ ի դէպ հոգոյ անդրդուելի ճշմարտութեան։

Զի՞նչ ուրեք արդարև գտանել զայնպիսի կենցաղագուտ ծանօթութիւնս, և զայնպիսի ճշմարիտ և վեհմտական բանս յաղագս Աստուծոյ և կրօնի նորին, ոչ՝ ի սէ գիրս նորոց կտակարանաց։

Ուստ՝ այնմանէ զմեզ զատաւորինն բանք սբց առաքեալ՝ թէ գոյ յերկինս՝ ի վերս Աստուծոյ մի ամենակարող՝ որ ստեղծ զերկինս և զերկիրս և զամենայն ինչ անտես և անհասանելի զօրութիւն և իմաստութիւն և արդարութիւն և ողորմութիւն և բարերարութիւն։ ուստի՝ ի սուրբ գրոց ասի՝ թէ նա է կատարելոյ և պահպանիչ իւրաստեղծ աշխարհի՝ թէ խնամք տեսչութիւն նորա է՝ ի վերայ ամենայն գործոց իւրոց։ և թէ առաւել քան զամենայն խնամ ունի նա երջանկութիւն մարդկան և ամենարկէ յամենայն գործս և յամենագործս նոցա։ Ուստի՝ ի սուրբ գրոց ասի՝ թէ սպասաւորք պաշտեալ զայս Աստուծոյ հոգւով և ճշմարտութեամբ։ և թէ սէրն Աստուծոյ և ճաճանչոց է առաջինն և գերագոյնն՝ ի պաստուիրանս նորա։

միանգամայն և սկիզբն և աղբիւր ամենայն ճշմա-
հաւոյ և բարոյական առաքինութեաց։ Բնանիմք
՝ի սուրբ գրոց աստի յատկապէս՝ թէ զիարդ կամ՝
որպիսի եղանակաւ պարտիմք աղօթս մատու-
ցանել. ամենակալին Աստ։ և յաղագս այնորիկ
գրեալ կայ՝ ի պէտս մեր ձև ինչ աղօթից՝ ի
սուրբ աւետարանի անդ։ որ սակս բղխելոյ՝ ի
բերանոյ օրհնեալ Տն մերոյ՝ ասի հասարակապէս
աղօթք տէրունական։ որ ըստ ասիցս ուրուն
գերիմաստ ճշմարտի՝ է օրինակ անդորրամիտ և
զգաստաշնաւոր ճշմարտութեան։ և յաղագս կար-
ՀՈՒԹԵՆ և պարզութեան վերաբերելոյ յամե-
նայն վիճակս մարդկան՝ արդարև ելելս առնէ
զամենայն աղօթիւք։ և չիք ինչ յայլ ամենայն
աղօթից միջի՝ որ կարիցէ հասանել՝ ի չափ մե-
ծութեան և անհեղութեան և ջերմեռանդութեան այսր
տէրունական աղօթից։ Նաև ուսանիմք մեք՝ ի
սոյն գրոց աստի զոր միանգամ զգաստ յանձինս
մեր լինել Հշմարիտ՝ թէ սիրտ մարդոյ է տկար
և ապականեալ։ թէ անկեալ է նա՝ ի բարձ-
ութեան սկզբնական անմեղութեան իւրոյ։ թէ արդ-
ժանայէեալ է նա հասանել վերստին շնորհացն
Աստ և գտանել զվիճակ երջանկութեան՝ ի ձեռն
մահուան և միջնորդութեան և քաւութեան Քրի։ որ
է Հոմապարտ և Հշմարտութեան և կեանք։ և թէ

սուրբ Հոգին Աստուծոյ երկնային աղդեցութիւնը իւրով ձեռնտու լոյսն անկեալն մարդոյ առ ի ջանալ գտանել զիւրս առաքինութեան և հասանել Հրշալ մարիտ հաւատոյ սրբութեան և երանագործ կենաց։

Նա և ուսանիցք ի սուրբ գրոց ասելոյն, թէ հոգի մարդոյ ոչ կորնչի ընդ ապականայու մարմնոյն։ այլ զկնի մահուան զանմահութիւն զգեցցէ և դիմեսցէ ի կայանս վերնական, ամենայն աղգք մարդկան յարիցեն վերստին ի գերեզմանաց լուսոյ, և կանգնեսցին յորոտ-ընդոստ առեալն Քրիստոս։ որ տացէ զերանութիւն արդարոց և զտանջանս մեղաւորաց ի հանդերձեալ կեանս յաւիտենականութեան։ ըստ իւրաքանչիւրոց բարեգործութեան կամ յանցաւածոց։

Արդ՝ յայսոսիկ վարդապետութիւնս սքանչելարանին պարունակեալ կան երկնային և զարմանալի և կենցաղոգուտ Աշխարհաստեղծ։ որք կամ միանգամայն անծանօթ էին աշխարհի յառաջագոյն, և կամ ընդ աղօտ ծանուցեալ ունկնց սակաւուց ևեթ։ ի Աշխարհապատում բանիս ասելոյ սրբ անարգագոյնք և շինականք առաւել բարւոք ուսանին զերուն ամենակալին Աստուծոյ, և առաւել բարւոք Հանաչեն զանգիտելիս որք մեջ մարդոյ և Աստուծոյ, քան թէ մեծամեծ իմաստասէրք առաջին ժամանակաց կարէին Հանագ-

չել կամ դիտել։

Բարդեակն խրատք սրբոյ աւետարանին ասնուագոյն և գերազանցագոյն են քան զայլ ամենայն կանոնս բարեկարգութեան կենցաղ եղեալ յիմաստասիրաց և ի գիտնականաց աշխարհի։

Ամենօրհնեալ վարդապետն մեր երկնային զառաջինն հաստատեաց զերկուս գերազագոյն կանոնս սակս ճշմարտութեան մերոյ. զսէրն ասեմ առ Աստուած և զսէր առ մարդիկ. և յերկուց գերազանց կանոնաց աստի իբրև յերկուց ճշմարտութիւն աղբերաց յառաջ բերեալ օրինադարեաց (ըստ յարմարութեան ժամանակի, տեղոյ և անձին, յորոց պարագայից բանք վարդապետութեան նորա լինէին յաւէտ արժանիկալ և ադդուղական) զամենայն գերազագոյն պարտականութիւն մեր առ Աստուած և առ մերձաւորս և առ անձինս մեր։

Հրամայեն մեզ օրէնք աւետարանականք սիրել զՏէր Աստուած մեր. պաշտել զնա Հշմարիտ հաւատով. հնազանդել նմա սրտի մտօք. և երկնչիլ ի նմանէ ահիւ և դողութեամբ. պատուիրեն մեզ միշտ և հանապազ առաջի աչաց ունել զաստուածային երկնային. առնել և գործել զամենայն ինչ ի փառս անուան նր. առաքինական գործովք խնդրել զարքայութիւն նորա և զարդա-

թուն նորա երկնային. յանձն առնել զմեզ բոլորովին ի բարի կամն նորա. և համբերել հեզութիւն և զուարթութիւն և գոհութիւն ամենայն աղէտից և նեղութեց՝ զոր անխտիր խնամատութեան նորա արժանի համարեսցի անել ի վերայ մեր յաստի կեանս։

Հրամայեն մեզ օրէնք աւետարանականք սիրել զմերձաւորս մեր հաւատարմութիւն, և վարել ընդ նոսա պիտութիւն և արդարութիւն և ճշմարտութիւն. պարտաւոր կացուցանեն զմեզ սիրել զնոսա իբրև զանձն մեր. և առնել նոցա զոր միանգամ կամիցիմք զի արասցեն մեզ մարդիկ։ Որ զարմանալի ճաղէր օրինացս, որ վաղեալ ունի յինքեան զհամառօտութեան և զբովանդակութեան ամենայն կենցաղական առաքինութեց, յորմէ չէ հնար ուրուք սխալել կամ վրիպել։

Հրամայեն մեզ օրէնք աւետարանականք պահպանել զանձինս մեր ամբիծ և անարատ ի աղմաշաղախ մեղայ ցեղ. բարեխառն չափաւորելիս յամ իրս. նուաճել զկիրս մարմնոյ մերոյ և զյաժարուիս զգայութեց մերոյ. մի տալ երբէք կրից մերոյ ապրանան լինիլ և գրաւել զտեղի անսխալ բանին, այլ կեալ զգաստութիւն և ճշգաշտութիւն զամ առուրս կենցաղ մերոյ։

Այսոքիկ են ընդհանրական կանոնքն

ՀԱՅՈՑ ԱՄԵՆԻՄԱՍՏ
ՓՐԿԻՉՆ ՄԵՐ ԵՎ ՎԱՆ ՎԱՐՈՒՑ ՄԵՐՈՅ ՀԱՍԱՐԱԿԱՅ
ՅԱՊՂԻ ԱՊՂԻ ՎԻՃԱԿԻՑ ԵՎ ՅՈՒՆՉՈՒԹԻՆ ԿԵՆՍԱ-
ՇԽԱՐՀԻ ։ Զատաւել մանրապատում խրատս
քաղցր ուրեք է տեսանել՝ ի պէսպէս մասունս
ՀՈՒՆ ՄԱՍՏԵՆԻՑ ։ Եւ մանաւանդ՝ ի զրմամալի
Հուն ՓՐԿԻՉԻՆ ՄԵՐՈՅ՝ ի վերոյ լերին՝ յորում է՝
տեսանել զյոլով գերազանցագոյն կանոնս բար-
ՈՒՔ ԿԵՆՍԱՎԱՐՈՒԹԻՆ՝ աւանդեալս հետեւողս
իւրոց համառօտ և իմաստալից և ահեղ և կենս-
ՅԱՑՕՂՈՒՍ ԲԱՆԻՆՔ ։ որք լի են իմաստութիւն և
մեծութիւն ։ բայց և այպէս են պարզ և դիւրըմ-
բռնելի ՀԱՄ հասակաց։ Բայց սակայն առաւելեալ
գերազանցուն բարոյական խրատուցն աւետարա-
նին՝ որ անցանէ զանցանէ զայլ ՀԱՄ բարոյական
մատենիւք՝ յաւէտ և՝ ի վերս քան զՀԱՄ յայսմ
է հաստատեալ։ զի յԱՄի նախադաս համարի
զհեզահամբոյր և զիշողական և դիւրանայ. և
նեղողամիտ բնութիւն քան զդժոդակ և զբրը-
նական և զանողոքելի և զխրոխտ բնաւորութիւս ։
որք այրքան յաճախակի գտանին՝ ի մարդիկ այսր
աշխարհի ։ զի ոչ միայն բարեկարգ զարտա-
քին գործս մեր ։ այլ և չափ և կանոն դնէ՝ ի
վերայ ամենայն կրից և յօժարութեց մերոյ ։ և
պանձ դնէ՝ ի վերայ արտից մերոյ՝ լերս՝ ի պատ-

շանՀագոյն տեղւոջ՝ մի՛ բնաւ միտել Համակիլ՝ ի
յոփութիս անվայելս մեծամեծ Հոգւոյ բանականի։
զի արգելու զմեզ առ՝ ի խնդրել զիսուս և
զգուլեսաս՝ ի մանրկանէ յամենայն գործս ՀաՃապաշ-
տութիւն և ողորմածութիւն և այլոց առաքինութիւնս
մերոց։ զի տայ մեզ ամենեցուն զսկզբնական և
զՀարկաւոր կամոնս վասն ամենայն առլնչական
պարտականութիւնս կենցաղս մերոց։ աւանդէ զնորատա-
ուղղութիւն արանց և կանանց, ծնողաց և մանկանց,
տերանց և ծառայից, քրիստոսասէր վարդա-
պետաց և աշակերտաց նոցա, քաղաքապետաց
և հպատակաց։ զի Հրամայէ և պատուիրէ մեզ
լինել լոյս աշխարհի և օրինակ առաքինութիւն
ամենեցուն։ ոչ զոք վնասել երբեք՝ այլ տանել
զամենայն վնաս և զթշնամանս Համբերութիւն։
մի՛ երբեք վառել Հրով վրէժ խնդրութիւն, այլ
Հատուցանել զբարի փոխանակ չարի։ սիրել
զթշնամիս մեր իսկ և թողուլ զմեղս այլոց, ոչ
և Հաւատով յուսամք զի Հայրն մեր երկնաւոր
թողցէ զմեղս մեր։ քեցել և բառնալ զխոր-
Հուրդս և զմիտս մեր՝ ի Հեշտասէրս կենցաղոյս,
և Հաստատել զսէր և զսիրտս մեր առաւելապէս
՝ի Հանդերձեալ կեանս երկնից։

Բայց բայ՝ ի վերոյշեալ առաւելութեանն
ասեասցանն տուրբ և զայլ գերազանցութիւն,

'ի վերայ այլոց մատենից։ անզուգական օրինակ աւանդելոյ ցն մեզոյ զերկնային վարդապետութիւն՝ արժան է խորին զարմանման և պատուոյ։ Հակիրճ և խնամտալից և ահեղ և զօրաւոր բանք նորա յաճախակեն զսիրտս մարդկան բոլորովին։ դիւրմայ և սովորական և բնական և սրտառուչ առակք նորա շարժեն զբարեպաշտ սիրտս մարդկան։ երկնային իշխանութիւն նորա՝ որով օրհնեալ իցն մարդկան՝ արժան է խորին ակնածութիւն և երկիւղածութեան։ և այս ամենայն անզուգական առաւելութիւնք 'ի մի ժողովեալ՝ յուսանեն 'ի գիրս սրբոյ առաքելոյն զանպիսի գերազանցութիւն և զարբութիւն և զպիտանութիւն առ մարդկային կենաց՝ զոր չէ հնար գտանել երբեք յո՛ և իսկ գիրս բարոյական մատենից։

Այլ արդ՝ բնական է մեզ ումեք հարցանել՝ թէ ո՞վ է հրաշալի և ճշմարտիկ անձն այն՝ որ եղև հեղինակ այսպիսի գերազանցագոյն բարոյականութիւն։ այսպիսեաց պատասխանեմ՝ թէ նա էր ըստ մեզ՝ արտաքին երևութիւնս երևելի որդի Հիւսանոյ։ որ քանակիս լնի հօր և մօր իւրում՝ 'ի հեռաւոր և յանհիշան անկեան աշխարհի մինչև 'ի ժամանակն յայն՝ յորում սկսաւ կատարել զպաշտօն վարդապետութիւնս։ Արժան է մեզ զարմանալ և ասել ըստ

աշխատարանին, ուստի՞ է սմա այս, կամ զի՞նչ է իմաստութիւն որ տուեալ է սմա. զի զօրութիւն այսպիսեաց ի ձեռաց սորա լինին։ Արդարև յայտնի է ամենեցուն՝ զի Քրիստոս ոչ էր գնացեալ ի դպրոց առ ի գտանել զուսումն, և ոչ էր գիմեալ առ տոմս վարժապետաց առ ի մշակել զմիտս իւր հրահանգութեամբ։

Ծնեալ էր նա ի խոնարհս և յաղքատին վիճակի. զարգացեալ էր առանց ուսման, առանց հրահանգութեան, առանց ոչ և իսկ նախնական գիտութեան՝ յորոյ մարթ էր նմա հանել զիմաստութիւն և զբարոյականութիւն իւր, եթէ երբեք հանդիպէր նմա ի գիտութեան և յիմաստութիւն նախնեաց իմաստնանալ։ Թերևս հնար իսկ քիչ երկտելոլ գտանել ի մտաստենագիրս առաջին Հելլենացւոց և Հռոմայեցւոց զքանի մի խրատս նմանատրս խրատուց ամենօրհնեալ Փրկչին մերոյ։ Բայց այս նմանութիւն մանաւոր ինչ քանից չէ երբեք զարմանալի. քանզի զմատեանս սուրբ ոչ էր բնաւ ընթերցեալ վարդապետն մեր հանապազ։ Զէր նորա ընկալեալ զուսումն ի հանալարանս Աթենայ կամ Հռոմայ. չունէր նա բնաւ զծանօթութիւն ատենաբանից կամ իմաստասիրաց։ Հաւանական երևի զի ոչ գիտէր նա զլեզուս այլոց բայց միայն զաշխարհաբարս. և չունէր յանձին

իւրում լաւ արտաքին կերպարանաց զգերազանցումն ինչ՝ որոյ հնար լինէր ինքեան հեշտանալ և իրաւացի հնչեցուցանել յսկանջս լսողաց զնրատս առաքինութեան և կրօնին՝ զոր ուսուցանէր յայտնապէս. չյուսանէր՝ ի կերպարանս իւր զպատիւ կամ զվնասն. այլ յանի հաստատ ընծայէր զանձն իւր խոնարհագոյն համազգեաց իւրոց ընդ հանրապէս։ Եթէ հանգոյն խոնարհութեանն գտցես զվնակս հետևողաց նոր՝ ընդ այն դու մի՛ ինչ բնաւ զարմանայցես. քանզի աշխատակիցք և աշակերտք իւր ամենեքին՝ որք յողջոյն ժամանակս քարոզութեան նորա եղեն նմա հաստատիմ օգնականք՝ և յորոյ՝ ի ձեռս զկնի մահուան նորա առանգեալ հասին վարդապետութիւք կրօնի նորին՝ էին միայն քանի մի ակնորք անանձանք և անտոհմք դեգերեալք յերեսս ծովակին Տիբերիայ. որք նման վարդապետին իւրեանց էին առանց ուսման և դպրութեան. և իբրև զնա անյաջող և անշնդունակ էին առ՝ ի դնել զկանոնս քարոզականութեան կամ հաստատել զօրէնս կրօնի։

Ողջ՝ ասա՛ ինձ ընթերցող՝ հնար իցէ՞ արդեաւ այսպիսի անձանց առանց ուրուք օգնականութեան յերիւրել և օրինադրել զայնպիսի կատարեալ և անզուգական կանոնս կենաց՝ զորս է՝ տեսանել

յանձնշուն չ գիրս սրբոյ աւետարանին։ զայնպիսի կանոնս իմն՝ որք մաքրութիւն և ստուգութեամբ և բայայայտութիւն և հաստատակայ պիտանութիւն անպանեն զանցանեն ապաքէն զբարոյական խրատուք եմ իմաստասիրայ աշխարհի ՝ի մի վայր ժողովելոյ։ Իւրաքանչիւր ոք ըստ բնական լուսոյ մտաց իւրոյ իսկ և իսկ խոստովան լինի թէ անհնար էր լոկոյ մարդկային կարողութեամբ ծնանել զայնպիսի վսեմագոյն խորհուրդս երկնային վարդապետութեան։ և չկարեմք մեք բնաւ գտանել ուրեք յաշխարհի ատ զսկիզբն կամ զծագումն հրաշալի կրօնին քրիստոնէութեան ՝ եթէ ոչ Հնարիտ համարելով զասայեալն Փրկչին մերոյ և աշակերտաց նորին՝ հաստատելանելոցայ և անպղտոր հաւատով զի վարդապետութիւնք և խրատք նոցա ողջոյն իջեալ էին յանձրուզիս աղբերէն ամենայն կատարելութեան։ այսինքն՝ յամենակալ և ՝ի յաւիտենական ԱՅ երկնից։

ԽՍՆԴԻՐ Է։

Յառաջին ժամանակս աճիւրեալ փոքրագոյնք ուսանողանն ոգեաւոր պարծեցին զԵռանն հնանոց ընդունելի երփնուեր ընդ լայնաբարձ ճառանս ոլորեալ։ Եւ ոչ յայտնագոյնս ցուցանէ զի լցեալ էին նոքա հոգւովն սրբով, և փոքրուրեա առնէին աճիւրին զնորհսօք։

Ուսանիմք մեք `ի գործոյ առաքելոյ և `ի Թղթոց նոցին, զի հուսկ ընդ հուսկ զկնի ամբարձման Փրկչին մերոյ բազմութիւն մարդկան ընկալեալ ընդդրկեցին զսուրբ կրօնն քրիստոնէութեան։ Եւ թիւ քրիստոնէից օր յաւուր աճէր և բազմանայր և զօրանայր յամենայն ժամանակի, մինչև բարեպաշտն Կոստանդիանոս հաստատելով `ի Քրիստոս հաստատիցն խարսխեաց և իբր թէ `ի հիմանց ամրացոյց զսուրբ կրօնն քրիստոնէութեան։

Զկնի քանի առուրց համբառնալոյ Փրկչին մերոյ յաշխարհէ աստի, նախ առաջին Ժողովեալ `ի մի գումարեցան աշակերտքն Քրիստի թուով իբրև հարիւր և քսան։ * Իբրև զկնի

* Գործք։ Ա։ 15։

միոյ շաբաթու երեք հազար նորահաւատք յա-
ւելան՝ ի Թիւս քրիստոնէից՝ ի միտմաւուր *։ և
այսպէս թիւ քրիստոնէից՝ ոչք յայտնապէս
մեծանան և յայտնապէս կենցաղավարէին՝ ի
միասին՝ աճեալ բազմացեալ հասանէր հուսկ Ը
հուսկ մինչև՝ ի հինգ հազար †։ Յանցանել քանի
մի ամաց քրիստոնէութիւն լայնարձակ ծաւալեաց
զնաւաւայթս իւր յաշխարհի. քանզի նորահա-
ւատքն աճելով աճէին և բազմանային մեծաւ բազ-
մութիւնք մինչև՝ ի բիւրս և՝ ի տասն բիւրս ||. և
բազմութիւնք արանց և կանանց յամենայն աւուր՝ ի
դաս հաւատացելոց քրիստոնէից նոքընձայ քա-
նէին. այնպէս զի յանցանել իբրև ամաց երեանից։
աւետարանն սուրբ քարոզեալ հռչակեալ տարա-
ծեցաւ ոչ միայն գրեթէ յամ՝ կողմանս Հռոմ
մեկան ինքնակալութեան, այլ և մինչև յաշխարհս
Գաղթիւայց և Հնդկաց։ Յայտնապէս երևի՝ ի
Քաղաքս գրելոց յատաքելոց սրբոց առ բազմա-
սպատեկ եկեղեցիսն Քրիստոսի, զի գոյին՝ ի ժամանա-
կին յայնմիկ մեծագումար բազմութիւք քրիստոնէից
՝ ի Հռոմ՝ և յայլ ամենայն երևելի քաղաքս
Յունաստանի և Ասիոյ։ Այսմ՝ ապաքէն վկայ

* Գործք. Գ. 4։ || Գործք. Եա. 20։
† Գործք. Է. 41։

ունիմք ՝ի Հեթանոսայ դասէն զԺամանակակից Հռոմայեցիս. և Պլինիոս՝ որ իբրև ուրախանամբք զկնի ամբարձմանն Քրիստի գրեայ զիւրն պատմուի՝ տրտունջ կալեալ զլնդարձակ տարածումէ հաւատոյ քրիստոնէութեան ողբայ ասելով՝ թէ այս ասելոդպողոնեն * (որոյ զքրիստոնէութիւն անուանարկ յուցանել թեկն ածէ) ոչ միայն ՝ի քաղաքս՝ այլև յանտս և ՝ի գիւղս և ՝ի դաշտս և յամենայն անկիւնս քարոզեալ հնչի ՝ի մոլորուի հեթանուայ. ողբալով աշխարհ զդիւցանուելոյ մեհենից ամայուի և լռուի, զդիւց պաշտամանց և տօնախմբութեան զխափանումն. և ՝ի զարմանս լուծեալ ասէ՝ թէ ուր ուրեմն էր յայնժամ տեսանել զգնողս զոհից և գահամանց դիցն նուիրելոյ։

Յուստինոս Մարտիրոս՝ քրիստոնեայ մատենագիր ոմն կայեալ քսան ամայ Ժամանակաւ զկնի Պլինիոսի՝ ասէ՝ ՝ի մատենի իւրում թէ՝ ՝ի Ժամանակին յայնմիկ անհամար բազմութիւք Յունայ և բարբարոսայ լնկալեալ զսուրբ հաւատն քրիստոնէութեան՝ զաղօթս և զփառաբանութիւնս

* Սրբոյն Կիւրղեղի՝ որպէս և Նոխորդի Նոցին Նոխնի հնչեանսի՝ տուգին անուամբ անուանեցն և Նկարագրին գիրքն գրիսոնեութիւնն։

յերկինս ՝ի վերս ուղերձէին Հօրն և արարչապետին Համայնից յանուն Յսի Քրիստի խաչեալոյ։ և ոչ այսչափ միայն՝ այլ և յաղագս Թախառականս և վայրենիս և անբնակս Հառապայթ լուսոյ քրիստոնէութիւն նշողեալ անգամ՝ զՀոգիս նոցին դոգեսս յերկրպագութիւն Քրիստի խաչեալոյն ամբառնայր։

Եւ այսպէս եկեղեցին Քրիստի ամ՝ ՅՄԷ սակ պայծառանայր բազմութիւն ժողովրդոց։ և յաւուրս Կոստանդիանոսի կայսեր բարեպաշտի եղեալ հասանէր ՝ի կատար բարձրութիւն և ամրագոյն հաստատութիւն։ քանզի եշխանութիւն երկրին գլխովին փոխեցաւ յօրէնս քրիստոնէութիւն։ և ընդ տերութիւն քրիստոնեայ ինքնակալն քրիստոնեայք անցին զանցին զՀեթանոսաց ։ ոչ միայն քաղաքական արտօնութիւնք և մեծութիւնք՝ այլ և բազմութիւն Թուոյ մարդկան։ զի Հեթանոսք առ բազատութիւն քրիստոնէից Թուով սակաւք էին և նուազունք։

Աղէ՛ ինձ առն ընթերցող՝ յորմիսի՛ սկսաւ Հառաջ կրօնն քրիստոնէութիւն այսքան յառաջադէմ եղեալ տարածեցաւ։ և զայսքան բազմութիւս ընդ իւրով կացոյց դրօշակաւ երկնային արքութիւն և խաղաղութիւն և երանութիւն։

Եթէ վարդապետութիւնք կրօնին քրիստոնէութիւն լինէին Տաճոյարար կրեցս մարդկան ։ եթէ

հիմնադիր այսր կրօնի խոստանայր մարդկան զիշ-
խանութիւն և զՀոխտութիւն և զմեծութիւն և կամ զՀեշտութիւն
իրրև զպարգևս դառնալոյ նոցա յօրէնս իւր ։
եթէ բանք աւետարանին հանձնիցուն զմի լու-
թիւն նոցա կամ գգուէին զմոտանձութիւն նոցին և
քաջալերս տային նախնական աւելորդ ապաշաւութիւն
նոցին ։ եթէ ուստի չէք քրիստոնէական հաստատ
լինիք ։ արք հանձարեղք կամ Ճարտարապետք ։
եթէ նախ առաջին քարոզէին զկրօնն ի Ժամա-
նակս խաւարապատ տգիտութիւն և կուրութիւն ի լե-
լիս վայրենի և բարբարոս ազգաց ։ եթէ թիկունք
լինէին քարոզողաց աւետարանին անընդդիմամարտ
զբրութիւք մեծամեծ թագաւորաց աշխարհի ։ կամ
եթէ աշակերտք մեծի վարդապետին այսր
երկնային օրինադրութիւն ծանալեալ տարածէին
զվարդապետութիւնս իւրեանց բռնութիւք սուսկալի
զինուց և յաղթանդամ զօրաց ։ հնար էր ուստիք
ապաքէն տեսանել յայնժամ զպատճառս աշ-
խարհատիւռ տարածութեան ճշմարտին կրօնիս
այսորիկ ։

Բայց սակայն հակառակ ամենայնի այսո-
ցիկ տեսանի ։ քանզի կրօնն քրիստոնէութեան
ծաղկեալ ծառայաւ և հաստատմամբ եղեալ
տարածեցաւ առանց մարդկեղէն կամ աշխարհ-
հային օգնականութեան ։ Քաջայայտ է ամենեցուն ։

զի առաջին ուսուցիչք աւետարանին յայտնի պատերազմ քարոզէին ընդդէմ յիմարութեաց և մոլութեաց և հնացեալ նախապաշարմանց և մտահանձոյ աւելորդապաշտութեաց աշխարհի. նաև յայտնի իսկ է ասի, զի վարդապետք քրիստոնէական հաւատոյ բայց յոմանց սակաւուց՝ չէին արք իմաստասէրք կամ ուսեալք. չունէին նոքա զարուեստակեալ հնարս Հարտասանութեան կամ զիմաբէական ձեռնարկս հրապուրողութեան. քարոզեալ տարածէին նոքա զվարդապետութիւն իւրեանց՝ ի լուսաւորեալ ժամանակի և՝ ի լսելիս լուսաւոր և գիտնական ազգաց. կայր նոցա առաջի մարտ պատերազմի ընդ ամենայն դպրութեաց և Հարտարիւսութեան և պերճաբանութեան աշխարհի, և փոխանակ թիկունս ինքեանց ունելոյ զշրջուն, և զեշխանուն երևելի թագաւորաց, միշտ և անդադար՝ ի թագաւորաց անտի կրէին զտառապանս և զհալածանս և զկոտանս մահուան. և չզտանէին զդուռ հանգստեան՝ ի տանջանաց բռնաւորութեան նոցա. և որք միանգամ զքարոզդայն ընդգրկեալ ընդունէին զվարդապետութիւն՝ հանդուստիսկ վշտաց և տառապանաց և մահուան լինէին ենթակայ։

Ապա ուրեմն ինձ ասա՛ ընթերցող, արդեօք ընդ այսոքիւք բազմապատիկ ձախողակ

պարագային՝ հնար է՝ երկոտասան անուն անգրագէտ ձկնորսաց գալիլիացւոց լիակոյ բնական կարողութիւնք մատչ իւրեանց տարածել սիրուն ղնոր կրօն իւրեանց յայսքան մատուցս աշխարհի ցայն վայր՝ ի յայս եկեղեցս, առանց ուրուք գործակցութեան կամ մարդկային օգնականութեան։ Ապա քէն այսպոռնակ գերբնական զարմանք սատանայ հեգամ երբէք յաշխարհի եթէ յառաջ և եթէ զկնի։ Յ՚այս է թէ ոչ երբէք եղև այսպիսի ինչ յաշխարհի։ և անհնար է մարդ կան զայսպիսի զարմանալիս խորհիլ կամ գործել։ Արդ՝ որոյ հետև ամենայն մարդիկ հնարք հակառակ

է Զատրոպոլիսեցոց աշխարհաշէն ոստոսելոցն սէոց փնտրելոյ ճառեալ և մեր աշխարհաշէն Յակոբէ պարբերգին հոսանուն պիտոյ յառնելն։ Այսուհետև՝ ի ցկնորսաց գիտելի (ոստոսելոցն) և հիրն որոշուելիք ցկանց։ և ի հոգեորն լինել որորդի՝ զկոյսս բաշխուելիք մարդկան յառուկան նիշերեցոյ ցիրեցին։ Որոց խոյցն էր մարդիանն Քրիստ։ հարքն՝ Ներսէս աշխարհն։ արդեանն՝ Հոգեայն զնորին։ Ընդն հարքին՝ երկնայնոց յոյսն։ և տարբերութիւն ոստոսելոցն։ որ ի Ծովս-մեղաց և աղբ խորհի ոչ ասա՝ ի մահ, այլ ի մահառանէ ի կենաց տարբերեցին, ոչ զցկնաս՝ այլ զբնական կենդանութիւնս։ ի՝ Մելիտէ Նորգիէ։ ԷՁ 944։

վարդապետաց չրիատանութեան ի գործ եղան։ յի՛նչ ուրեմն եթէ ոչ՝ ի գերմարդկայն հնարս եղեն նոքա ապաստան։ Ա՛հա՛ ընթերցո՛ղ քեզ յանդիման կայ ապացուցութիւն Հշմարտութեան։ զի առաքեալքն և վարդապետք բանին Հշմարտութեան ընկալեալ էին ի վերուստ զզօրութիւն սքանչելագործս և զօդնականութիւն երկնային։ որով ամենայն գործք նոցա կատարէին։ և Հարկաւ շնորհք գործոց նոցա ցուցանէին զնուսա լինելոյ հրեշտակք երկնից ծնեալք ի փրկութիւն հոգւոց մարդկան։

ԽՆԴԻՐ Ը։

Բաղդատութիւն ընտ ի մէջ Քրիստոս Մահմեդի, և ի մէջ վարդապետութեան երկուանչիւրոց սոց մեր հաստատուն։ զի կրօն վերջնոյն էր անարգելոյ ի մարդոց։ և կրօն առաջնոյն ծաղեալ էր յերկնաւորէն Աստ։

Կրօն իմն գոյ ի վերայ աշխարհի՝ որ կոչի կրօն Մահմեդի։ զոր հաստատեն բնակիչք միոյ մասին Եւրոպիոյ և բազմայ մասանցն Ասիոյ և Աֆրիկոյ։

Հիմնադիրն այսր կրօնի էր Մահմեդ։ որ կեղծէր զանձն իւր իբրև մարգարէ ոմն ուծա-

ռաք, սակայն առ հասարակ յայտ է որոյ չէն հաճմետական և որոյ ուշի ուշով քննեալ են զպատրանս այսորիկ կեղծաւորեալ վարդապետի, թէ չէր նա Աշմարիտ մարգարէ՝ այլ պատրիչ ոմն մոլեգնեալ և երազայոյզ. որ նոր օրէնս ինքնահնարս թեկնածէր հաստատել յաշխարհի. և զմօր կուրայսերաղն յիւրն խաբէութեամբ խարդասանել՝ ի վերհ։ Նա սանիկ՝ որք չէն հաւան օրինայն քրիստոնէութեան, արհամարհանօք՝ ի բայ մերժեն զօրէնս Մահմետի. և ոչ զքրիստոսասիրայս և զբնապաշտս տեսանելք անգամ չատագովս մոլորութեանց կեղծաւորին կամ հետեւողս կրօնի նորին։

Ահաւասիկ կան յաշխարհի ասոր երկուս կրօնք զուգընթացք՝ ի միասին. և չատագովք երկոցունց կրօնիցս նոյնգունակ թեկնածեն յուսանել զհասս քնիլ եածային յայտնութիւք բղխեալք յերկնից. զմին՝ ի սոյանէ գիտեմք լինիլ մատեանն խաբէութեան. և զմիւսն զառանիմք և հաւատամք եթէ Աշմարիտ օրինադրութիւն Աստուծոյ։ Եթէ այս այսպէս իցէ, արժան է մեզ տալ բաղդատութիւն ինչ առնել՝ ի մէջ հեղինակաց երկուց կրօնիցս այսոցիկ. և ակներև յուսանել ընթերցողաց զբայայայս և զգլխաւոր տարբերութիւնն՝ ի մէջ նոցա. զայնպիսի տարբերուն ասեմ՝

որ բնականապէս եղեցի ՝ի մէջ կեղծաւորեալ ուսուցչի և երկնային վարդապետի և ՝ի մէջ Հշմարտութեան և ստութեան ։ Սկսա փոյթ ընդ-դիմութիւն տեսանել զանմանութենն ՝ի մէջ Քրիստոսի և Մահմետի ՝ի մէջ կրօնիցն քրիստոնէութեան և մահմետականութեան ։

Մահմետ ծնեալ էր յերկրի և յազգ նուական տոհմէ ։ և համազգիք իւր համարէին զնա այր ոմն նախանձեալ և փառասէր ։ սա էր թոռն մեծազօր և պատուելի առն մեոյ † , որոյ ազգատոհմն էր ՝ի մեծի յարգի առ համբրէն զանակիչս մեքքայի ‡ ։ և թէպէտ Մահմետ ոչ էր ընկալեալ զբազում Հոխութիւն ՝ի հայրենի ժառանգաւորութենէ , սակայն իսկ և իսկ Հոխասէր եալ փարթամացեալ նա ամուսնանալով ընդ կնոջ ոմեմն մեծատան ։ Ինդրեանն ազնուականութենէ և կնոջն հարստութենէ առանց գերբնական օգնութիւնի իրիք՝ ինքնին բաւական էին առ ՝ի յառաջադէմ ընծայել և ծաղկեցուցանել զկրօնն Մահմետի ։ Զի՞նչ ինչ բնաւ տեղի տարակուսի , զի այր ոմն ազնուատոհմ ծնողեամբ , մեծատուն

† Որ կոչի Աբդոլ Մոտալիբ ։

‡ Գրեբեան ՝ի վերոյ բերեալն և կորնթեանեան Հռոմէական Աէրուսէ , հատ II. երես 253 ։

և բարեբաղդիկ և գոգոյես խնամութիւն կապեալ ի մեծամեծ իշխանաց երկրի իւրոյ, յուսյանելով զանձն ուսուցչէ նորաձև կրօնի և օրինադրութեան ի ժամանակի սգիտութեան և բարբարոսութեան, կարօղ էր յաշխարհաձեռն հնարիւք յինքն գրաւել զսիրտս բազմաբոլոր խուժանաց և գտանել զբազում հետևողս իւրոյ մտահանոյ մոլորութեանց։

Քրիստոս զնոսարհուն զգեցեալ յիւրում ճոնդեան. չունէր զիարթամութիւն աշխարհի և կամ զնոսամութիւն հղօրեալ և երևելի ազգականաց։ Որդի էր նա կարի աղքատագոյն ճնողաց. որոց վիճակ կենաց կարի ցածագոյն էր քան զայլոց քաղաքացոց իւրեանց։ Ազգականք և բարեկամք նորա էին նոյնպոռնակ անինչք և աղքատք. սնեալ էր նա ի կարիս աղքատութեան. և աղքատութիւն անցուցեալ զամ առուրս կենաց իւրոյ՝ չունելով բազում անգամ զտեղի քնակելոյ կամ ինչելոյ։ Ցածութիւն ճնդեան և աղքատութիւն կենաց չէին բաւական Քրիստի զօրութիւն անձին իւրոյ հաստատել զնոր ինն կրօն յաշխարհի. և չէր նմա հնար երբեք զօրինս մարդադիրս ընդունելի առնել ժողովրդոց։

Մահմետ ծառայէր պորտոյ և որովայնի՝ մանաւանդ զարմին իւր յանվայելուչ և յանարգագոյն ցոփութիւն։ Լուծանէր նա հանապազ

զայնոսիկ խառնակեցեալ օրէնսն՝ զոր ինքնին կարգեալ էր անձին իւրում։ Զամենայն Հիզն զօրութիւրոյ ի կիր արկանէր առ ի կատարել զհանձոյս անմարմնական կրկին իւրոյ։ և ասէր թէ յատկապէս հրաման եղև նմա ի վերուստ առ ի ապաստան զեղխել պահարանալ յամենայն զոլծս ցոփութեան և փափկասիրութեան։

։ Վասն ինքնոյն և ցոփութեան վարուցն Մահմետ այսպէս գրէ՝ ի հաւրանին էջ բան՝ ի բերանոյ Այշ ընդ առաւ մարգարէին։ Եւ յիշեա զառ զքանն՝ զոր ասացեր նմա, որ առամ աՀ բարբարոսաց և զառ զնորին արարքեր։ (այսինքն Զէյդայ՝ զոր Մահմետ գնեաց յաստղաւոյց՝ ի մանուանէ նորա։ որոյ զնա իւր որդեգիր և ժառանգ։ և էր նմա զՋէյնոբ կնաւանէ) յիշեա զոր ասացեր Զէյդայ՝ ի ոգահեա զչին զա առ։ զէնդ և երկեր յԱՀ։ և զառ խոսեալսդեր՝ ի մոտ զառ՝ զոր ինչ ԱՀ համբեալ էր յայտնեալ։ (այսինքն զանքան Մահմետն առ Զէյնոբ կին որդեգրին իւրոյ) և երկեար՝ ի մարդոյ, մինչ պարտ էր զեզ երկնչել յԱՀ։ Բայց յորժամ Զէյդայ խորհեալ էր զայլասերհարսդ զնոբ ի իւրոյ, և երեալ էր՝ ի մոտ արքային՝ զնա՝ մեզ հրամայեցաք զեզ ամուսնանալ ընդ արքային զնոբ։ զի մի ի մեղս ինչ դնիցեն մարդիկ ՀՀմարդ հաւատացելոցն զամուսնանալոյ ընդ հանայս որդեգրաց իւրեանց։

Քրիստոս ընդ հակառակն զամ առաքս
իւնայ իւրոց անցոյց արբուք և ամենեքեան վարուց

յոբիամնոփին եակ ոբրեեբերն երբեալ էրեն՝ է մոբ
ոբյեակել ինոռ։ Ի դա՝ պարբոս հրամանին Աբ հնա-
ղանդելոյ։ Ա՛Հ դա՝ մարգարէ, հրամայեցուր տէր ոանել
գլխանաց տոյ՝ ոբոց եռաւբ զօրիսն ի պարբիսս, և
զպալխանաց տոյ՝ զոբ ոչ յեռան տո ոտոյսս։ Նա և Իսայ
ասաւբ տէր ոանել զբանսերս հօրաւերց և մօրաւերց և
հօրեղբերաց և մօրեղբերաց տոյ՝ որ ի խոնեան ընդ տէր
՝է մեւբոյսէ։ և երբ ոյլ հաւասաց՝ել հին ոտ հա-
ճոյ երեւեցին յաւր տոյ՝ դա՝ հարբոդ էս ոանու՝ել ինա
հնաւբեան։ և զայս մանաւոր արբանոբ-ին դիցն տէր
ասմ՝ և ոչ ոյլոց ճշմարիտ հաւասացելոց։ Կոբան,
էլ 33, էջ 278 և 281։ Դարձեալ Մանեա
եբբոբեալ էր չմերձենալ հրէին՝ է նենն՝ զոբ տեսն էր
ասպանանալ։ Բայց է վերջոյ յայլ դիս եղեալ հասէր
զինն յերբմանէ անսի զերծ հայսանանել։ յաղագս
ոյոց ասելոյ ասէ՝ է հաբանին։ Ա՛Հ դա՝ մարգարէ՝
զոբ ՝ճշ հրամայեաց տէր ոանել, ընդէր դա՝ զայն
տէր արգելէր։ այսինն հասարել զկնա հանանց տոյ։
դանդի ՝ճշ է ազգմամբ և ներգոյնա։ հրամայեաց
տէր ՝ճշ զերծ լինել յերբմանց տոյ։ և ՝ճշ է տէր
տոյ։ և նա է գիտաւն և նմանաւն։ Կոբան գլուխ
66, երես, 445։

և ամբիծ կենցաղավարութեամբ։ Ո՛չ մեղաւոր՝ ի բան կամ՝ ի գործս, այլ յամի անարատ և սքանչելի՝ ի գարշութեանէ մեղաց։ Նա սատանիկ և ոխերիմ գժնդակ թշնամիքն նոր չիշխեցին անգամ զարատ ինչ գտնել՝ ի վարս կամ՝ ի կեանս մարդկային մերոյ։

Մահմետ էր այր անագորոյն և բռնաւոր և արիւնախանձ և անողորմ։

Քրիստոս էր հեզահոգի և խոնարհ և քաղցրաբարոյ և մարդասէր և գթած։

Մահմետ քարոզէր զանձնէ ոմն՝ ընդ հաղորդակցութիւնս ծածուկս ընդ Աստուծոյ և ընդ հրեշտակին գաբրիէլի, զորս չէր այլոց ոք տեսեալ կամ լուեալ։

Քրիստոս կրկնակի վկայեցաւ յերկնային ձայնից լինել Աստուծոյ որդի Աստուծոյ։ և զաստուածային վկայութիւնս զայսոսիկ բազումք ականջալուր լուեալ մեկն և պարզապէս՝ անդրէն՝ ի գիրս անցուցեալ յիշատակեցին։

։ Այսպէս գրի՝ ի հաւատոնէն առաջ հեղինեալ հաղորդակցութենէն մահմետի ընդ Աստուծոյ։ Օրինաւոր լեցեալ նա՝ որ ի խոնարհ գիրքերոյն ազգատոյն իւր՝ ի առաջի պատճառին մեծոյն՝ ի հեռատես պատճառն երանութենի։ զորոյ զգրքոպատն մեր օրինեցուք։ Կորնթ. գլ. 17։ երես 95։

Մահմեդի գալուստն յոչինչ մարգարէից գուշակեցաւ յառաջագոյն։ և յոչինչ մասն աշխարհի եկեալ ակն ունէին մարդիկ գալուստեան այսպիսի անձին՝ ի ժամանակին յայնմիկ։

Քրիստոսի գալուստն յաշխարհ պարզապէս և յոլովակի գուշակեցաւ՝ ի բազմից մարգարէից առաջին ժամանակաց։ և թանձ ասացեալ մարգարէիցն յայտ է թէ՝ինչ հայէին և ո՞չ յայլոց։ ոՀը թողցուք և զայս՝ զի մատեանք ճշմարտաբար մարգարէուեց մնային՝ ի պահպանութիւն նոցա՝ որք յայտնի հաւատի թշնամութիւն քարոզեն առ Քրիստոս և առ կրօնն քրիստոնէութիւն։ Նա և՝ ի ժամանակի ծննդեան Տն մերոյ բազմութիւք մարդկան առ հասարակ յարևելս ակնկալեալ կային՝ զի զարմանահրաշ և հնաշխարհիկ անձն որք երևելոց էր յայնժամ՝ ի վերայ աշխարհի։

Մահմեդ չիշխէր երբէք գուշակել գիրայ և զդիպուածոց ապագայից։ քանզի յայտ իսկ է թէ չունէր զշնորհս գուշակութեան և չիարէր զգալոցն հոգւոյ աչօք յառաջագոյն տեսանել։ և եթէ իշխէր անգամ գուշակել զիր ինչ՝ որ ո՞չ պատահէր այնուհետև լաստ իւրում գուշակութեամբ՝ հարկիս զհետ գայր համարեալ իւրոյ խայտառակութեան։ և հաւատացեալք իւր յայնժամ յիրմէ գենէն ընդվզեալք

զանիրտս իւրեանց՝ ի նմանէ ապստամբս առնէին։

Քրիստոս գուշակեաց զիրաց յոգոնց և մեծաց՝ որ իրաւք և Հշմարտապէս կատարեցան ըստ անսուտ մարգարէութեան նորին։ Եւս առաւել գուշակութիւն մահուան և յարութիւն իւրոյ՝ և հիմն՝ ի վերս կործանման բաղմամարդ քաղաքին Երուսաղէմի։

Մահմետ ոչ երբեք թեկն ածէր հրաշագործութիւն։ այլ ընդ հակառակն յայտնապէս անյաջող յուսայնսէր զանձն իւր՝ ի գործս հրաշից։ և բաղում անտեղի անհանձար պատճառանս գրկեալ սակս զուրկ լինելոյ իւր յայնմիկ գերբնական զօրութիւն *։

Քրիստոս՝ ըստ որում յայտ իսկ է մեզ առնեցուն՝ կատարեաց զբազում զարմանապանս հրաշագործութիւս՝ ի ըստ առնչեան և առաջի անհամար բազմութեց մարդկան։ Եւ նա խլեաց լեալ՝ հաւերց խօսիլ՝ կուրաց գնալ՝ կուրաց

* Այսպէս Մահմէտ զանձն անէծսէր ասէր զիսան ոչ կարելոյ գործել զիրսն։ Անհաւատն ասեն՝ նոքին ոչ ՍՆ առաքեսցէ նմա նշանս յերկնից՝ մի ոչ հաւատասցեն նմա։ Բայց դու պատասէր ընկալար զիսն փարսպէլ լինել և ոչ հրաշագործ։ Կորան. գլ. 17. երես 55։

տեսանել և մեռելոց անգամ յառնել ՝ի գե-
րեզմանաց իւրեանց։

Մահմետ յընթացս առաջին երկոտասան
ամաց քարոզուէ իւրոյ ՝ միայն զառաքելութիւն և
զհաւանողական բանս՝ի կիր արկանէր ՝ի հրապար-
քախօսութիւնս իւրում. սակայն իբրև և կարի սա-
կաւս յաջողեաց նմա գառնել հետևողս դէնին
իւրոյ։ Յընթացս երից ամաց միայն զչորեքտասան
դէնապաշտս շահեցաւ. և յընթացս եօթն ա-
մաց ոչ կարաց գարձուցանել ՝ի կրօն իւր աւելի
քան զուրթսուն երեք արս և զուրթսուն կանայս։

Քրիստոս փրկիչն մեր և աշակերտք իւր
յայնքան ժամանակս շահեցան զհազարաւորս և
զբիւրաւորս հոգիս ամենալոյս հաւատոյն քրիս-
տոնէութեան. նա աւանիկ և զկրօնն քրիստոնէական
ամենուրեք տարածեցին ընդ մեծագոյն մասն Ասիոյ։

Մահմետ ասէր Հրէից և Քրիստոնէից
և Հեթանոսաց թէ նա ոչ զայլ հաւատս ուսու-
ցանէր նոցա՝ եթէ ոչ զոր ինչ ուսուցին նոցա
յառաջագոյն նախահաքք իւրեանց՝ Աբրահամ՝
Իսմայէլ՝ Մովսէս և Յիսուս։ Այսպէսնակ
հրապուրողական ձև բանից հարկիւ շրջել
ունէր զվիստս նոցա՝ ի կողմն դէնին իւրոյ։

Քրիստոս քարոզէր մարդկան զայնպիսի
կրօն՝ որ երկնային՝ որ յայտնապէս հակառակ

զինէր մեռանողոյ կարծեաց և նախապաշարմանց
հաբեալ։ և ի հիմանց կործանումն պատրաստէր
աղջոյն կաղմուածոյ խաւարաբերբ աւելորդա-
պաշտութեան հեթանոսաց։

Մահմետ քննումն մատուցանէր մեղկութեամբ
և մարմնասէր յօժարութեամբ աշակերտաց իւրոց։
Ցայսմիկ ջերմագոյն երկրի՝ ուր ամենայն կիրք
մարդոյ սատակութեանէ եռանդեան բորբոքին՝
թոյլ ետ նա հետեւողաց իւրոց բացարձակ ապա-
րատան՝ ի հետեւութիս մարմնապարարս զեղխիլ
պաճարանալ։ Դրաման ետ նա իւրաքանչիւր ոմեք
ի հետեւողաց իւրոց առնուլ զչորս կանայս
ամուսնանալն և ըստ հաճոյից արձակել զնոսա
ապահարզանաւ երիցս անգամ՝ ||։

Քրիստոս ի նմին իսկ երկրի և ի մէջ

|| Բազմանուագն եղև խոյժ հրապուրել սա զենն
մահմետն, որ հնչեցնէր օրէնս հոգեպարտ հնոտողաց
իւրոց յաստանն։ Եւ եղէ երկնչիցէ ընդ ոչ վարիցէ զբա-
զում ինչ որպէս ազգնոնա զուրմն ամենանոցն ընդ զոչ
կանայս ցանկալն յոլս ցնոր։ և սուտ զիրանս կամ
զկերս կանայս և ոչ սուրեալ։ Եռարան գլ՝ Ը։ երես
92։ Դարձեալ զյոլոս սուտ։ կարգ։ զուտ երեցս
զկանայս ցերս զրկեալ։ և զպա կամ զահեցիցէ զնոսա
մարդասիրութեամբ։ և կամ զրկեցիցէ զնոսա ոչ

նոյին իսկ մարմնասէր ապարատան մարդոց աբ-
գելեալ հրաժարեցուցանէր զՏեառնէրն իւր ՝ի
շնութենէ և ՝ի պոռնկութենէ և յամենայն տեսակաց
մեղսամած գործոց ապիրատութեան։ Եւ նոյա
ամենեցուն զկալ և կապ միանգամ։ և արգել
նոցա արձակել զկանայս իւրեանց ՝ բայց միայն
վասն մեղայ շնութեան։ Բայց որ գերագոյն է քան
զամենայն ՝ պատուիրեաց նոցա անպղտոր պահել
զաչս և զխորհուրդս իւրեանց։ և նուաճեալ
հեղձուցանել զառաջին սկզբնական խլրտիւն
մեղսագործիւ ցանկութեց ՝ի խորս հոգւոյ իւր-
եանց։ Նա և ասաց թէ որ հայեցի ՝ի կին մարդ-
առ ՝ի ցանկանալոյ նմա ՝ անդէն իսկ և իսկ շնա-
յաւ ՝ ի սրտի իւրում։ և Ճշմարտութեամբ զդուշացոյց
զնոսա ՝ի մեղայ ասելով թէ ՝ ոչ ոք բայց միայն

Սակայն էլ ուրիշ ինչ զատանին ՝ որ չեռապահանքը
՝ի նոցանէ։ այսուրեք են պատերազմք այ։ զոյ չկ
պարտ ինչ զանց առնել զնոսա։ Իսկ ենէ այն որ-
դորդանացամ արդիւնիս գլխնի է-ը ՝ ոչ հարկ վերստին
շատ օրինացն զնա առնուլ ինա-ենան ՝ մինչև հինն
ամառանայի ընդ առն մի-սոց։ Բայց ենէ երկրորդ
այլն նորա նա զնա արդիւնիցն ՝ ապրանքն հինն հարկ
հրկին ամառանանալ ընդ առաջնոյ առն ի-գրամ։
Կանոն։ գլ։ Ե։ երես 41։

արդարն և ուղիղն սրտիւ կարէ արժանանալ տեսութեան Աստուծոյ։ Արդարն՝ զնաւտ պատերազմի յարդարէր նա լնդ ամենայն մեղսաւիթ կրից և շարագրգիռ յօժարութեաց մարդկան։ և յատկապէս պատուէր տայր ամենայն հետևողաց իւրոց կասիլ հրաժարել՝ ի մարմնաւոր մեղաց անտի՝ որոց մարթ էր դիւրաւ յաղանութեան ածել զհոգիս իւրեանց։ և ոչ այսչափ միայն՝ այլ և թողուլ զհայր և զայր և զեղբարս և զքոյր և զտուն և զկալուածս և զամենայն ցանկալիս և զսիրելիս իւրեանց։ և առեալ զխաչ իւրեանց՝ ի յուսոյ՝ երթալ զհետ նորա։

Մահմետ նովին մերոյատեալ դիտաւորութեամբ կամելով կաշառօք երկրաքարշ հեշտանաց պատրել զմարդիկ առ՝ ի ընդդրկել զդէն իւր մոլորեցուցչի խոստացաւ ամենայն հետևողաց իւրոց պարգևել նոցա զհեշտութիւն մարմնաւորս դրախտի։ ուր՝ ասէր՝ առարկայք ցանկասիրութեան իւրեանց լինելոց էին գրեթէ անթիւ և անհամար։ և թալմուդք գեղատեսիլ կանանց և աղջկանց՝ որոց անզրաւ տեսէր առոյգութեան և գեղեցկութեան՝ մեշտ և հանապազ պատրաստ լինէին առ՝ ի կատարել զհանդոյս մարմնոյ իւրեանց։

† Տէր զնոսա ի ներքոյոյն զքրիստ որոյ սրբոյն ի

Քրիստոս ուստից աշակերտաց իւրոց՝ հանել՝ ի մուտս միանգամայն զամենայն զյոյս վայելելոյ զհեշտալիս և զհաճելիս մարմնոյ՝ և

նիւթապէս երանութիւն մարմնաւոր բարեաց յուսելն։ Բարեբերեալն արքունատունն պետութեանն Այ։ բնակիչքն՝ ի դրախտի փափկութեան։ բազմութեան յանուշակ զարդարանս ոսկւոյ և պատուական քարանց։ ամենայնիւ չգիտեն հոգեցին յերեսս մեռելոց։ Ընդ ծերանալն պատանի՝ պատուհասիցս՝ երկնչի բարեբերեալն՝ ուներլով՝ ի ցեսս երանեցն գլխոցն և գլխոցն և զմարմանս լցեալս գենուով։ գլուխ նոցա ոչ յուսեցին ըմպելով զգինին։ և ոչ քնաս արքենայցն հաճ՝ ի բանականութիւն ունկցին։ զպարս զարդարեալս ճաշակիչքն ասասպան։ և ինչ պէսպէս խաղոց զարդարեալ լեցեալ՝ ի գլուս նոցա։ Եւ՝ ի զրախտն անդ բարեբերեալ գնացին ազգին ընկերակիցքն նոցա։ և հրամայեցին զարդս նոցա սանդրոն և մեծ ալօթ երանեցն։ ոչ ինանման մարգարտաց ծածկեալց՝ ի ներքս ասրքեալ։ և զայս երանութիւն վայելեցին վասն բարեբերեալ գործոց երանեցն։ կարարան գլ. 56։ երես 414։

Ահա ոչ ընկերցուցեալ նէ զիարդ մահուան զիարս հանեալ երանեցն հրամայեալ յուսով վայելելոյ նոցա զբարեբերեալս ցանկալիս պարգևս ասասկայնէ՝ ի հանդերձեալս հանան երանութիւն։

հանդերձեալ կեանսն։ և հաւատեաւ ա-
նայ նոցա թէ ՝ի յերկինս արք ոչ կարեն
առնուլ զկանայս ՝ի կնութիւն։ և կանայք ոչ
կարեն արանց լինել ըստ ծիսի աշխարհի։
բայց խոստացաւ հետևողայ իւրոց զմաքուր և
զերկնային և զհոգեզուարճ բերկրութիւն։ զոր
ակն ոչ տեսս և ունկն ոչ լուաւ և ՝ի սիրտ
մարդոյ ոչ անկաւ։

Մահմետ ոչ միայն կաշառակուր որսայր
՝ի դէն իւր զմարդիկ խայծիւ երկրաքաշ հեշ-
տալեայ ։ այլ և այլոլ ինն գոգոյս հղօրագոյն
Ճանապարհաւ թեկն ածէր զիւրն մոլորուն իբ-
րև զՃշմարիտ օրինադրուն հաստատել յաշ-
խարհի։ քանզի յետ ՝ի հեշտալիսն աղաստան
լինելոյ՝ զբռնութիւն և զսաստկութիւն և զրակրծան
սպառնալեայ բուռն հարկանէ։ Զդէն իւր տա-
ղանեայ յաշխարհի զօրութիւն իւրոյ ստուերի։ և
չէ ևս էր նորա ապաստան եղեալ՝ի հարուածս
սրոյ ։ դէնապաշտ իւր էին գոգոյս դուշնաքեայ
և սահմանութիւն։ Նա գոյացեալ յանձին իւրում
միանգամայն զգոլս մարգարէի և պատերազմողի
և զօրավարի և յաղթականի։

Դէն և սարսափ յաղթուեցեալ նորա ձեռն
ընդ ձեռն զուգաձիգ ընթանային։ այնպէս զի՝
ոչ երբեք դէնին մոլորուն զանազայլ մի փոխէր

առանց ի սրոյն գտանելոյ զգնութիւն։ Զորս-
վարուք իւրով անձամբ անձին մէնայ նա զուրն
անհնարին պատերազմունս. և յինքեան յանձն
էառ ինքնին և ձեռնտուուք իւրոյ փոխանորդաց
միջամուխ լինել ի վտանգաւոր ձեռնարկս պա-
տերազմական։ Կամ՝ մահ տաժանական կամ
գենապաշտութիւն յանդիման կայր թանձրամիտ
հեթանոսաց. և հարկապահանջութիւն կամ
գենապաշտութիւն յանդիման կայր հալածական
Հրէից և Քրիստոնէից։

Քրիստոս զոչինչ հնարից բուռն ետար
առ ի դարձուցանել ի կրօն իւր զմարդիկ
նոի. քարոզէր նա զլարդապետութիւն իւր հաւա-
տաղական ձեռնարկուքք և յոյդոյանօք և հրա-
շագործուքք և մարգարէուքք։ Ցինքեաց ողջոյն
քարոզութիւն իւրոյ ոչ եղև նա ապատան ի զորութի
զինուց՝ այլ ի զորութիւն Հշմարտութիւն միայն.
զոչինչ սուսերնիւթական ի կիր էարկնա՝ եթէ
ոչ զսուսեր հոգւոյ՝ այսինքն զբանն Աստ։
Զանէր նա զրօրս. չանէր նա զլեգեօնս զորաց
առ ի մատանչել վասն ընդունելի առնելոյ մարդ-
կան զիւրն օրինադրութ։ Նա էր իշխան խաղաղ-
ութիւն. և զնաղաղութիւն քարոզէր համբրէն աշ-
խարհի։ Առանց իշխանութեան և առանց օգնական-
նութիւն և առանց բազմամբոխ հետեւողաց՝ թայլ

միայն յերկոտասանից աղքատիկ աշակերտաց, առանց գործոց հրապուրողութեան և սատակութեան կամ բռնութեան՝ յաղթական հանդիսացան նա՝ ի վերայ նախապաշարմանց և գիտուն և կրօնին երկրի խրոյ. ՝ի ձեռն Հշմարտութեան յաղթեացնա նախնական ուղղամտանց և կուսակցութեց և տեղերդապարչութեան և խմաստասիրութեան և խմաստութեան և իշխանութեան հանճարեղն Հռոմէական ինքնակալութեան։

Մահմետ առաւել քան զամենայն գոնն գործէր առ՝ ի կրթել զհետևորդս իւր՝ ի մարդս զինուորութեան. և վառել զինել զնա զամենեսին եռանդեամբ բռնաւորութեան և արիութեղութեան և վրէժխնդրութեան և հալածանաց։ Յաճախակի անդադար յորդորս հնչէր ասելն՝ ի լսելիս նոցա զինել մարսն չիլ վասն կրօնին ԱՅ. և առ՝ ի քաջալերս տալ նոցա նկրտիլ՝ ի գործս զինուորութեան, խոստանայր նոցա զվնծանմն ոսատիս և զդարգևս և զվնծոնա՝ ի դրախտին։ Քանզի ասէ՝ ի կուրանին այսպէս. ոչ միանգամ չարչարեցան վասն իմ և անկան՝ ի պատերազմի, բարձիցի՝ ի նոցանէ արդարև զնամ մեղս նոցա. և ածիցի զնոսա հաստատուն՝ ի դրախտ մի ուռոգեալ շուրբք գետոց. արժանացին նոքա պարգևացն ԱՅ. և պարգևք ԱՅ գերազանցագոյն են քան

գՆին *։ Զայս գործ պատերազմի ընդդէմ անհաւատից բազում ուրեք ուսուցանէ Մահմետ յիւրում կուրանին. այս արիւնայեղց վարդապետուն կարի հաճ և հաւան երևեցաւ դենապաշտից. որք անուանեն զսուրն քանոնի երդնելոց և գծոխոց. և զկաթիլ մի արեան հոսեալ ՝ի փառս Աստուծոյ ՝ի իւրեանց վարդապետուն՝ կարի ընդունելի ոգտարաց համարին Աստուծոյ. նա և ասեն, թէ առաւել բարեգոյն է պաշտպանել զինուք զսահման երկրի մահմետականաց զգիշեր մի մի այն, քան թէ զամիս երկուս ՝ի պահս և ՝ի ժուժկալութիւն կերակրոց զմարմնոյ նուաղեցուցանել։ † Սովին դիւրին է քեզ ընթերցող տեսանել զանհնարին ամենութիւն զաղանական՝ զոր այս հոգեկորոյս մոլորուն ոնի ստեղծանել՝ ի հոգիս մարդկան, բորբոքելով զմենայն կատաղի և դժնդակ կիրս նց քինախնդիր եռանդեամբ. և առաղաղեցիս. ոչքան բազմութիւք վայրենեաց և բարբարոսաց սանձարձակ ապարասան եղեալ յայսմիկ արիւնռուշտ վարդապետութիւն՝ ՝ի հուր և ՝ի սուր մաշեսցեն զազգ մարդկան աներկիւղ։

Քրիստոս առանդեաց աշակերտաց իւրոց

* Կորան, գլ. Է. էջ 91. և գլ. Ը. էջ 242։
† Սէլ՝ ի նախ. Կորանին, գլ. Ցա. էջ 189։

զօրէնս և զխրատս միանգամայն հակառակս
օրինաց մոլորեցուցչին։ Կալ և կապս եդեալ ՝ի
վերայ կրից նոցա՝ պատուիրեաց նոցա ՝ի բաց
կալ հրաժարիլ յամենայն տեսակաց բռնութիւն
և դժնդակութիւն։ Մինչ յաշակերտաց իւրոց՝
որ հանեալ էր զսուր իւր ՝ի պաշտպանութիւն
անձին՝ հրամայեաց Քրիստոս դնել զայն ՝ի պա-
տեանս վերստին. ըստ այնմ թէ՝ դարձ՝ զսուրդ
քո ՝ի տեղի իւր. զի ամենեքեան՝ որք զսուրս առ-
նուցուն՝ սրով անդեանցին †։ Ո՛չ կամեցաւ
Քրիստոս հնար բարկութիւն իւրոյանել յերկնից
՝ի վերայ գլխոյ Սամարացւոյն՝ որք ո՛չ ընկալան
զնա ՝ի գիւղ իւրեանց. քանզի ասէ յաւետարանին
թէ՝ Որդի մարդոյ ո՛չ եկն զոգիս մարդկան կո-
րուսանել՝ այլ կեցուցանել։ Զխաղաղութիւն
թողում ձեզ՝ զխաղաղութիւն զիմ տայ ձեզ։ Մի
զոք խուսիցէք՝ և մի զոք զրպարտիցէք։ Եղերութիւն
գթածք՝ որպէս և Հայրն ձեր գթած է։ Երանի
ողորմածայ՝ զի նոքա զողորմութիւն գտցեն ‡։

Ապա՛ն՝ պատուոյ դենապատչութիւն եղև

† Մաթ. ԺԸ. 52. Յովհ. ԺԵ. 11։
‡ Ղուկ. Ի. 56. Յովհ. ԺԲ. 27։ Ղուկ.
Զ. 14. Մաթ. Ե. 39։ Ղուկ. Զ. 36։ Մաթ.
Ե. 7։

այս · զի առաջին հետևողքն Մահմետի եղեն արք անագորոյնք և դժնդակք և աւազակք և մարդասպանք և ասպատակաւորք։ Եւ զսրին հակառակն, զայսպիսի սրտուղ եւ աշխարհն օրինադրութեան քրիստոնէական · զի առաջին հետևողքն Քրիստոսի եղեն արք հեզք և հանգարտք և անմեղք և խաղաղասէրք · որոյ ամենեքեան ճանաչեցեալ վարքն օրինակ առաքինութեան լինէին այլոց։

Այլ արդ՝ բաղդատելով մեր զհեղինակս երկուց կրօնից այսոցիկ ընդ միմեանս՝ յայտնապէս կարացեալ ցուցանել ընթերցողաց զերկնային ճշմարտութիւն մերոյն և զերկրաւոր ստութիւն միւսոյն · արդ արժան է մեզ և սակաւուք խօսել զսրբազան մատենից երկուց կրօնից այսոցիկ · այսինքն՝ զԱւետարանէն և զկուրանէն · և դուք՝ զ՝ տես ընթերցող զշարմանալի տարբերութիւն՝ որ գոյ ի միջի նց։ և թարուք քննեալ նկատեա՛ զճշմարտուն Աւետարանին և զստութիւն կուրանին։

Մահմետ ընդ նմին և հետևողք նորին բազում դրուատանօք գովեն զկուրանն վասն գերազոյն գեղեցկութեան և մաքրութեան և վայելչութեան օճոյն · զոր համարին նոքա իբրև հրաշք անհնարին · առ որով փոքրագոյն գրին զհրաշս յարուցանելոյ զմեռեալս։ Բայց սակայն համարեա՛ թէ

գերազանց իսկ ոՀ կուրանին, զորմէ տարակոյս
յուսանեն տակաւին բազում արք գիտնականք։
եթէ գեղեցկութիւն ոՀոյ և շարադրութիւն համարելի
իսկ իբրև ապացոյց ՀԱծային ազդեցութեան, ուրեմն
զգիրս Պղատոնի և Քսենոփոնտայ և Կիկերոնի
և Կեսարոսի և այլոց բազմայ անզուգական մատե-
նագրայ շարադրելոց ՝ի բարբառս այլոց ազգայ
արժան է նոյնգոնակ համարել ըստ օրինակի
կուրանին գրեալ սքանչելօք երկնային ազդե-
ցութիւն։ Բայց արդարև այսոքիկ գեղեցկութիւք
ոՀոյ՝ փոխանակ յուսանելոյ զկուրանն իբրև ըզ-
մատեան երկնային՝ ստեղծանեն ՝ի միտս մարդոյ
զանհնարին կասկածանս զՀշմարտութիւն նորին։
քանզի սեթևեթեալ բանք նորա յայտնապէս
երևին լինիլ ստութիւք յօդեալք ՝ի միասին ՝ի
Ճարտարութիւն մարդկեղէն մտայ։ որով Մահմետ
ջանայաւ յաիշտակել զսիրտս հետևողաց իւ-
րոց, և զմայլեցուցանել զթանձրացեալ միտս
նոցա արուեստիւք Ճարտասանութիւն և կախար-
դութիւն սեթևեթ բանից։ և այսպիսի հնարիւք
յաջողեաց նմա ծածկել ՝ի հետևողաց իւրոց
զունայնաբան աղՀատանս վարդապետութեան իւրոց,
և զնանրութիւն դէնին իւրոյ։ Այսոքիկ ընթերցող՝
են հնարք խաբէութիւն և մեքենայք ստութեան։
Աւետարանն չունի կարիստութիւն այսպիսեայ։

ատելի է աստուծոյ պերճախօսութիւն մարդոյ։ և ծաղկումն քրիստոնէական կրօնին յաջողեցաւ և յաջողի լոկով զօրութեամբ Հաւատոյ և լոկով զօրութեան Աստուծոյ։ Եւ ես թէպէտ և եկի առ ձեզ եղբայրք՝ (ոչ սակայն Պօղոս գերեցիկս ասէ զանձնէ) ոչ ըստ առաւելութեան իմաստութեամբ՝ պատմել ձեզ զվկայութիւն Քրիստոսի։ Եւ քանզի իմ՝ և քարոզութիւն, ոչ պատիւ բանիւք իմաստութեամբ այլ արդեամբք Հոգւոյն և զօրութեամբ։ Զի հաւատք ձեր մի իցեն իմաստութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ։ *

Բայց սակայն՝ թէպէտ և՝ ի դենապաշտից դէպ բաղանց համարեսցի ոչ՝ շարադրութեան կուրանին, սակայն բանք և վարդապետութիւնք նորին կարի անարգագոյն երևին առ բաղդատութեամբ բանից օրինադրութեան Աստուծոյն։ Պատմական բանք նորին են անհանճար և անախորժ և ձանձրալի և նոյնաձայն և անօգուտ։ լի են նոքա արդարև անհաճոյ կրկնութեամբք, անմիտ և անհեթեթ առասպելօք, դոյզնաբերայ և տարտղալի և գոյ-գեսս անպարկեշտ անհամեստ խրատուք։ Որք թողցուք և զայս՝ զի գրեթէ թախանձ է կուրանն՝ ի նորագիւտս՝ ի նորաձևս՝ ի նորաձևս յանսովոր բանից։ քանզի

* ՝՝ Կորնթ. Բ. 1. 4. 5։

զգլխաւոր մասունս նոր գոլայեալ է Մահմետ
'ի սրբազան գրոց հնոյ և նորոյ կտակարանաց, և
այսոքիկ գողնք այնքան խանգարեալ այլակերպեալ
տպեղայեալ եղեն անյանձն լալի 'ի ձեռս մոլորեցուցչին (որ խանգարէ և ապականէ զայն
ամ՝ յոր մանգամ լինի ձեռնամուխ) մինչ դժուարաւ կարես ճանաչել զայնս լինիլ նոյն գործք
և դիպուածք՝ զորս այնքան փնտրեցանօք և բերկրութեամբ ընթեռնուս 'ի գիրս ճշմարտանչ մատենից։

Զսորին հակառակին բանք աւետարանին
են յամենայն հակիրճ և պարզ և նորոգիչ և
զօրաւոր և օգտաւէտ և նախապատիւ։ խրատք
նորա են կենդանագործաւոր։ կանոնք բարոյականութեան
են կատարեալ։ խնամաքն են վեհամիտն։ նպատակքն
են բարեմասիկ և պատուական։ օրինադիրքն
ահաւոր և պատկառելի։

'Ի կուրանի անդ Մահմետ անդադար
պարծի ընդ արժանաւորութեամբ և ընդ երևելի
գործս իւր։ և պանծանօք խօսի զանհնարին
գերազանցութեամբ մատենին իւրոյ։ Ցաւետարանի
անդ ոչ ուրեք է տեսանել զգովեստս գրեալս
յաւետարանչաց եթէ 'ի վերայ ինքեանց և եթէ
'ի վերայ գրոց իւրեանց։ Նա առանիկ՝ և զառաքինութիւն և զզօրութիւն երկնաւոր վարդապետի իւրեանց ոչ նկարագրեն որոշակի։ և ոչ

յիշատակեն զայս գերազանց և երևելի ինձ ձևով։ Ո՛չ ի բանից և ի դիտողութեց պատմ՛ այն Քրիստոսի, այլ միայն ի գործոց և ի քարոզութեց նորին կարեմք ի մի ժողովել զանհամար շնաշխարհիկ գերազանցուն ամենօրհնեալ ճաշակսն անձին նորա։ Ահա՛ քեզ ընթերցող ակն յանդիմանն յուսյանի հակադրութիւն ողջախոհ փառաւորութեանն Աստուծոյ ընդ անապարհ ունայնասիրութեան խաբեութեան։

Ի կուրանալ անդ Մահմեդ մի ՝ի միոջէ մանրապատում նկարագրել զերանութիւն և զանազան հանդերձեալ կենաց, յուսանելով ըստ ամ պարագային նկարագրութեանն զարհաւիրս դժոխոց, և պատմելով արտաքոյ կարգի զամ բերկրութիւն դրախտի։ Նա զայնպիսի իրս նկարագրէ՝ զորս չէ հնար և չէ պարտ նկարագրել։ և բանք զարհուրանաց կամ հեշտալեաց արտաքոյ կարգի պատմեալք ի նմանէ՝ անպատշաճ են արդարև մտադրութեանն և վերծանութեանն մարդկան։

Յաւետարանի անդ Քրիստոս պատմէ մեզ զերանութեց և զանազանաց հանդերձեալ կենաց համառօտ և անորոշ նկարագրութեամբ։ որ վերաբերի հաւատարապէս յամենայն գործս մարդկանն։ և հզօրեղ ներգործութեամբ ազդէ ի սիրտս նոցա զյոյս կամ զերկիւղ։ բայց ո՛չ զորին կուրանին

ծանրաբեռնէ զմիտս նոցա չափազանցութեամբ հեշտալեաց կամ զարհուրանաց։

Բայց առաւել քան զամենայն պոյ ի մէջ կուրանին և առեստանին ևս գերագոյն նշան զանազանութեան և անմիմանութեան։ Մահմետ յինթացս վարդապետութեան իւրոյ յամենայնի անձկանօք վարանի առ ի պաշտպանել զանձն իւր յընդդիմամարտ հակառակորդաց, առ ի անբաւիւք առնել զինքն վասն զուրկ լինելոյ ի զօրութենէ հրաշագործութեան. և առ ի զատապուլել զվարս իւր պատասխանատուութեամբ ամենայն մեղադրական բանից զոր կարծէր թէ հակառակորդք իւր ունէին խօսել ընդդէմ իւր։ Խաբեութեան ընթերցող յարաժամ զայսպիսի հնարից բուռն հարկանէ յերկիւղէ։ Աբ պատրէ և ստասաք յարաժամ կասկածանաք երկնչին ի յայտնութենէ ստոյ իւրեանց։ միշտ պատրաստ են նոքա նախազգուշութիւն պիւրեանց ստութեանն իբրև զճշմարտութիւն ցուցանել. փոյթ են նոքա յառաջագոյն խորհել զներհակս թշնամեաց իւրեանց։ և նախապատրաստ պատասխանատուութեամբ ի բաց հերքել զընդդիմամարտս նոցա։

Ճշմարտութիւնն ոչ երբեք այսպիսեաց կարօտանայ մարդկեղէն նախազգուշութեանց։ սակայն իսկ և ոչ երբեք հնարս հնարի յառաջագոյն։

Ճաշագոյ այսորիկ չէք ուրեք տեսանել յաւետարանի զՀայթայթանս մարդկային Ճարտարութիւն։ Սրբազան աւետարանիչքն ոչ երբեք վարանս վարանին, ոչ երբեք աշխատ լինին՝ ի բաց հերքել զպատրողական ձեռնարկութիւնս կամ մերժել զընդդիմութիւս հակառակորդաց։ Պատմեն նք մեկն և պարզապէս զոր ինչ միանգամ գիտեն լինիլ Ճշմարիտ և արժանահաւատ։ Զպատմութիւն բանիկ իւրեանց ինքեանք չունին բնաւ զտարակոյս. և ոչ երբեք կասկածեն թէ բանքն պատմեալք յինքեանց եղիցին՝ ի միտս այլոց տարակուսելի. սակն իրի թողուն զգործն՝ զորս պատմեն՝ Ճշմարտութեան իւրեանց վկայել. և հուչակել տարածեն զպատմութիւն իւրեանց յաշխարհի առանց պաշտպանութեան այլոց վկայից. զի պատմութիւն ճշմարիտ տնօրէնութիւնքն ինքնին տարածեսցի՝ ի ծագս աշխարհի՝ որպէս և եղեն իսկ՝ բնական զօրութիւն և անընդդիմամարտ Ճշմարտութիւն իւրով։

Սրդ՝ այսոքիկ են երևելի հանգամանք Մահմետի և դեռնին իւրոյ՝ ի միոյ կողմանէ, և Քրիստի և կրօնին իւրոյ՝ ի միւսմէ կողմանէ. և ապ դարև չէք ուրեք տեսանել կամ լսել քան զայս հզօրագոյն և զարմանալի հակադրութիւն։ Զհուսկն ասայիս, կրօնն քրիստոնէական յամ՝ գլխաւոր պարագայս գլխովին հակառակի և ներհակ երևի

արդեամբք մահմետական գէնին մոլորութիւն։ Եւ
քանզի յամենայն կողմանէ Մահմետ Համարի պատ-
ճիչ ոմն և մոլորեցուցիչ, պատշաճ է մեզ եզրա-
կացուցանել զի Քրիստոս յամենայնի հակառակն
Մահմետի՝ յամենայնի հակառակ եղև մոլորութեան
պատճէն։ և յամենեցունց ընդունի իբրև Աշմարիտ
որդի Աստուծոյ։ Ի կուրանին Մահ-
մետի բացայայտ տեսանեմք զամենայն նշան խա-
բէութեան և ստութեան։ յԱւետարանն Քրիստոսի չիք
ուրեք տեսանել զնշան ինչ մարդկերէն հնարիս։
այլ ընդ հակառակն, լի է այն սքանչելիք ամ-
նշանաք և բանիւք երկնային Աշմարտութեան։

ԽՆԴԻՐ Թ։

Ի գուշակութենէ սասցելոց ՝ի մարգարէին սասելոյ որ հաստատեցան յանէն երկնի մերոյ յյանապէս երևեալ զնա էր Մեսիոն՝ որոմ անկանելոյ ապահովին Հրեայք. և զի նա ելն յաղխարհ երկնային գնօրհնութենէ սա ՝ի լինել երկրել և ապրել ազգի մարդկան։

---

* Մեսիայ Թարգմանի ՝ի մեզ օծեալ. այսինքն է անձն որ կարգեալ յատուկման կամ ՝ի պատիւ կամ ՝ի գործ ինչ դերագոյն. քանզի սովորութիւն էր արևելեան ազգայն առաջնոյ օծանել իւղով սրբով զանձինս կարգեալս ՝ի պատիւ իշխանութիւն. և մանաւանդ զթագաւորս և զքահանայս և զմարգարէս։ Յայսմանէ բառս Մեսիայ նշանակէ զանձն յառաջագոյն կարգեալ և

* Մեսիոյ է բառս Եբրայեցի, որոյ Հրեայք հուշն զերկրին ակնարկեն զգուշակելն յաճախօրն մարգարէին սասելոց. յայսմանէ սովորութիւն նոցա և գրչագրելոց սա հոսարակ ոչաս բառիս հուշն զերկրին ազգի մարդկան։ Բառս Մեսիոյ սովորութիւն նմանապէս և ՝ի բարբառս ազգաց մահմետականաց. որ բառս անգամ պանուն Քրիստոսի ոչաս անուամբ յորմէրքէն։

խոստացեալ յԱՅ լինիլ մեծազօր փրկիչ ազգին Հրէից և ազատիչ ընդհանուր ազգի մարդկան։ Բառս Քրիստոս † զնոյն զօրութիւն ունի ոչ և Մեսիայն։

Արդ՝ ասծախօս մարգարէքն գուշակէին զՄեսիայէ՝ թէ եկեսցէ նա յառաջ քան զպակասիլ իշխանութիւնն ի տանէն Յուդայ. այսինքն է՝ յառաջ քան զբառնիլ տերութենն Հրէից ||. և ըստ կանխասաց գուշակութեանն մարգարէիցն Քրիստոս երևեցաւ յաշխարհի յառաջ քան զժամանակն զոր՝ յորժամ՝ Հրէայք կորուսին զիշխանութիւն իւրեանց և անկան ազգալինն ընդ մեծազօր տերութիւն Հռոմայեցւոց։

Նա և՝ գուշակեցաւ՝ ի մարգարէիցն սքոյ, թէ եկեսցէ Մեսիայն յառաջ քան զկործանումն երկրորդ տաճարին Երուսաղէմի։ Քանզի ասի՝ ի մարգարէութեանն Անգեայ. Եւ միանգամայն շարժեցից զամ ազգս. և եկեսցէ ընտիր ընտիրն ընչից ամ ազգաց, և լցուցից զտունդ զայդ փառօք՝ ասէ տէր ամենակալ։ Զի մեծ եղիցին փառք տանդ այդորիկ վերջինդ քան զառաջինն՝

† Քրիստոս է բառս Յունական և նորգմանի օծեալ. և զնոյն զօրութիւն ունի որպէս բառս Մեսիոյ։ || Ծննդ. խբ. Ի0.

ասէ տէր ամենակալ ‖։ Հաճեմատ Հշգրիտ մարգարէութեան Քո երևեցար յԵի յառաջ քան զաւերումն քաղաքին և զկործանումն տաճարին Երուսաղէմի ՝ի զօրացն Հռովմայեցւոց։

Սոպաքէն՝ մարգարէացաւ Դանիէլ՝ թէ եկեսցէ Մեսիան ՝ի վախճան 490 ամաց զկնիք վերստին շինուեն Երուսաղէմի • որ կործանեալ աւերեցաւ յառուրս գերութեան Հրէից ՝ի բաբելոնէ • և չարչարեալ սպանցի յապերախտ ազգէն Հրէից • և զկնիք այնորիկ քաղաքն և տաճարն Երուսաղէմի կործանեսցի և եղիցի աւերակ։։ Եւ յաղագս այնորիկ՝ ՝ՇՇ ուղիղ և արժանահաւատ մեկնութեամբ բառիցն՝ յոր ինչ ժամանակի և դիցէն զսկիզբն 490 ամաց՝ յաւարտ այսոցիկ ամաց անկցի անվրէպ ժամանակ մարգարէութեան Քրիստի • և քաջայայտ է ՝ի պատմութենէ նախնեաց՝ թէ զնիրդ միանգամայն քաղաքն և տաճարն Երուսաղէմի քանդեալ աւերեցան ՝ի Հռովմայեցւոց զկնիք քանի ամաց խաչելութեան և մահուան Մեսիայի։

Նա՛ աւանիկ՝ գուշակեցաւ ՝ի մարգարէիցն սրբոց՝ թէ Քո կատարեսցի զբազում մեծամեծ հրաշագործութիւնս կենցաղագուտս • ըստ այնմ թէ՝ յայնժամ՝ աչք կուրաց բացցին՝ և ականջք

‖ Ա՛ՀԷՈՅ • ԿԼ • Է • 8 • 10։ ‖ Դան • ԿԼ • Է • 26։

Բ. Ի. Ա. Ա. Ա

այս ամենայն կատարեցաւ զարմանալի տարածումք աւետարանական Հշմարտութեան և հաստատումք քրիստոնէական հաւատոյ ընդ ամենայն ծագս աշխարհի։

Հուսկ ամենայնի, մարգարէքն բազում ինչ մանրամասն Հառեալ գուշակեցին զմեծազօր փրկչէն՝ որ գալոցն էր ազատել զաղգ մարդկան ի գերութենէ չարիս։ այսինքն՝թէ ճոյի նա ի կուսէ և եղիցի ի տոհմէն Յուդայա ի ցեղէն Դաւթի։ ծնունդ նորա եղիցի ի բեթղէհեմ՝ քաղաքի։ և հեծեալ ի վերայ իշոյ՝ մտցէ խոնարհ յաղթանակաւ ի քաղաքն Երուսաղէմ։ կրեսցէ նա զտուսալանս և ծանօթ եղիցի տրտմութեաց։ վաճառեսցի երեսուն արծաթոյ։ գանեսցի և կուփարեսցի և թուքս յերեսս՝ի գանողացն ընկալցի։ ընդ մեղաւորս համարեսցի։ այսինքն՝ խաչեսցի ոտ և եղէն իսկ՝ի մէջ երկուց աւազակաց զլեղի և գքացախս յարբումն՝ի թշնամեաց ընկալցի։ որք անօրէնք և տիրանենդք գխաչելեան այսպեսեսցին և ծիծաղեսցին զնովաւ վասն յուսալոյն՝ որ ՅԱՇ առ՝ի փրկել զնա։ զնուորքն՝ի վերայ հանդերձից նորա զլիճակս արկցեն։ ի մեծամանոյ թաղեալ ամիսոփեսցի։ և առանց ապականութեան մարմնոյ վերստին՝ի գերեզմանէ յարիցէ ॥։ Որոյ՝ ինձ ասա ընթերցող՝ ոչքան ստու-

գաղոյն Հշմարտութիւն կատարեցան այս ամենայն մանրամասն գուշակութիւն յանձն Քրիստոսի՝ ըստ կանխասացութիւնն զանազան մարգարէից։

Աղէ՝ ասա զի՞նչ պատասխանատուութիւն ունիցիմք առ այսոսիկ։ Ահա՛ քեզ յայտ յանդիման պատմեցան առելի քան քսան մանրամասն բանք գուշակուեց. յորոց բազումք են զարմանալի և անդը քան զբնութիւն մարդկան. զայսոսիկ ամ գուշակեալ պատմեցին մարգարէքն առաջինք իբրև 700 ամաւք յառաջ քան զծնունդն Քրիստոսի. և մարգարէութիւնքն նոցա իսկապէս և անվրէպ կատարեցան յանձն Քրիստոսի և ի անօրէնութիւս նորին։ Ո՞չ ապաքէն այս ամ արժանի է մեզում խորին զարմացման և մտադրութիւն։ Արդ՝ եթէ ոք այլ ընդ այլոց զուրբ գրոց խորհիլ համարձակիցի, հնար է նմա թերևս յերիս ենթադրութիւս զվեռ իւր յանձեցուցանել. այսինքն՝ կամ կատարումն մարգարէութեան այսոցիկ էր պատահական ինն զուգընթացութիւն դիպուածոց և պատահմանց, կամ մարգարէութիւնքն այսոքիկ գրեցան զկնի կատարե-

‖ Եսայի գլ. Է. 14. Մատ. Ն. Զատ. Բ. 9. Եսայի ԺԷ, 3. Զատ. Ճ. 12. Եսայի Ա, 6՝ Եսայի ԺԷ, 12. Սաղ. կՁ. 22. Սաղ. Բ. 9՝ 19. Եսայի ԺԷ, 9. Սաղ. ՃԺ. 10.

լոյ անօրէնութեան Քրիստոսի։ Եւ կամ զՏուգանն առաջի, այսրիկ ամենայն էին Հշմարիտ մարգարէութիւնք՝ զոր մարգարէքն բազմաց յառաջ քան զկատարումն նոցա գուշակութիւն մեզ ասանդէին։ Եւ գուշակութիւնքն նոցա իրօք և Հշմարտութիւնք կատարեցան զկնի յանձն Քրիստոսի։ Արդարև Ադամ է նամ կանոնայն հաւատականութեան և հակառակ ամենայն կարծեաց և ենթադրութեան, եթէ ոք լոկով դիպուածով զայսպան զարմանալի իրս միանգամայն սկսարկել կարիցէ, ոչ բաղադրելն իրօք և Հշմարտութիւնք կատարեսցին զկնի։ Եւ այն ոչ եթէ վասն բազմաց և ի բազում անձինս, այլ վասն միոյ և ի միում անձին, ոչ և եղեն իսկ։ Թէպէտ և բազումք ի մարգարէութեանցն այնպէս էին, ոչ թէ օտար թուէին պատահիլ անձին միոյոյ։ քանզի յոլովք ի բանիցն գուշակութեց ոչ երբեք յառաջագոյն կատարեցան յանձն միոյ միոյոյ։ Յայսմանէ կարես ուսանիլ լինելոցիդ՝ զի գուշակութիւն մարգարէին ոչ եղև լոկով դիպուածով։ Եւ կատարումն գուշակութեանն ոչ եղև ի պատահական զուգընթացութիւնէ գործոց և իրաց։

Արդ՝ քաջայայտ է ամենեցուն զի մարգարէքն ոչ գրեցին կամ ասանդէին զմարգարէութիւս իւրեանց զկնի կատարման առ ի նոցանէ լուցեալ գուշակելեաց։ քանզի զ յաղագս գալստեան Աստուծոյ

նութեան Քրիստոսի տեսանելի գրեալ ՝ի գիրս եղեալս բազմօք յառաջ քան զկատարումն նոցին իսկ երայ՝ այսինքն ՝ի գիրս հնոց կտակարանացն սրբոց . ոչ թողլոյր և զայս՝ զի նոքին իսկ Հրէայք՝ ոխերիմ թշնամիք Քրիստի և նոցին կրօնի՝ խոստովանին թէ մարգարէութիւնքս այսոքիկ զերս այժմ ակներ՛և տեսանեմք՝ անվրէպ և անսփոփոխ գրեալ կային յայնոսիկ գիրս ճշաշունչ մատեանիս ՝ բազում հարիւր . ամաց յառաջ քան զգալն Քրիստի յաշխարհ ։

Նա՛ ասանիկ՝ նոքին իսկ գիրք ճշեղէն մատեանիս կային միշտ ՝ի պահպանութեան նոցա ։ այսինքն՝ թշնամեացն քրիստոնէութեան, որք անատարակոյս մեծաս խնամով և գգուշութիւն զգուշանային զի մի խարդախուն մարդկան սպրդեսցէ յայնս զիրս կամ զբանս յաջողակս անօրէնութեանն Քրիստի ։ Նոքին իսկ Հրէայք էին մերս գրպահք և դիւանապետք ։ Գիրք մարգարէութեանն էին ընդ պահպանութեանցս . և նոքա առ հասարակ ընթեռնուն զնոյն գիրս յամ օրինակս հնոց կտակարանաց ՝ ոչ և մեք ընթեռնումք՝ յամ օրինակս մերոյ ճշաշունչ մատենիս ։ Բազում խնամով ջանային նոքա այլ ընդ այլոց մեկնել զիմաստս նոքին իսկ մարգարէութեան . սակայն ոչ երբեք իշխեցին ՝ի հարց և ՝ի փորձ արկանել զգաշա-

կուռ մարգարէից։ և ոչ կարային ածել զստուերս
ինչ ստուերք ի նոցա։

Այս ուրեմն պալազակս երևի զի այս
ամ մարգարէութիւնք են ստոյգք և Հշմարիտք։
ամ բանք մարգարէիցն ակնարկելով Հային յանձն
Քրի մերոյ վրկչի։ և ի նա միայն կատարե-
ցան իրօք և Հշմարտութ։ ոչ և բազում դարուք
յառաջ քան զնորին ծնունդն ի մարգարէիցն
արբոյ մեղաւանդեցան։ Եւ քանզի՝ բայ ՅԱՅ ոչ
ոք ունի զշնորհս նախածանօթուն ժամանակաց
և դիպուածոց, ուրեմն արժան է մակաբերել զի
ՅԱՅ միայն առել Հաւերցին մարգարէքն ողջոյն
զյաղագս Քրի գուշակուիս ամենայն։ և հար-
կաւ զՀետ գայ, զի ըստ կանխասաց բանիցն
մարգարէից Քրի էր անձն այն՝ զոր Աստ բազում
ժամանակօք յառաջ եղեալ էր ի մտի առաքել
յաշխարհս առ ի լինել փրկիչ և կեցուցիչ և
ազատիչ ազգի մարդկան ի գերութենէ հոգեկո-
ծոյս սատանայի։

է Նին էջ յոթթամ ընէջ ի նե՝ (այսինքն Հոգին
ի մարդուքն) լուսէին պարգամ և մարգարէու-
նոյնն։ լոկ յոթթամ լիանէր ինն, ոչ այնպէս Ճշգ-
մարտութեան ինքն։ Սարգ։ ա Պնդք։ Ճառ է։

ԽՆԴԻՐ Ժ։

Գուշակութիւնն առանցքեալք ի գրչէն մերմէ յայտնապէս ցուցանեն, զի զարերանքեալք նա զնոցանօր նոխանմանութիւնք ապառնի դիպուածոց. որ պատճառք ինչ Աշ ի ոչոց լցեալ եցն Հոգւոյն որբով։

Ապաքէն փրկիչն բայերեւապէս և բազում ուրեք գուշակեալ զմահ իւր և զհանգամանս մահուան իւրոյ. ասայ նա յառաջագոյն, թէ քահանայապետքն և դպիրքն զնա ի մահ դատապարտեսցեն և մատնեսցեն զնա հեթանոսաց. այսինքն Պիղատոսի և Հռոմայեցի զօրականաց, առ ի այպանել և կռփահարել և ի խաչ հանել զնա։ մատնեսցի նա ի ձեռս տիրամենագ անօրինաց և մատնի զնա իւր եղբայր Յուդաս իսկարիովտացի. ամ աշակերտք իւր թողեալ զնա միայնակ փախիցեն ի նմանէ ի բաց. և մանաւանդ Պետրոս երիցս ուրասցի զնա ի միում գիշերի։ Նա և մարգարէացաւ թէ վերստին յարիցէ ի գերեզմանէ յերրորդումն աւուր. և զկնի ամբառնալոյ իւրոյ յերկինս, առաքեսցէ զՀոգին սուրբ յերկնից ի վերայ առաքելոյ իւրոյ. որք և երկնչին զօրութենէ նորին կարասցեն կատարել զբազում հրաշագործութիւնս։ Նոյնգունակ և գուշակեալ

բազում ինչ յաղագս տարածումն աւետարանիս
յամ ծագս երկրի։ և վասն անցեալն որք անցանելոց
էին ընդ բազումս յաշակերտաց իւրոց։ պատմեաց
նա յառաջագոյն զընդդիմութիւն և զհալածանս՝ զորս
կրելոց էին ՝ի Թշնամեաց ՝ի քարոզելն իւրեանց։
ծանոյց նա և յառաջագոյն թէ որպիսի մահուամբ
Պետրոս մեռանիցի։ և ասաց թէ Յովհաննէս կենդ-
անի մնասցէ մինչև Երուսաղէմ աւերման եղիցի։
ծանոյց նա և յառաջագոյն՝ զի թէպէտ և բա-
զում ընդդիմութիւն և հալածանս ածիցեն ՝ի վրայ
առաքելոցդ։ սակայն և այնպէս Աշխարհաթիւն
աւետարանին սփիւռ տարածեսցի յոլորտս աշ-
խարհի։ և հուսկ ամի՝ գուշակեաց գկործա-
նումն Երուսաղէմի՝ պատմելով մանրամասնմի լսո-
մի։ զի՝ զամ պարագայս աւերման նորին՝ ի քան և
չորսերորդ գլխին սբոյն Մատթէոսի։ յերեք-
տասներորդ գլխին սրբոյն Մարկոսի և ՝ի քան
և մեներորդ գլխին սրբոյն Ղուկասու։ արդարև
այնպէս Աիշդ և անվրէպ եւ մեզ զնկարագրուն
այսր դիպուածոյն՝ մինչ զի՝ որ միանգամ ընթերցցի
զանցս կործանման այսր քաղաքի յիշատակեալ
յայլոց ժամանակակից պատմչաց՝ իսկ և իսկ ծա-
նիցէ զի՝ երկչէին մերոյ զաւծային նախաձանաթուն և
զվրուն անչիր տարագայիս։ Զարմանահաւատ
զանվրէպ և զվանրամանն պատմութիւն պաշարման և

կործանման քաղաքին այնորիկ 'ի Հռովմայեցւոց՝ ունիմք գրեալ 'ի Յովսեպոսէ յԵբրայեցի պատմչէ այսր ժամանակի. Նա՝ նկարագրուն այսր վարեմն պատմչի՝ որով յիշատակէ զայս սոսկալի և զարհուրելի չարին՝ այնքան մերձ ընդ մերձ հանձայն երևի մարգարէութեան Փրկչին մերոյ, մինչ զի մարթ էր ուրեք կարծել (եթէ ոչ գիտէաք թէ Եբրայեցի էր Յովսեպոս) թէ զնոյն իսկ պատմութիւնն գրեալ էր ուրմն քրիստոնէի առ 'ի բայայայտել զՔրիստոսի մարգարէութեան։

* Յայսմ վայրի 'ի գրէպ հոմարելմ յեղուպանել դանդ կործանման պաճարին Երուսաղէմ՝ ծոդիպոդ ոսրոնոյ ղոյն 'ի գրոյն Յովսեպոսի. որ ասանոնք լինելով գլուխ ծոյն՝ այսպէս ընդելուն գեղեցիկ 'ի նոր գրուելոյ պատմութիւն։ Սոր յայնժամ ոմն 'ի պրդանանցն ոչ ոպոնելով ուրուք հրամանի, և ոչ զանգիտելոյ յայնպէսի յանօրուելոյն, այլ յաճախին էմն ապրանքն զարձեալ՝ յընկերակցէ երկրի երկչոտացեալ, 'ի վառելոյ նեղելոյն յանդուգնելոյ զկրանն ոչ 'ի լուսամուտն ասկիոպա, ուստի 'ի սենեկաց կամրջոյ զարձ զարձուն 'ի հրեանոցին կամանէ մուտ էր։ Իսկ 'ի երկրորդել երոյն՝ ազատակ հրդեցն ելեալ ելանելոյ երկչոտացեալ, և յօգնելոյն հասանելոյ գեալոյին. զի ոչ այնուհետև էնանոյ

Եւ դու տես ընթերցող՝ զի զորութիւն գիտելոյ զապաշխարս չէ տուեալ մարդոյ՝ այլ պահի Աստուծոյ։ ապա ուրեմն զորութիւն մարգարէական հոգւոյն է յայտնի ապացոյց՝ թէ Քրիստոս եկեալ էր Յիսուս յաշխարհս։ և յաճուատ ունէր զայս ընդհանուր մարգարէական հոգւոյ։

[illegible] ։ և ոչ զորութիւն [illegible] վրիպանէին։ . . . . Իսկ էիբեր է [illegible] մարդոն ։ զոտորուէրն [illegible] ոչ լսել հնդիսարարդ՝ եւ զի զոյսոնզ-[illegible] յորդորէր զէ հոր արդանիցէ։ Եւ [illegible] [illegible] զէնել յոյս էր օրինէրոյ՝ այլ [illegible] և [illegible] զամ [illegible] [illegible]։ և անիրեր [illegible] [illegible] [illegible] [illegible]։ Եւ [illegible] [illegible] [illegible] [illegible]։ և [illegible] [illegible] [illegible]

ԽՆԴԻՐ ԺԱ.

Հրաշագործութիւնքն Տէր մերոյ յաւուրսն ինչ գալ ընդառաջ երկնային զօրութեանց։

Թէպէտ և՝ ի նախընթաց խնդիրն գոն բազում հզօրեալ ապացոյցք երկնային քարոզութեան Քրիստի և աստուածային Հաւատոյ կրօնի նորին, սակայն արդարև անքննին տնօրէնութեանց նէ մեծապէս վկայեն զարմանալիքն և արժանահաւատ հրաշագործութիւնքն՝ զորս կատարեաց նա՝ ի սկզբանէ մինչև՝ ի վախճան քարոզութեան իւրոյ։ Բժշկեաց նա զաստիկ և զբազմամամնակեաց հիւանդութիւն. ետնա կաղայ գնալ. եբաց նա զաչս կուրաց և զականջս խլոց. եհան զայս պիղծս և մոլեգնս. գնայ՝ ի վերս երեսաց ծովուն. կերակրեաց զհինգ հազարս քանի մի հանակաւք և ձկամբք. և զմեռեալս անգամ՝ ի գերեզմանաց յարոյց՝ ի կենդանութիւն *։ Զայսոսիկ ամ հրաշագործութիւնս կա-

* Վասն անձամբ Էր հրաշէնն Քրիստի փոյթ ոչ ունէր հոգեղութիւն փնտրն Հնոգիսլաւոյն մերոյ։

Կայրեալ լուսով պայծառացոյն.
զլոյսն որ չերեկնից ալօտ ոչ առն։
Զհայրն ի ներսոյ խուզեալ լուսն.

առաքեալն՝ ի լոյս առնելեան առաջի բազմութեան ականատես վկայից. յորոց յաչս անհնար էր պատիր ցուցանել զիրան զայնոսիկ՝ զորս յայտնապէս աչօք իւրեանց տեսանէին. և կարէին քննել լրիւ ստուգել զճշմարտութիւն հրաշիցն՝ որոց էին անձամբ ականատեսք։ Եւ եթէ ոք մտադրութիւն ընթեռնուցու զինքնեորդ գլուխն ասեսարանին սրբոյն Յովհաննու, իսկ և իսկ տեսցէ զի ականատես վկայքն փրկական հրաշագործութեան քննելոյ իմանային հետաքննին ստուգութիւն զիսկուի սքանչելեացն Քրիստի. ոչ երևի ի նշանաւոր օրինակէ առն՝ ի ծնէ կոյր եղելոյ. որոյ աչքն բացեալ լուսաւորեցան ճաճանչաշաղ բժշկութեամբն Քրիստի։ Ահա՛ քեզ ընթերցող՝ գործ արժանի խորին մտադրութեան և զարմացման և յարգութեան։

Արդարև՝ ճշմարիտ է զի հրաշագործ-

Ե՛ ի մարմնի անմահացան։
Հոմերց լեզուս բարբառեցան.
ընդ ոչ խօսուիցեցան։
Ձեռաց կարկամաց պարդեցան.
և գօսացեալք ասողեցան։
Իբր երկիրս հաղ ընկեցան՝.
անդամալոյծք հանգչեցան։

՝ի Յհ գլուխն, յեղ 2:17։

ծուէքն լինելով անտարը և արտաքոյ կարգի բը-
նուն՝ հղօրեղ վկայութիւք պիտոյ են առ՝ ի ար-
ժանահատատ լինայելոյն։ զայնպիսի վկայութիւս
ասեմ՝ որք հղօրագոյն իցեն քան զհատարակ
դիտուածս յիշատակեալս՝ ի գիրս պատմութիւն։
բայց սին օրինակի և բաղում՝ հղօրագոյն և
նորաքանչ վկայութիւնք գտնուս՝ ի հատատատել
զհրաշագործութիւս Քրիստի։ զայսպիսի վկայութիւս
չէ հնար ումեք տեսանել յայլ մատեանս։ և
այսպիսեօքն լիովին հնար է հատատատել անպա-
յոյիւ զՔրիստոսութիւն անզուգական հրաշագոր-
ծութիւնն Քրիստի։

Բայց՝ ի բազմութիւն մարդկան՝ որք ակա-
նատես եղեն այսոցիկ հրաշագործութեանց և՝ ի
զօրութիւն հրաշիցն դարձան ի հաւատս քրիստո-
նէութիւն՝ գոյին յայնմ ժամանակի արք երկոտասանք
կոչեցեալք Առաքեալք։ զայնպիսի արս ասեմ՝
որոց սուրբ և արդար էին սիրտք։ և որոց միտք
զէրծ էին՝ ի նախապաշարմանց։ զոսոս Փրկիչն
մեր ընտրեաց լինել իւր հանապազորդ ընկերք և
բարեկամք։ զոսոս գրեթէ միշտ ի իւր շրջեցոյց
և՝ ի հանապարհորդութիւս իւր արար ինքեան
աշակերտս։ զոսոս՝ ի միասին լուան զքարոզութիւս
իւրեանց վարդապետին։ զամ հրաշագործութիւս
նորին ակամատես վկայեցին։ և սպասաւորիս

եղեն նմա յամ տեսարանս կենաց և մահուան և յարութիւն նորին։ և ոչ երբեք բաժանեցան 'ի նմանէ մինչև 'ի ժամանակ ամբարձման նորա յերկինս։ Ընդ այսոքիկ բաբուռք իմանալ կարէին զՀմարտուն հրաշիցն զորս վարդապետ նոցա կատարեաց առաջի աչաց նոցին։ հնար էր նոցա վկայելով ասել, թէ զիարդ այր ոմն կոյր 'ի ծնէ յանկարծակի եդիտ զլոյս աչաց՝ միով բանիւ բերանոյ փրկչին մերոյ և կամ լոկով հպեցմամբ փրկական աջոյն յաչս կուրին։ հնար էր նոցա ասել թէ զիարդ նա 'ի լոյս տոնչգեան գնաց՝ 'ի վերայերեսաց ծովուն առանց ընկղմելոյ և առանց ոմեալոյ զնեցուկ ինչ երևելի։ հնար էր նոցա և վկայել թէ զիարդ այր ոմն Ղազարոս անուն՝ զոր քաջ Հանաչէին և գիտէին թէ մեռեալ էր չորեքօրեայ և 'ի գերեզմանի եդեալ՝ վերստին 'ի մեռելոցէ յարութիւն 'ի կեանս փոխեցաւ լոկով զօրութիւն այսր բանին Քրիստի՝ Ղազարէ ելի՛ արտաքս։

† Տէր զիարդ գեղեցիկս խօսի Հանգիստն զյոգնեալսն Ղազարոս։

Ա՝ զարարս էրբեկոմն։
զինքն 'ի յերկնից յոյսնէ բանին։
Մէ հաստիր գործըս կրկին։
ճշմարտին և մարդկային։

Ընդարձ՝ սուրբ լոյն անկարելի էր այլ
ընդ այլոց իմանալ զՀայրն զայսոսիկ և զայլ
գործս Հանդերձն սոցա Հրաշափառս և զարմանա-

Աբրահամ-ելոնն ըսկզբելն.
և ասաց երդեր ասել զմարմին։
Այսու ՝ի ելեանս մարդելոյին.
ցուցանելով զկուսասին։
Լուսն ՝ի հոլել զանուն նորին.
՝ի գծելոց գՀրեշտակ ըսարին։
Լըսել հասելն ՝ի պապանին.
և փալ արարաւ զոյժ ընդ ցոյնին։
Այսու ՝ի ելեանս ածոյին.
Եցոյց խաւնեալ հայելինին։
Քանզի ցոյնն ՝ի էր անմարմին.
այլ ՝ի մարմնոյ խառն ընդ բանին։
Ո՛չ ՝ի յերկնաւ էածանելով.
՝ի յերկնէն էրս հրելով։
Որ ըստ մեզոնս արարաւելով.
ոչ զմեռելն հուլելով։
Այլ ՝ի յերկնաց հոգելոմ.
անձամբաբար զ Եղելոմ։
Կրկին հըրեց ՝ներգործելով.
ակարգածքար էամոց գործոմ։

՝ի Յ՝ արդեն ։ յէջ 229։

լիս։ Արդ նոքին իսկ առաքեալքն վկայելով ասեն, թէ ինքեանք ականատես եղեն այսոցիկ և այլոց զարմանաքանչ հրաշագործութեանց՝ զոր վրկիչն մեր իսկապէս կատարեաց։ Եւ թէպէտ և Հրէայք էին նոքա ազգաւ, և միտք նոցա լցեալ էր նախապաշարմամբք ընդդէմ Քրիստի և արտաքին կերպարանաց նորին՝ որ բոլորովին ներհակ էր կերպարանաց ակնկալեալ Մեսիային իւրեանց՝ սակայն և այնպէս տեսանելով զնոցին հրաշագործութիւնս նորա՝ զամ նախապաշարմունս իւրեանց՝ ի բաց եդեալ եղեն աշակերտք Քրիստի։ Յաղագս դառնալոյ իւրեանց՝ ի հաւատս քրիստոնէութեան, և մանաւանդ սակս բայայայտ քարոզելոյ աշխարհի զՀշմարտութիւն հրաշագործութեանցն և յարութիւն, կրեցին նոքա զամ բազում զանհնարին աշխատանս և զնեղութիւնս և զչարչարանս և զհալածանս՝ զորս հնար էր անգամ մատուցանել մարդկայինս բնութիւն։ և՝ ի վախճան ամենայնի, դառն կոտանօք մահուան չարաչար բարձան՝ ի կենաց աստի։ յայսոցիկ ամենայն տառապանաց և՝ ի մահաւութիւն կոտանաց հնար էր նոցա դիւրաւ Հողոյսիկ, եթէ միայն ասացեալ էր նոցա թէ Քրիստոս էր որդի Աստուծոյ, թէ ոչ երբէք կատարեալ էր նորա զհրաշագործութիւնս և ոչ երբէք յարուցեալ էր՝ ի մահուանէ։

Բայց սակայն զայս ոչ երբէք նոքա առել կամեցան. և առաւել լաւ համարեցան մեռանել քան թէ զայսպիսի բան ինչ ի բերանոյ իւրեանց հանել։ *

Ոչ ապաքէն վարք կենայն առաքելոց յանդիման առնէ մեզ զՀզօրագոյն ապայոյց Ճշմարտասիրութեան նոցա և զստուգութեան հրաշիցն Քրիստի. զայսպիսի ապայոյց ասեմ՝ զոր հնար է մարդոյ յառաջ բերել մարդկեղէն վկայութիւք։ Արդարև՝ համաձայն և անընդդիմանալի վկայութիւնք այսպիսեաց երկոտասան վկայից՝ ըստ ամենայն կանոնայն վկայութեան՝ բաւական են հաստատել զՃշմարտութիւն ամենայն անտեսանելոց և հրաշալի գործոց՝ զոր հնար իցէ գործել յայսմ աշխարհի։

Ապաքէն՝ եթէ բանսարկուին յաւիշտակեալ էր զմիտս նոցա զօրաւոր փորձութիւք, եթէ կաշառաբեկ էր արարեալ զնոսա որպէս զՀետևողս Մահմետի ցանկասէր հեշտութիւք,

* Ոչ որ երբէք զանձն իւր ի մահ մատնեցաւ առ ի պատիւ Աստուծոյ կամ Պատուիրանի և կամ Ապաստանի։ Բայց սակայն ուրեմն հաստատուն ոչինչ ինչպէս ինքեանք ազգիկոնեանական հաստատութիւնց։ Բէնիամին է. 2։

կամ՝ ոչ՝ զՅուդաս խակարիովտային արդարեալ-
բութիւն, թերևս չէր ուզիք զարմանալ՝ եթէ
յամառեալ մնային նոքա գրեթէ առ ժամանակ
մի՝ ի նախապատրաստ ստութիւն։ Բայց սակայն
արժան է խորհել զի փոխանակ առաջի առ-
նելոյ նոցա զայսոսիկ մարմնաւորական հեշտու-
թիւն, վարդապետ նոցա հանապազ քարոզէր՝ ի
լսելիս նոցա և նոքա վարժեալ ծանեան փորձիւ,
թէ դառնալով՝ ի հաւատս քրիստոնէութեան՝
զոչինչ կարէին շահիլ։ այլ ընդ հակառակն
պարտէին թողուլ զքանեալ զնամ՝ իրս աշխարհի։
սմին իրի և անհնար էր նոցա ընդգրկել զկրօնն
քրիստոնէութեան վասն աշխարհային իրաց։ եթէ ոչ
վասն երկնային հրաշագործութեան Քրիստի՝ յորոց
յաղթահարեալ խոստովանեցան զՀնարաւորութիւն
կրօնի նորին։ Արդարև անմիտ լինէին նոքա
միանգամայն, եթէ կամաւ յանձն առնուին
զայսքան տառապանս և զթշուառութիւս վասն
Հնարիտ քարոզելոյ զայնոսիկ իրս՝ զորս ինքեանք
իսկ գիտէին լինելս։ ոչ թող զուք և զայս
զի իւրեանց իսկ կրօնն ուսուցանէր նոցա զպատիժ
պատուհասի վասն այսպիսի ապիրատ խաբէութեան
եթէ յաստի կեանս և եթէ՝ ի հանդերձումն։
Մի թէ սովորն են մարդիկ այսպէս ոտնակոխ
առնել զերջանկութիւն իւրեանց և զկեանս և-

ամել՝ ի վերայ ինքեանց աչօք բայօք զայսպիսի սարսափելի չարիս առանց իրիք պատճառի և առանց ո՛ և իցէ օգտի և շահու և համբաւոյ և կամ՝ բերկրութե։ Ընթերցո՛ղ լուեալ ե՞ս դու երբէք զայսպիսի գործս արտաքոյ կարգի և բնութե։ Լուեալ ե՞ս դու արդեօք թէ արք ոմանք երկոտասանք արժանատիւաւք և բարեհամբաւք եղեալ իսկն՝ ի մտի իւրեանց ասել՝ զի անձն ոք՝ ի մերձակայ տեղոջ յարուցեալ իսկ զոմն՝ ի մեռելոց։ մինչ քաջ գիտէին թէ ո՛չ էր պատահեալ այսպիսի ինչ բնաւին։ հնարաւոր իցէ՞ նոցին իսկ երկոտասանիցն միակամ հաւանութիւն զանձինս իւրեանց՝ ի մահ մատնել՝ քան թէ խոստովանել թէ սուտ է զոր ասացինն։ Արդարև յարարչութիւն աշխարհի մինչև յայդ ոչ երբէք պատահեցաւ այսպիսի գործ տարօրինակ և անառոր։ Հակառակ է այս ամ՝ ֆորձոյ և հաւանականութե։ և ինքնին լինելոյ է այս հրաշք ինչ մեծագոյն քան զորս տեսանեմք յիշատակեալ յաւետարանի անդ։

Ապա ուրեմն Հշմարիտ է (այնպէս Հրշմարիտ՝ ոչ հնար է ամ իրաց լինիլ ըստ մարդեղէնն վկայութեան) զի Քրիստոս կատարեաց զհրաշագործութիւնս Հշմարիտս և ստոյգս։ և քանզի չէ՞ հնար կատարել զհրաշս առանց զո-

բուն Աստ՝ ապա ուրեմն յայտ է թէ Քրիստոնէը զղջութիւն Աստ և կրօն իւր բոլոր սաստ յաճախելոյ աղբերէ։

ԽՆԴԻՐ ԺԲ։

Յարուցէք Տէր մերոյ ի մահուանէ կապարբերլոպէս ճշմարտի յայտնապէս վկայուցէ։ Եւ էնոյ և հաստատուցէ ածուցէ նորա և ճշմարտուցէ երկնի նորա։

Յարութիւն Քրիստի ի մահուանէ է մի ի հրաշիցն յիշատակելոց յաւետարանի անդ։ զճշմարտութիւն սորա ապաքէն յուսալ արդէն ի ի նախնեաց հաստատեալ։ խօսելով մեր զայլոց հրաշագործութեանց վրկչին մերոյ։ Բայց և այնպէս այնքան գերազանցագոյն է այս քան զայլ ամ հրաշն և զայնքան մեծախորհուրդ հետևանս ունի յինքեան, մինչ զի կարի արժան դատեցաք զայնմանէ խօսիլ որոշակի յաւետարանին հատուածի։

Գրեալ է ի սուրբ աւետարանին թէ զկնի խաչելութեան Քրիստի, Յոսէփ արիմաթայեցին խնդրեալ ի Պիղատոսէ զմարմինն նորա՝ եդ ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ի վիմի։ և թաւալեցոյց կաւարիչ դրան գերեզմանի վիմ մի

մեծ։ Եւ առ ՝ի խափանելոյ զՀնարս նենգուն՝
Հրեայքն մատուցեալ առ Հռովմայեցի քաղա-
քապետն առ Պիղատոս, խնդրեցին ՝ի նմանէ
զգումն մի զօրականաց առ ՝ի զգուշանալ զերեզ-
մանին. գուցէ՝ ոչ առցին եկեալ աշակերտքն

‡ Տէր ողորմի՝ նմոստոլից քառեւտ Հնոգհոլին զքա-
զրոնն Քոի ուինոգնէ։

Որ երկնից զնորհ քաշխէ,
զնա յոլովէ պարգեւ խնդրէ։
Եւ զոր փառաց լոյսն ծածկէ.
մարդուս հիասօր զնա պարտ։
Բանն՝ որ զքառն ընտրեցանէ.
՝ի քարքառոյ բանից լոյս։
Որ զանազ բուրս զիմաստոց զնորհէ.
հոգոպէսօրն ոչ պարքերէ։
Զաչս՝ որ զանդուներս նկարէ.
յոլովէ ցեռօր հիպուցանէ։
Զառանցն որ լուսալ զրքանց լոյս.
զիպուած մահուան խիստուցանէ։
Զցեռն որ զերկնքն հասարակ,
երկրագունդ պարսաւանդէ։
Զարքն որ ընդ օդս զերթեալ,
գիրս քառերնեան հիասարակ։

՝ի Ցռ ողբին, յէջ 246։

գիշերի՝ գողանային զնա։ Որոց այսպէս պա-
տասխանեաց Պետրոս. ունիք զզօրականս, եր-
թայք զգուշացարուք ոպ և գիտէք։ Եւ նոքա եր-
թեալ զգուշացան զերեզմանին. և կնքեցին
զվէմն հանդերձ զօրականօքն *։ Ուստի ամենայն
զկնի այսորիկ պատմէ զմեծախորհուրդ յարու-
թիւնն Քրիստոսի այսպիսի անպատճառ անարուեստ
պարզմտութիւն, զոր միօրինակ սրբազան պատմիչքն
յուսյանեն յամ գրուածս իւրեանց. որով և յայտ-
նապէս երևի հարազատութիւն և ճշմարտութիւն
պատմութեան։

Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսա-
նայր միաշաբաթին, եկն մարիամ մագդալենայի,
և միւս մարիամն՝ տեսանել զգերեզմանն։ Եւ
ահա շարժումն մեծ եղև. զի հրեշտակ Տն
իջեալ յերկնից՝ մատուցեալ՝ի բաց թաւալե-
ցոյց զվէմն՝ի դրանց անտի, և նստէր՝ի վերայ
նորա։ Եւ էր տեսիլ նորա իբրև զփայլակն, և
հանդերձ նորա սպիտակ իբրև զձիւն։ Եւ յահե-
անտի նորա խռովեցան պահապանքն, և եղեն
իբրև զմեռեալս։ Պատասխանի ետ հրեշտակն՝
և ասէ ցկանայսն. մի երկնչիք դուք, գիտեմ
զի զյիս զխաչեալն խնդրէք. չէ՞ սոսա, քանզի

* Մտ. գլ. ԺԷ. 65. 66։

յարեալ որոկէս ասայն. եկայք տեսէք զտեղին՝ ուր կայր։ Եւ վաղվաղակի երթայք ասացէք աշակերտացն նորա՝ թէ յարեաւ. և ահա յառաջանայ քան զձեզ ՝ի գալիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա ասացի ձեզ։ Եւ երեալ վաղվաղակի ՝ի գերեզմանէ անտի ահիւ և խնդութիւն բազմամ՝ լինիցանային պատմել աշակերտացն։ Եւ ահա ուրատահեալ նոցա յն՝ և ասէ. ողջ էք։ և նոքա մատուցեալ կալան զոտս նորա՝ և երկիր պագին նմա։ Յայնժամ ասէ նոցա յն՝ մի երկնչիք, երթայք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն ՝ի գալիլեա, և անդ տեսցեն զիս։ Իբրև նոքա գնային, ահա ոմանք ՝ի զօրականացն եկին ՝ի քաղաքն և պատմեցին քահանայապետիցն զամ՝ որ ինչ եղեն։ Եւ նոքա ժողովեալ հանդերձ ծերովքն խորհուրդ առեալ՝ արծաթ յոյժ եատուն զօրականացն և ասեն. ասացջիք՝ թէթէ աշակերտքն նր եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ մեք ՝ի քուն էաք։ Եւ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա՝ և զձեզ անհոգս արասցուք։ Եւ նոքա առեալ զարծաթն, արարին ոպ՝ ուսանն. և ել համբաւս այս ՝ի հրէից մինչև յայսօր։

։Մաթ. գլ. ԺԸ. 1 — 16։

Այսպէս է պատմութիւն՝ որով սրբազան առետարանիչն Մատթէոս պատմէ զհրաշալի առ-
յարութիւն Քրիստոսի. յայտ է տեսանել ոչ միայն զպատմական բանս առետարանչին. այլ և զներ-
հակ խորհրդածութիւս քահանայապետից և ծերոցն Հրէից։ Ահա քեզ ընթերցող՝ ակներ և յուշանին
երկոքին տարբերութիւնք յարութեան Քրիստոսի. զոր այլազգ՝ ի միմեանց մեզ առանդեցին բարեկամք
և թշնամիք նորին. մինն՝ ի սոյնմէ յուշանէ զյարութիւն լինել Հշմարիտ. և միւսն հակառակ
նորին յուշանէ զայն գոլ սուտ. և՝ ի մէջ այսոցիկ հակառակ բանից պարտ է մեզ հաստատել
զկարծիս Հշմարտութեան. քանզի գետեմք զի ոչ գոյ այլ բան ինչ գրեալ զսմանէ յայլոց պատմչաց։

Զմի ինչ՝ ի պարագայից յարութեան Քրիստոսի
հանձայն ընդունին բարեկամք և թշնամիք նո-
րին. այն թէ՝ զի եկեալ նոցա անդր՝ ոչ կարացին
գտանել զնարմին՝ ի գերեզմանի. քանզի յարու-
ցեալ էր՝ ի մեռելոց. բայց արժան է գիտել
թէ զի՞արդ և որպիսի՞ եղանակաւ եղև յարու-
թիւն։ Լուր իմն հնչեցաւ՝ ի զօրականացն. թէ
աշակերտքն եկեալ գիշերի գողացան զնա՝ մինչ
նոքա՝ ի քուն էին։ Այլ սակայն հարկ է աստանօր
քննել թէ զի՞արդ զօրականքն կարէին ակնա-
ռեալ վկայել զոր ինչ՝ որ պատահեցաւ մինչ

նք թանձր գնալ թմբրեալ կային։ արդարև չէր հնար նց ասել թէ զիարդ կամ որպիսի եղանակաւ և կամ ո՞վ որ զմարմնոն գողացաւ՝ ի գերեզմանէ անտի։ Նա ասանիկ՝ եթէ՝ ի միտ առցուք զանհնարին սաստկութիւն զինուորական օրինադրութեն նախնի Հռովմայեցւոց, իսկոյն տեսցուք զի եթէ ննջեալ էին նոքա իսկապէս՝ անտարակոյս խոստովան լինէին զմեղս զանցառութիւնց։ Քանզի եթէ դէպ լինէր յայնժամ Հռովմէական զօրականի ումեք ննջել՝ ի ժամ պահակեցուն, անտարակոյս պատուհասական մահուամբ դատապարտեալ լինէր յիւրոց մեծաւորաց։ Ոչինչ կարէր յորդորել զպահապանս յօդել զայսպիսի զրոյցս սակս յարութեն, եթէ ոչ էր նախ խոստացեալ նց ծերոյ և քահանայապետին Հրէից առ՝ի աղատս կացուցանել զնս՝ ի դատապարտութենէ և Հոխսայցանել զնս պարգևօք։ ահա՛ քեզ ընթերցող՝ յայտնի ապացոյց մարդասէրս կաշառաբերկուն և հրէական անամօթ ստայօդութեն։

Նա՛ ասանիկ՝ համարեա՛ թէ Հշմարիտ է թանն յօդեալ՝ ի Հրէից անտի։ բայց ինձ ասա՛, զի՞նչ օգուտ աշակերտացն լինէր՝ ի մեռեալ մարմնոյ վարդապետին իւրեանց։ Ո՞չ զիւրեանց և ոչ զայլոց միոյ կարէին նոքա հաւանեցուցա-

նել նովա՝ թէ վարդապետ իւրեանց յարուցեալ է ՝ի մեռելոց։ զորին հակառակն՝ տային նոքա այլոց տեղի տարակուսի սակս յարութեան Քրիստի։ Եւ եթէ գողայեալ էր նոցա զմարմնոյն Քրիստի՝ ուրեմն ընդունայն էին յոյս և ակնկալութիւք փրկութեան նոցա։ և՝ ի խղճէ մտոյ բռնատաւեալ խոստովան լինէին՝ զի փոխանակ փրկիչ գտանելոյ պատրիչ ոմն գտին զնա՝ ի վերջոյ։ Զի՞նչ օգուտ էր նոցա պահել առ իւրեանս և միշտ առաջի աչաց ունել զանշունչ մարմին մի՝ որ զնա՞մ զյոյս և զակնկալութիւն նոցա՝ ի գերեզման հանեալ նանրայոյց։ և անդադար յուշ առնէր նոցա զդառն պատրանս յուսոյ նոցին։ ահա՛ քեզ ընթերցո՛ղ գորձ անկարելի և արտաքոյ կարգի բնութեան։

Ապա ուրեմն դիւրին է մեզ մակաբերել՝ զի զրոյցն վասն գողոն հոչակելոյ զմարմնոյն Քրիստի է այլանդակ և անհեթեթ խարդախութիւն հրէական խորամանկութեան։ Եւ ըստ լուսոյ ողջամիտ բանականութեանն եղրակայուցանեմք՝ զի որ ինչ պատմի՝ ի սրբոյն Մատթէոսէ՝ է ճշմարիտ և արժանահաւատ և անխարդախ։ Ամենեքեան միաբան վկայութիւն խոստովանին՝ թէ արդարև ոչ գտին զմարմինն՝ ի գերեզմանի անդ։ և մեք հաւանական բանիւք ցուցաք՝ ի վերոյ՝ թէ աշա-

կերտքն ոչ ըստ ստայօդութեան Հրէից գողության զայն։ բայց թերևս բնական է ոմանց առնել յանդիման զերկուս հնարաւոր ենթադրութիւս։ այսինքն՝ կամ՝ ի Հրէից և ի Հռոմայեցւոց բարձաւ՝ ի գերեզմանէ անտի մարմինն Քրիստի, և կամ վերստին յարեաւ՝ ի մահուանէ՝ ի կեանս զօրութեամբ Աստուծոյ։ Եթէ մարմինն ոչ էր յարուցեալ՝ ի մեռելոց, այլ անկեալ էր՝ ի ձեռս թշնամեացն քրիստոնէութեան նոքա զնոյնն յայտ յանդիման կայուցանէին իբրև զգործի խայտառակելոյ զաշակերտսն Քրիստի վասն ստուերի և խարդախութեան իւրեանց։ Բայց սակայն ոչ երբէք զմեռեալ մարմինն՝ ի յայտ բերին թշնամիքն Հիսուսի։ Սմին իրի ՝ի վկայելոյ առ տարանին յարուցեալ մարմինն՝ ի գերեզմանէ՝ փոխեցաւ՝ ի կեանս վերստին։ Բայց յայսմանէ չէ պատշաճ զայլ խորհուրդս խորհիլ զյարութեան Քրիստի։

Եւ թէ իրաւի այս այսպէս իցէ, երևիլ Տն մերոյ ի վերայ երկրի զկնի հրաշափառ իւրոյ յարութեան զիրսն՝ ի բաւականին Հիսուսի։ քանզի երևեցաւ նա ոչ միայն երկուց կանանցն եկելոյ՝ ի գերեզման անդր, այլ երկուց աշակերտացն որք երթային յեմմաուս, և աշակերտացն՝ ի մի վայր գումարելոյ՝ ի Ժամանակս Ժամանակս, և ամենայն առաքելոյն արբոյ և հինգ

հարիւր եղբարցն միանգամայն։ Նա սանիկ՝ ոչ միայն նա լուսելեայն երևեցաւ նոցա, այլ և ընդ նոսա խօսեցաւ և ընդ նոսա կերակրեցաւ. զձեռս և զոտս իւր ցոյց եռնոց. և առ՝ ի զտարակոյսն՝ ի մտաց նոցա բառնալոյ՝ ետ նոցա զանձն իւր շօշափել և տեսանել թէ ինքն է Քրիստոս յարուցեալ՝ ի մեռելոց. Բազմիցս երկար խօսակից եղև ընդ նոսա. և՝ ի վախճանի ակն յանդիման ամենեցուն ամբարձաւ վառօք՝ ի վերս յերկինս։

Այսպիսի բացայայտ իրաց Հշմարտութեն պարզամիտն և տգիտագոյնքն՝ ի մարդկանէ կարէին անդամ լինել վերահասու։ Անհնար է զնոցա խաբել զինքեանս յիրսն՝ որոց ինքեանք էին քաջածանօթք. և չէր կարելի նոցա այլ ի այլոյ իմանալ զյարութիւն Քրիստի՝ որ յամ կողմանէ զվիտս նոցա կալեալ ունէր արդեամբք աքանչելեացն։

Զայլ ինն հզօրագոյն ապացոյց յարութեն Քրիստի տեսանեմք յայտնապէս՝ ի վերս նոցին իսկ առաքելոց. յորմէ և արժան է եղբարկայութեանէ զի իսկապէս հաւատային նոքա զՀշմարտութիւն յարութիւնն մերոյ Յիսուսի Քրիստի։

Ամենեցուն իսկ յայտ է, թէ առաքեալքն չունէին զբնական քաջասրտութիւն և զանդրդուելի մտաց։ Յորժամ թշնամիքն քրիստոնէութեան կապեցին զՏէրն մեր՝ ըստ վկայելոյ

սրբազան աւետարանչայն ամենայն աշակերտքն թողին զնա և փախեան։ Պետրոս երթայր զհետ նորա բայագոյն։ և եմուտ ՝ի սրահ մի ՝ի պարտէզ քահանայապետին։ անդանօր սպասաւորքն խարոյկս լուսեալ ջերմուին։ և յորժամ սասային զՊետրոս թէ դու ես մի յաշակերտացն Քրիստոսի ՝ նա բայարձակապէս երիցս զնա ուրացաւ անհնարին երդմամբք։ Ասաի բայայայտ երևի ՝ զի աշակերտքն ոչ մնային ընդ վարդապետին իւրեանց ՝ի սրահ դատաստանի քահանայապետին առ ՝ի նպաստ կամ օգնութի մատուցանել նմա։ և յորժամ ՝ի խաչ բևեռեալին զնա հրեայքն մայրն նորա և սուրբն Յովհաննէս հանդերձ երկու կամ երեք կանամբք միայն իշխեային կանգնել առ պատուանդանաւ խաչի նորա։ ՝ի կարգոյ ամենեքեան նոքա պակուցեալ զարհուրեցան ընդ աղետալի չարչարանս վարդապետին իւրեանց։ զանի հարեալ երկնչէին խոստովանիլ թէ աշակերտք էին Քրիստի և կամ թէ իւիք եղանակաւ զնա ճանաչէին։ և ոչ այսչափ միայն՝ այլ և բոլորովին անզօր էին համբերել ՝ի վտանգն՝ որ կախեալ էր ՝ի վերայ գլխոց նոցա։ Բայց սակայն փութով զկնի յարութեանն նոցա ՝ի մահուանէ՝ զարմանալի ինն փոխուն երևեցան ՝ի վարս նոցա համայնից։ Փոխան

նակ զիւրեանց զառաջին երկչոտ վարս ցուցա-
նելոյ՝ իսկ և իսկ սքանչելի քաջութիւն հաստա-
տեալ զօրացան։ և եղենարք քաջք և անվեհերք
և արիք։ անզուգական արիութիւն քարոզէին Տի-
ոնոյն ինքն Քրիստոս՝ զոր սակաւուք յառաջ թողեալ
լքեալ էին յանհնարին չարչարանս նորին։ և
թէպէտ արհաւիրք խաչելութեան Քրիստոսի տակաւին
նոր երևէին առաջի աչաց նոցա։ և հնար էր
նոցա զնոյն կամ զնոյնանման չարչարանս կրել՝ ի
թշնամեացն Քրիստոսի՝ սակայն անվեհեր վստահութիւն
խոստովանեցան զինքն լինիլ աշակերտս Քրիստոսի
և յայտնապէս ասային Հրէից։ Աբե՛ Ճշմարտիս
գիտասցէ՝ եմ առանն ելի։ զի Հաւատն զնա՝ և օգտեալ
ՅԾ արար։ զայն յո՛ զոր դուն խուզէցէ՛ ի։ Նա
ասանիկ՝ յորժամ թշնամիքն Ճշմարտութիւն կա-
լեալ ածին զնա առաջի դպրաց և երիցանց առ-
՝ի քննել զնա սակս բժշկելոյ զյորովայնի կաղն
՝ի զրան տաճարին՝ նէ՞ զ զնգիտեալ՝ ի սպառ-
նալեաց թշնամեացն՝ յայտնապէս ասային։ Յայտնի
լիցի ամենեցուն ձեզ՝ և ամ՛ ժողովրդեանդ իսրա-
ել։ զի յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ՝ զոր դուք
խաչեցէք՝ զոր ՅԾ յարոյց՝ ի մեռելոց։ նովաս-
սա կայ առաջի ձեր ողջացեալ։ Նա է

՝ Գործք։ Է։ 36։

վէճն անարգեալ՝ ի ձենջ շինողայ, որ եղև գլուխ անկեան. և ջէք այլոյ իւիք փրկուիլ. զի և ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ՝ որով արժան լիցէ կեալ մեզ ։

Եւ դարձեալ յորժամ մեռանցիք աՀեալ զնուա կայոյցին յատենի, և արգելլին զնուա ուստրյանեալ յանունն Ցնի. նորա անարկիւղ եառն պատասխանի։ Հնազանդեալ պարտ է ոչ առեալ էան մարդկան։ Եւ յորժամ սպասաւորք ի շնանին վերատին զնուա կշտամբեալ սպառնալիս դանեցին, նորա զամենայն օր ի տաճարին և առ անին ոչ դադարէին ուսուցանել՝ և աւետարանել զյիսուս։ Եւ զորութիւն բազմաց տային վկայուն առաքելոցն զյարուցեալն ամենայն յերկրի։ *։

Բայց դու ինձ ասա՝ ընթերցող՝ զի՞նչ էր պատճառ այսպիսի յանկարծական և զարմանալի փոփոխութիւն՝ որ պատահեցաւ ի բնաւորութիւն միանգամայն և ի բոլանգակ վարս առաքելոց։ Եթէ Քրիստոս ոչ էր յարուցեալ ի մեռելոց, և մեռեալ մարմին նորա ծնացեալ էր ի ձեռս աշակերտաց նոր, մի՞թէ հնարէր այսմ զարմաց

‡ Գործք, ՟Գ. 10. 11. 12։ * Գործք, Ե, 29. 42. Եւ Գ, 33։

նոցա վառեալ սիրով վարդապետին իւրեանց կամ քաջալերելով խրախուսել զնոսա առ ՝ի քարոզել աշխարհի զվարդապետութիւն մի՝ զոր ինքեանք իւր գիտէին լինիլ սուտ։ Ո՞չ ապաքէն հակառակ որոյն հնար էր այսմ առաւելուլ պէնոէան եղիշոսաթ նոցա ։ ընկճել զհոգիս նոցա։ և շիջուցանել զամ եռանդն նախանձաւորութեան նոցա ։ ո՞չ ապաքէն այս բաւական էր զինեալ զնոսա արտմտութիւն և ատելութիւն ընդդէմ անձին մեոյ՝ որ այսպէս պատիր էր ձևացեալ յաչս նոցա ։ և կեղծեալ պատճառանօք զրկեալ էր զնոսա յամ ցանկալի և ՝ի մեծարգի իրաց այր աշխարհի ։ Արդարև ատելութիւն մեծ արմատանայր ՝ի սիրտս առաքելոցն առ վարդապետն իւրեանց ։ եթէ Քրիստոս ոչ էր իսկապէս յարուցեալ ՝ի մեռելոց ։ Թերևս ոք զարմացի ՝ի հիանալի փոփոխութենէ՝ որ պատահեցաւ ՝ի միտս նոցա զկնի մահուան վարդապետին իւրեանց ։ բայց յայտ է ամենեցուն՝ որոյ ուշադրութիւն իցէն միտք ։ զի նոքա քարոզեցին իրագէտ եղեալ հաստատագոյն զյարութիւն Քրիստոսի ՝ի մահուանէ ։ և զբնական զերկչոտութիւն իւրեանց թողեալ արիութիւն զյարութիւն նորա քարոզեցին։

Թերևս ոք հակառակ ուղղմտութեան զինեալ այլ ընդ այլոց կարծիս ՝ի մէջ բերցէ

տակս յարուցեն Քեզ ասելով. Թէ երբեմն առաքեալքն հաւատային զյարութիւն Քո. բայց ոչ թէ ի զօրութիւն ակնատես վիճակութիւն, այլ յաղագս յուսիւթիւ յաւիտենական մնայ. զի գոլով նոցա յաւիտենական մնօք՝ զառ աչօք տեսիլ ինչ ստեղծեալ ի ջերմն ի երկայնութիւն իւրեանց՝ հանարեցան Հրեայքն մարմին Տն իւրեանց յարուցեալ ի մահուանէ ի կենաս։ Բայց արդարև ոչինչ այնքան հեռի էր ի յաւիտենութիւն մնայ՝ որքան վարք և բնաւորութիւնք արանց այսոցիկ. և յամ գործս քաջասրտութեան իւրեանց էին նոքա միանգամայն անդորր և զուստ և անխռով և անլրդով։ Այս ասանիկ և զայս այլանդակ կարծիս ընդդէմ առաքելոց հերքեալ ի բոց մերժեն բանք նոցին իսկ ուսերիմ Թշնամեաց. որք ոչ երբէք բարուս՝ ի գլուխս նոցա կուտեցին Թէ յաւիտենական էին մեռք նոցա ամենեցուն, այլ զրպարտեցին զնոսա յանցանօք խաբէութեան և դողութեան որ բոլորովին օտար է յաւիտենութիւն մնայ. և ստութիւն հռչակեցին Թէ դողայան նոքա զմարմնին՝ ի գերեզմանէն։ Եւ եթէ անառեղի չլինէր զրպարտուն Թշնամեացն, եթէ իսկապէս գողացեալ էին նոքա զմեռեալ մարմինն և ունէին զայն առաջի աչաց իւրեանց, ի՞նչ հնար էր նոցա յաւիտենական և իբր Թէ խելագարեալ

մաօք (բայց ոչ ոք երբեք եղ նոյա մեղս յա-
փշտակու թեան մատայ) զմեռեալ մարմինն հա-
մարիլ իբրև զմարդ կենդանի • զոր զգալի աչօք
տեսին և ձեռաք շօշափեցին և խօսակից եղին
ընդ նմա ։ Արդարև ոչ երբեք երևեցաւ յաշ-
խարհի այսպիսի օրինակ յափշտակուեաց մատայ ։

Ահա՛ քեզ ընթերցող՝ ակն յանդիմանս հատ-
տաւեցաւ յորոյ Քրիստոսի՝ ի վերայ անդրդողդ հի-
մանդ • յորմէ և իբրև անընդդիմամարտ ապացու-
ցիս մարթ է մեզ եզրակացուցանել զՀամարտուն
ածուն փրկչին մերոյ և զՀամարտուն երկնային
կրօնի նորին • քանզի եթէ ոչ էր նա որդի Աստ՝ ոչ
ինքն զանձնէ քարոզէր լինել՝ Աստ ոչ երբեք զնա
ունէր յարուցանել՝ ի մեռելոց • և անհնար էր
նմա զիշանել՝ ի գործս խաբէուն ։ Բայց քանզի
խակաղէս յարոյց զնա Աստ՝ ի մեռելոց՝ զնոյն
խակ յարութիւն եդ նա իբրև զկնիք հաստատուն
ածութեան՝ զոր որդին ընծայէր անձին • և այս-
պէս Հայրն Աստ բարայայտ և հռչակաւոր լիս
եզանակաւ խոստովանեցաւ զՔո լինիլ որդին
իւր սիրելեալ՝ ընդ որ էր նա հաճեցեալ † ։

Ընթերցող բարի՝ և դու մի՛ ինչ գուշ-
նաքեայ համարեսցիս զայս հայրական վկայութի-

† Մատ • Գ • 17 •

յաղագս Երկնային առաքելոյն փրկչին մերոյ Քրիստոսի. քանզի սովին իսկ վկայութիւնքս իբրև հզօրագոյն ինն ապայուցիւ Քրիստոսի քարոզէր զինքն առաքեալ յԱՅ յերկնից առ՝ի ուսուցանել մարդկան զբանն Աշխարհութեան և փրկել զնոսա՝ ի յաւիտենական կորստենէ։ Քանզի յարժամ նա զգնողն և զվաճառողն՝ ի տաճարէն խարազանաւ արտաքսեաց և հրեայքն՝ ի նմանէ խնդրեցին տեսանել զնշանս ինչ՝ այսինքն զհրաշագործուն, թէ ունի նա իշխանութիւն յԱՅ զայսպիսիս գործել՝ նա արար զայսպիսի պատասխանի. Քակեցէք զտաճարդ զայդ, (զմարմին իւր ակնարկելով) և զերիս աւուրս կանգնեցից զդա։ Իսկ յորժամ յարեաւն՝ ի մեռելոց, յիշեցին աշակերտքն նր, թէ այս է՝ զոր ասայն. և հաւատային գրոյն և բանին՝ զոր ասաց յս։ Նա և նոքին իսկ առաքեալքն առաւել զյարութիւն Քրիստոսի քան թէ զայլ նշանագործութիւնս նր բերէին օրինակ Աշխարհութեան քրիստոնէութեան. յորոյ վերայ և իբրև՝ ի վերայ հաստատելոյ հիմանն զհաւատս իւրեանց հաստատեալ հիմնեցին։

Եւ դու մի՛ ինչ բնաւ զարմանայցես թէ էր՞ը առաքեալքն զյարութիւն Քրիստոսի յաճախակի

† Յովհ. ԺԲ. 19. 22.

յիշատակէին։ քանզի այս փակեալ ունի լուծ
եւ գլխայութիւն հրաշագործութիւն եւ մարգարէութիւն։ Արդարեւ յարութիւն Քրիստոսի անսխալ զանազանեալ զամ գերահրաշ նշանագործութիւնքն Այ՝ զոր վերին տեսչութիւն ժամանակիս ՝ի ժամանակ յայտնեայ ազգի մարդկան։ եւ ոչ այսչափ միայն՝ այլ եւ պարունակի ՝ի նմին լրումն երկրայ նշանաւոր մարգարէութեայ։ իմա դու զվերոյասացեալ մարգարէութիւն փրկչին մերոյ սակս մահուան խաչոյ։ եւ զայն քաջայայտ գուշակութիւն արքային Դաւթի՝ զոր սքն Պետրոս պարզապէս ընծայէ յարութիւն Քրիստոսի։ այսինքն է՝ Զի ոչ թողցես զանձն իմ ՝ի դժոխս ։ եւ ոչ տայցես սրբոյ քում տեսանել զապականութիւն։ *

* Սաղ։ ԺԵ։ 10։ Յաջորդ յարութիւն Քրիստոսի ՝ի գիրս վարդապետին Պաղեայ ։ հատ։ Է։ գլ։ Ն։ էջ 209 ։ եւ ՝ի վերջաբանութիւնն մատենին նորին։ յորում ասելոյն հոգւոյ ֆնանաբչութիւնէ հոգոյդ յարութիւնն Քրիստի՝ դնել անհնար է ոգեղանի՝ ընդերցողաց չընդունելիս՝ ճշմարտութիւնքն նորին։

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Ահաւասիկ սոքա են գլխաւոր ապայոյցք Աշխարհութեան կրօնին քրիստոնէութեան։ Հնար էր զայլ ևս բազում արժանահաւատ վկայութիւնս ի սոսա յաւելուլ, բայց սակայն զոր ինչ վկայեալ կան բանս ասա յիշատակեցաք, ի նոսա սնդա-կազմ հաստատի հիմն բոլանդակ մերոյ հաւա-նարկութեան։

Այլ արդ՝ զամ բանս հաւանարկութեան մերոյ ի մի վայր ժողովեալ հաւաքեսցուք ասա-տանաւ։ Նախ քան զծնանելն Տն մերոյ Քրիստոսի ամ ազգք հեթանոսաց պարանոցաթաղանկեալ կային յողբալի տգիտութեան և յանհնարին ապականութեան վարուց։ ամին իրի մարթ է մեզ խորհել, զի կարի հարկաւոր էր մի յերից անձանց ածային տղրմաձութեան և իւրական միմնորդութեան փրկիչ լինել ազգի մարդկան ի գերութենէ սատանայի։ Մինչ ազգք ամ յարևելս ակնկառոյց սպասէին, թէ մեծազօր և զնաշխարհիկ անձն ոք փոխ-թանակի ունէր երևելի յաշխարհի, քան փրկիչն մեր երևեցաւ յաշխարհի ասա յայնմ խակ ժամանակի՝ յորժամ գալուստն նորա կարի հարկաւոր և փրկաւէթ էր մարդկային ազգի։ Եւ յորժամ շրջիլ սկսաւ նա յաշխարհի՝ քարոզե-

լոլ զվարդապետուն հոգեկեցոյցս՝ ի լուր հա-
զարաւոր անձանց, անզուգական բարելաւութի
վարուց նորա զվիտս լսողաց կալեալ հիացմամբ
ապշեցոյց. գերազանցութի քարոզութեց նորա
վերհագոյն և նախամեծար զնա հանդիսացոյց բան
զայլ զամ վարդապետս բարոյականութե. և ան-
գորրութի և արդարութի և ամբիծ մաքրութի նորա
միանգամայն օտար էին առն յափշտակելոյ մտաց
կամ պատրողի։ Ասեմութի և գերակայութիւն
վարդապետութեց նորա, կատարեալ իմաստութի
և անթերի մաքրութի բարոյական խրատուց նորա
անցյանեն զանցյանեն զբնական կարողութիք անձին
մերոյ ծնեալոյ՝ ի խոնարհագոյն վիճակի և՝ ի հե-
ռաւոր և յամենայն մասին աշխարհի՝ գոլով
նորա զարգացեալ առանց ուսման և առանց
հրահանգութե և առանց լեզուագիտութե և
առանց գրոց ընթերցման. կրօն նոր՝ ի սուղ ինչ
ժամանակի զարմանալի ելագութիք քարոզեալ
տարածեցաւ գոգցեա յլնդ հանուր մասունս արևա-
ելից լոկովք աշխատասիրութիք նորա և ե-
կոտասան անուս անգրագէտ ձկնորսաց՝ զինեալ
ոչյա զանձինս հակառակ զօրութե և իշխանութե
և ուսման և իմաստասիրութե և բռնասեալ
մոլութեց և նախապաշարմանց և աստեղագաշա-
տութեց աշխարհի։ Նա առանիկ՝ և ոչ սակաւ

գյարդ բարեբաղձեցն Քրիստոսի մեծայուցանէ անհնարին տարբերութիւնն՝ որ ի մէջ կրօնի նորա և Մահմետի - զայնպիսի տարբերութիւն մի ասեմ՝ որ հարկաւ եղեալ ի մէջ Հաւատոցն և ստոյ՝ ի մէջ երկնային ուսուցչի և մարդախաբ մոլորեցուցչի։ Եւ դու մի դադարեսցիս ի զարմանալոյ ընդ գերազանցութիւն փրկչին մերոյ։ զոտնաքայլ մի փոխեալ ընդ դաս մարգարէիցն անց և տես՝ թէ զի՞արդ Հնդիւ և մանրազնին նկար տգրուագ յիշատակեցին նոքա զերեւելի պարագայս ծնունդեան և կենաց և շարչարանաց և մահուան և յարութեան նորա՝ զոր հարիւրաւոր ամաց յառաջ քան զծնունդ նորա գուշակեցին մարգարէական հոգւով։ և եմ գուշակութիւնք նոցա Հաւատեալ կատարեցան ի նա և ի նա միայն՝ ցուցանելով զնա աշխարհի իբրև մեսիայ Հրէից և փրկիչ ընդհանուր ազգի մարդկան։ Սակաւիկ մի ևս յառաջ անց և տես՝ թէ զի՞արդ Հաւատոցն կատարեցան պէս սպէս մարգարէութիւնք նորին իսկ Քրիստոսի։ մանաւանդ գուշակութիւն նորա սակս կործանմանն Երուսաղէմի ի Հռովմայեցւոց։ տես և զմտաւ ած զմեծութիւն բազմայզարմանաքանչ հրաշագործութեանցն՝ զոր Քրիստոս կատարեայ ի լոյս տունչեան առաջի հաւատարուորակամատես անձանց։ զորոյ զՀաւատութիւնն

հաստատեալ հաստատելոյն բազմութիւն արժանահատատ վկայից, որք զվկայութիւն իւրեանց հաստատեալ կնքելոյն հեղմամբ արեան իւրեանց։ և ոչ այսչափ միայն՝ այլև զնշանագործութիւն Քրիստոսի խոստովանելոյն և բաղումք՝ ի հնագոյն և յոխերիմ թշնամեայն աւետարանին։ և հուսկ ապա, արժան է քեզ ընդ մտօք արկանել զայն հիացաքանչ և քաջահիմն հրաշս յարութիւն ցն մերոյ Քրիստոսի՝ որ է կնիք և հաստատութիւն երկնային ծագման նորա և ճշմարտային յայտնութեան սրբոյ կրօնի նորա։ Արդ՝ յորժամ զայսոսիկ ամենայն վկայութիւնս՝ ի մի վայր ժողովեալ քննեսցուք, և անսայառ դատողութիւնս մտայ զնոսա՝ ի կշիռ արկցուք, անհնար է մեզ ողջամիտ և անխարդախ մտօք չընդունիլ զՔրիստոսի այսոցիկ վկայութեանց և չտպաւորել՝ ի նեղքս՝ ի սիրտս մեր զազդողական ներգործութիւն նց։ Եթէ այսպիսի կուտակութիւն վկայութեանց չիցէ բաւական հաւանեցուցանել զմիտս բարեսէր հետազօտասէր Քրիստոսի, ուրեմն միանգամայն անհնար է հաստատել ապացոյցս դդիպուած ինչ՝ որ պատահեալ իցէ յառաջին ժամանակս, և զոր զգալի աչօք մերովք չիցէ մեր տեսեալ ընաւին։ Նա՛ ասանիկ՝ և մարթ է անվեհեր վստահութիւն խմաստասիրել՝ զի ոչինչ դիպուած՝ որ յառաջին

ժամանակս պատահեցաւ և զօրէն կրօնին քրիս-
տոնէութեան Հշմարիտ վկայութիւնք մեզ աւանդեցան՝
ի վերջին ժամանակս սուտ կամ իւիք եղանակաւ
երկբայելի դատեցաւ յաչս բանասիրաց։ Եւ ե-
թէ չիցէ Հշմարիտ զոր ասեմս, թշնամիքն հաւա-
տոյ քրիստոնէութեան յառաջ մատիցեն. և վասն
այլ ընդ այլոց առարկութեան՝ եթէ կարեն՝ զիս
յայտնագոյս յանդիմանեսցեն։ Իսկ եթէ անհնար
իցէ այնպիսեաց գլուխս ի վեր ամբառնալ և
յընդդիմանալ բանից մերոց համարձակիլ (իրաւ-
քա՛ջ գիտեմք զի անհնա՛ր է նոցա այսպէս առնել)
ուրեմն պատշա՛հ և իրա՛ւ է մեզ մակաբերել զի
կրօն մի հիմնեալ՝ ի վերայ այսքանեայ հզօրեղ
վկայութեաց է Հշմարիտ միանգամայն և հաստա-
տուն. և պարտ է ամենայն բանականաց՝ որոց
առաջնորդ իցեն ապացոյցք ձեռնարկութեանց
յիրս մանուցանելմեծամեծս՝ ամենայն պատկառա-
նօք և խոնարհութեամբ ընդունիլ զկրօնն Քրիս-
տոսի իբրև զՀշարիտ յայտնութեան յերկնայնոյն Աստ։

Գ Ե Ր Ջ։

LIST OF SUBSCRIBERS.

The Right Rev. Father in God, John Thomas, Bishop of Calcutta, ...	5 copies	25 Rs.
Ditto ditto ditto, on account of the Society for the Promotion of Christian Knowledge, ...	—	300 Rs.
The Venerable Archdeacon Corrie, ..	2	10
Schmid, D. Rev.	1	20
Gisborne, M. Esq.....	2	50
Prinsep, G. A. Esq.	1	20
Dougal, J. Esq.	1	10
Calcutta Christian Tract and Book Society, ...	100	—

ԱՆՈՒԱՆՔ ՍՏՈՐԱԳՐՈՂԱՑ

ՈՐ Ի ԿԱՀԿԱԹԱ՝

Ա

Սրբազանագոյն Կարապետ Աբեղեպիսկոպոս՝ Ասողիկեան վանքին Զուարթնոցու և հոմայի Հայոց էնուկէլոց՝ է Հնդկէս, յետոյ Ց. Ավետիսեանց

6. օրի. ռէլ.

Սրբազանագոյն Պօղոս Եպիսկոպոս (որքոյ էջվիծնի,)	3. 15
Տէր Յովհէր Սարգիսեանոսեան.	1. 5
Տէր Անդրէ Ավագեան՝ Ասոտ Քահանայ	2. 10
Տէր Մարգար որ Կարապետեան՝ է Զուարթնոցի	1. 5
Տէր Աբրահամ Տէր Կարապետեան.	1. 5
Տէր Յոհաննէս Գալոյեանեան.	1. 5
Պէնյ Ա. Աղաբէգեան.	4. 20
Աբեղի Նազարեան	1. 5

Գ

Գէորգ Փ. Քաղրամեան.	2. 10
Գրիգոր Աբգարեան.	1. 5
Գէորգ Ա-ենեան.	1. 5
Գէորգ Մանուկեան.	1. 5
Գրիգոր Յարութիւն Ա-ենեցեան.	1. 5
Գրիգոր Աճառեան.	1. 5
Գրիգոր Ա. Մուրադեանեան.	1. 5

Դ

Գրիգոր Դուրեան Բարձրագոյն . 1 . 5

Է

Էլիա Աղուլեան . 1 . 5

Խ

Խաչիկ Ամուսաբ Գէորգեան . 2 . 10
Խաչիկ Յ . Սարգսեան . 1 . 5
Խաչիկ Յ . Խաչիկեան . 1 . 5
Խաչատուր Ս . Մալխասեան . 1 . 5
Խաչատուր Յ . Խաչատուր . 1 . 5

Կ

Կարապետ Յակոբեան . 1 . 5
Կարապետ Յ . Վարդանեան . 1 . 5
Կարապետ Խաչիկ Նիազեան . 1 . 5
Կարապետ Տ . աբ Յարութիւնեան (Մնասեանց .) } 1 . 5

Ղ

Ղազար Ազարիկեան . 2 . 10
Ղևոնդ Յ . Ասատրեան . 1 . 5
Ղևոնդ Յ . Մնացականեան . 1 . 5

Մ

Մալխաս Սիսակ Մալխասեան . 1 . 5
Մանուկ Նիկողայոսեան . 3 . 15
Մարտիրոս Մնացական Դուրեանց՝ որ 'ի Բուլգարիա } 4 . 20

Պիտի Մանուկ Մելքոնեան · 2 · 15
Մկրտիչ Տէր Անանեան · 1 · 5

Ց

Յարութիւն Աբեղեան · 5 · 25
Յարութիւն Մանուկ Դուրեան · 2 · 10
Ցարութիւն Գալուստեան · 2 · 10
Յովհաննէս Ամիրեանց · 1 · 15
Յարութիւն Խաչիկեան · 2 · 10
Յովհան Մովսէս · 1 · 5
Յովսէփ Յակոբ · 1 · 5
Յարութիւն Ս · Յարութիւն · 1 · 5
Յովանէս Իլինեան · 1 · 20
Յովհաննէս Մարտիրոսեան · 1 · 5
Յովհաննէս Կարապետ · 1 · 5
Յովսէփ Կարապետ · 1 · 5

Պ

Պողոս Ոսկանեան · 1 · 15
Պետրոս Յակոբ Պողոս · 1 · 20
Պետրոս Ց · Սարգսեանց · 2 · 10

Ս

Սարգիս Յովհան · 1 · 5
Սարգիս Ց · Սարգսեան · 2 · 10
Սենեքերիմ Իլիոպ Աբրահամեան · 1 · 5

Վ

Վարդանէս Յարութ Վարդանէս · 1 · 5

Փ

Պիտի Փիլիպպոս Աճառաւոր Դէրսդէնի · 2 · 10

Ի ՍԷՑԴԱՊԱՏ

Սրբոյն Տէր Կարապետ Գրիգորեանի · 1 · 5
Պարանոյ Վարդան Մեծոցեանի Վարդան և Էջմիա · } 3 · 15
Ռուխան Գալստեանի · 1 · 5

Ի ԳՈՒԱԼԷՐ

Սրբոյն Տէր Մարտիրոս · 3 ·
Սպարապետ Յակոբ Գէորգեանի · 4 ·

Ի ԴԱՔԱՑ

Սրբոյն Տէր Դաւթի Մէլքոնեանի · 1 · 15
Պարանոյ Ավետի Տէր Սոնէանեան · 2 · 30
Թորոս Գրիգորեանի · 2 · 30
Խաչիկ Սէլեաղաեանի · 1 · 20
Ղազար և Յովհաննէս Սէլիեան · 2 · 15
Տիկին Մարիամեանամ Յարութիւնեան Մէթոյէլեան · } 1 · 20

Պարոնայր Մինոս Յովսէփ՝ . 2 · 15
Յովհաննէս Սուքիասեան · 1 · 15
Յովհաննէս Մանուկ · 1 · 15
Յարութիւն Գրիգոր Հմայեան · 1 · 10
Յովհաննէս Խաչիկ · 1 · 15

Ի ՌԱՆԳՈՒՆ

Էրէակ՝ Տէր Խաչատուր Յարութիւն · 1 ·
Պէտ՝ Սարգիս Մանուկեան · 6 ·
Գրիգոր Յովհաննէս Հէրպէշի · 2 ·
Թադէոս Խ · Աւետիսեան · 2 ·

Ի ՄԱԴՐԱՍ

Էրէակ՝ Տէր Յոհան Մանուկեան · 1 · 5
Պէտ՝ Աւետիս Յարութ Հէրլուսեան 1 · 5
Բաղդասար Մանուկ Աճառեան · 1 · 5
Եղիսպէ Սէր Սահեան · 3 · 15
Թոմա Պողոսեան · 1 · 5
Մնրտել Զօրաբեան · 3 · 15
Մարտիրոս Թորոսեան · 1 · 5
Յովհաննէս Հասիբեան · 1 · 5
Յարութիւն Կիրակոս · 1 · 10
Ղեւոնդեան Բարամբէկեան · 1 · 5

Պէնդ Պոլսոյ Պէտրոս Ղազարեան.	1 · 5
Պոլսոյ Մելիքսէթեան.	1 · 5
Սէմ և Գրիգոր Սամեան.	1 · 20
Սէդօն Մէրսուրեան.	1 · 5
Սարգիս Տէր Ասատուրեան.	1 · 5

Ի ՊԻՆԱՆԳ

Սբ. Հարիր Տէր Մէրսէհ Տէր Անդրէաս.	1 · 5
Պարոնայ Գէորգ Յարութիւն.	1 · 5
Խալիպարոյ Գալստան.	2 · 20
Կարապետ Աճառեան.	1 · 10
Յովհէթ Մանուկ.	2 · 20
Ոզդանան Մանուկ.	1 · 5
Սէմ Գրիգոր Սէմ.	1 · 10

Ի ՍԻՆԿԱՓՈՒՐ

Սբ. Հարիր Տէր Գրիգոր Տէր Յարութիւն Տէր Աճառեան.	2.
Պարոնայ Գրիգոր և Յեսայի Զաքարիայ.	6.
Սբ. Սարգիս Սարգիսեան	2.
Յովհաննէս Սէդօն.	2.
Կարապետ Փանոս.	2.

024

Ի ԲԹԱՎԻՍ

Պարոնայ Յարութիւն Յակոբեան·	3·
Գէորգ Զօրաբեան·	2·
Ղուկաս Յովհաննէս·	2·
Յակոբ Միրզէ·	2·
Գէորգ Սարգիսեանոսեան·	1·

Ի ՍԱՄԱՐԱՆԳ

Պարոնայ Յովսէփ Յովհաննէս Ամիրեան·	10·
Պողոս Ամիրեան·	4·
Ասէս Մարտիրոս·	2·
Խալիլ Ծարուք Զարիֆ·	1·
Բէհրուզհէմ Թարէս Յարութիւն·	3·
Նաստրէս Գալստան Ասէս·	2·